

Հրատարակվում է  
Հայաստանի Հանրապետության  
պետական կառավարման ակադեմիայի  
գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝  
**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**  
տնտեսագիտության դոկտոր

խմբագրական խորհուրդ՝

**ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

իրավագիտության դոկտոր  
(նախագահ)

**ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

ՀՀ փոխվարչապետ,  
ՀՀ տարածքային կառավարման  
նախարար

**ՎԻԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀՀ նախագահի աշխատակազմի  
ղեկավարի տեղակալ

**ՄԱՆՎԵԼ ԲԱԴԱԼՅԱՆ**

ՀՀ քաղաքացիական ծառայության  
խորհրդի նախագահ

**ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

իրավագիտության դոկտոր

**ՎԱՐԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

իրավագիտության դոկտոր

**ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

իրավագիտության դոկտոր

**ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

տնտեսագիտության դոկտոր

**ԱՂԱՍԻ ՍԱՐԳՍՅԱՆ**

տնտեսագիտության դոկտոր

**ԷՂՈՒՐԴ ՕՐԴՅԱՆ**

տնտեսագիտության դոկտոր

**ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

քաղաքագիտության դոկտոր

**ՀՐԱՆՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ**

հոգեբանական գիտությունների  
դոկտոր

**ԳԱՐԻԿ ՔԵՌՅԱՆ**

քաղաքագիտության դոկտոր

**ԽԱՉԱՏՈՒՐ ԲԵԶԻՐՉՅԱՆ**

կենսաբանական գիտությունների  
թեկնածու  
(պատասխանատու քարտուղար)

«Հանրային կառավարում» գիտական հանդեսն ընդգրկված է Հայաստանի  
Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ՀՀ ԲՈՀ) սահմանած  
դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների և  
դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական  
հրատարակությունների ցուցակում:

«ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»  
Երևան

*Рекомендовано к печати согласно  
решению ученого совета Академии  
государственного управления  
Республики Армения.*

*Published by Decision of Scientific  
Council of the Public  
Administration Academy of the  
Republic of Armenia*

**Главный редактор:**

**Оганес Арутюнян**

Доктор экономических наук

**Editor-in-Chief:**

**Hovhannes Harutyunyan**

Doctor of Sciences (Economics)

**Редакционный совет:**

**Армен Арутюнян**

Доктор юридических наук  
(председатель)

**Армен Геворкян**

Вице – премьер – министр,  
Министр территориального  
управления РА

**Виген Саркисян**

Заместитель руководителя  
аппарата Президента РА

**Манвел Бадалян**

Председатель Совета  
гражданской службы РА

**Гагик Арутюнян**

Доктор юридических наук

**Ваге Степанян**

Доктор юридических наук

**Ашот Хачатрян**

Доктор юридических наук

**Айк Саркисян**

Доктор экономических наук

**Агаси Саркисян**

Доктор экономических наук

**Эдуард Ордян**

Доктор экономических наук

**Мариам Маргарян**

Доктор политических наук

**Грант Аванесян**

Доктор психологических наук

**Гарик Керян**

Доктор политических наук

**Хачатур Безирджян**

Кандидат биологических наук  
(ответственный секретарь)

**Editorial Council:**

**Armen Harutyunyan**

Doctor of Sciences (Law)  
(Chairman)

**Armen Gevorgyan**

Vice Prime Minister,  
Minister of Territorial  
Administration RA

**Vigen Sargsyan**

Deputy Chef of Staff  
President of the RA

**Manvel Badalyan**

President of Civil Service  
Council of the RA

**Vahe Stepanyan**

Doctor of Sciences (Law)

**Gagik Harutyunyan**

Doctor of Sciences (Law)

**Ashot Khachatryan**

Doctor of Sciences (Law)

**Hayk Sargsyan**

Doctor of Sciences (Economics)

**Aghasi Sargsyan**

Doctor of Sciences (Economics)

**Eduard Ordyan**

Doctor of Sciences (Economics)

**Mariam Margaryan**

Doctor of Sciences (Political Sciences)

**Hrant Avanesyan**

Doctor of Sciences (Psychology)

**Garik Keryan**

Doctor of Sciences (Political Sciences)

**Khachatur Bezirjyan**

Doctor of Biology  
(Executive Secretary)

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## Հանրային կառավարում

6

### ՀՈՎՅԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**6-15** *ՎարչաՏարածքային բաժանման Հիմնադրոցերը ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱԿԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ*

### ԱՐՄԵՆ ԹՈՉՈՒՆՅԱՆ

**16-28** *ՔիՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՇՆՈՐՀԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ. ՓԱՍՏԵՐ ԵՎ ԴԱՍԵՐ*

### Վ. Դ. ԲԱԿՈՒՄԵՆԿՈ. Մ. Ա. ԿՈՒՇԵՆԻՐ

**29-38** *«ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱԿԱՐՄԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐԻ*

### ՎԻԼԿ ԵՂԻՊԱՐՅԱՆ

**39-45** *ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՓՈՆԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՄԵԳԱՄԻՏՈՒՄՆԵՐԸ*

## Տնտեսագիտություն (Կառավարում)

46

### ԹԵՐԵՁԱ ԽԵՉՈՅԱՆ

**46-59** *ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. ՄԵԿԱՐՔԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ*

### ԱՌԻԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

**60-68** *ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՀԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՉՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՑԵՐԸ*

### ԱԼԲԵՐՏ ԲԱԲԵՅԱՆ

**69-79** *ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆՄԸ ԴՅ ԱՍԱՆՁՆԱԾ ՈՐՈՇ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ԼՈՒՄԱԲԱՆՈՒՄ*

## Իրավագիտություն

80

### ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**80-95** *«ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ» ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊՒ «ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ».* ԱՄԵՆ ԻՆՉ ՎԵՐԱԴՂՈՒՆՈՒՄ Է ՆՈՒՅՆ ԿԵՏԻՆ (ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՄՅԱՆԱԴՐՈՒԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ)

### ԱՐՓԻՆԵ ՄԵԼԻՔԵԵԿՅԱՆ

**96-103** *ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆԵՐՊԱՇՆԱԿԵՑՄԱՆ ԵՎ ՄՈՏԱՐԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ*

### ՀՈՎԱԵՓ ՀՈՎԱԵՓՅԱՆ

**104-111** *ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ՝ ԸՍՏ ԼԻՍԱԲՈՆԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ*

### ՀՈՒՆԱՆ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ

**112-120** *ՕՐԵՆՔՈՎ ՄՏԵՂԾՎԱԾ ԴԱՏԱՐԱՆԸ ՈՐՊԵՍ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՏԱՐԻ*

### ՀԱՅԿ ՄԻՄՈՆՅԱՆ

**121-132** *ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱԿԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ*

## Քաղաքագիտություն

133

### ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

### ՄԱՄԻԿՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

**133-142** *ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ*

## СОДЕРЖАНИЕ

### Публичное управление 6

---

#### О. АРУТЮНЯН

**6-15** ВОПРОСЫ АДМИНИСТРАТИВНО-ТЕРРИТОРИАЛЬНОГО ДЕЛЕНИЯ В СИСТЕМЕ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

#### АРМЕН ТРЧУНЯН

**16-28** КРАТКАЯ ИСТОРИЯ ПРИСУЖДЕНИЯ УЧЕНЫХ СТЕПЕНЕЙ. ФАКТЫ И УРОКИ

#### В.Д. БАКУМЕНКО,

#### М.А. КУШНИР

**29-38** КАТЕГОРИЯ "МЕСТНАЯ ДЕМОКРАТИЯ" КАК ЭЛЕМЕНТ СУЩНОСТНОЙ СОСТАВЛЯЮЩЕЙ НАУКИ ГОСУДАРСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ

#### В. ЕДИГАРЯН

**39-45** МЕГАТРЕНДЫ ОБЩЕСТВЕННЫХ ТРАНСФОРМАЦИЙ

### Экономика (Управление) 46

---

#### Т. ХЕЧОЯН

**46-59** ЭКОНОМИКА СЧАСТЬЯ: ИНТЕРПРЕТАЦИИ И ПОДХОДЫ

#### С. ТОРОСЯН

**60-68** ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ БЮДЖЕТНЫХ ПРОЦЕССОВ МУНИЦИПАЛЬНЫХ ОРГАНОВ

#### А. БАБАЯН

**69-79** ОБЗОР ВЫПОЛНЕНИЯ НЕКОТОРЫХ ОБЯЗАТЕЛЬСТВ КОТОРЫЕ ПРИНЯЛА АРМЕНИЯ ПРИ ВСТУПЛЕНИИ В ВСЕМИРНУЮ ТОРГОВУЮ ОРГАНИЗАЦИЮ

### Юридические науки 80

---

#### А. АРУТЮНЯН

**80-95** ОТ "СОЦИАЛИСТИЧЕСКОЙ" ДЕМОКРАТИИ К "ПОСТСОВЕТСКОЙ": ВСЕ ВОЗВРАЩАЕТСЯ НА КРУГИ СВОЯ?! (ПРОБЛЕМЫ ПОСТСОВЕТСКОГО КОНСТИТУЦИОНАЛИЗМА)

#### А. МЕЛИКБЕКЯН

**96-103** ПРОЦЕСС ГАРМОНИЗАЦИИ И АПРОКСИМАЦИИ ИНВЕСТИЦИОННОГО ПРАВА В ЕВРОПЕЙСКОМ СОЮЗЕ

#### О. ОВСЕПЧЯН

**104-111** ОСНОВНАЯ ЗАКОНОДАТЕЛЬНАЯ ПРОЦЕДУРА ЕС СОГЛАСНО ЛИССАБОНСКОМУ СОГЛАШЕНИЮ

#### У. ТЕР-ВАРДАНЯН

**112-120** СУД СОЗДАННЫЙ НА ОСНОВЕ ЗАКОНА КАК ОРГАНИЧЕСКОЕ СОСТАВЛЯЮЩЕЕ ПРАВА НА СПРАВЕДЛИВОЕ СУДЕБНОЕ СЛУШАНИЕ

#### А. СИМОНЯН

**121-132** ПОЛНОМОЧИЯ ОРГАНОВ ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

### Политология 133

---

#### М. МАРГАРЯН,

#### М. МАРГАРЯН

**133-142** ИЗМЕРЕНИЕ ПОЛИТИЧЕСКОЙ СТАБИЛЬНОСТИ В ПРОЦЕССЕ АНАЛИЗА ПУБЛИЧНОЙ ПОЛИТИКИ

# CONTENT

## **Public Administration**

**6**

### H. HARUTYUNYAN

- 6-15** ISSUES OF ADMINISTRATIVE TERRITORIAL DIVISION IN THE SYSTEM OF LOCAL SELF GOVERNANCE OF THE REPUBLIC OF ARMENIA

### ARMEN TRCHOUNIAN

- 16-28** SHORT HISTORY OF SCIENTIFIC DEGREES AWARD. FACTS AND CONSEQUENCES

### V.D. BAKUMENKO,

### M.O. KUSHNIR

- 29-38** THE CATEGORY OF "LOCAL DEMOCRACY" AS ELEMENT OF ESSENCE MAKING SCIENCE OF STATE ADMINISTRATION

### V. EDIGARYAN

- 39-45** MEGATRENDS OF PUBLIC TRANSFORMATIONS

## **Economics (Management)**

**46**

### T. KHECHOYAN

- 46-59** HAPPINESS ECONOMICS: INTERPRETATIONS AND APPROACHES

### S. TOROSYAN

- 60-68** MAIN PROBLEMS OF RISING EFFECTIVENESS OF BUDGETING PROCESS OF COMMUNITIES

### A. BABAYAN

- 69-79** THE REVIEW OF PERFORMANCE OF SOME OBLIGATIONS ACCEPTED BY ARMENIA AT THE ACCESSION TO THE WORLD TRADE ORGANISATION

## **Law**

**80**

### A. HARUTYUNYAN

- 80-95** FROM "SOCIALISTIC" TO "POST-SOVIET" DEMOCRACY: EVERYTHING FALLS BACK INTO PLACE?! (PROBLEMS OF POST-SOVIET CONSTITUTIONALISM)

### A. MELIKBEKYAN

- 96-103** THE HARMONIZATION AND APPROXIMATION PROCESS OF THE INVESTMENT LAW IN THE EUROPEAN UNION

### H. HOVSEPYAN

- 104-111** THE MAIN LEGISLATIVE PROCEDURE OF THE EU ACCORDING TO THE TREATY OF LISBON.

### H. TER-VARDANYAN

- 112-120** THE COURT ESTABLISHED BY LAW AS AN ORGANIC PART OF THE RIGHT OF FAIR TRIAL

### H. SIMONYAN

- 121-132** THE COMPETENCE OF TERRITORIAL GOVERNING BODIES OF RA.

## **Political science**

**133**

### M. MARGARYAN

### M. MARGARYAN

- 133-142** MEASURES OF POLITICAL STABILITY IN THE PROCESS OF PUBLIC POLICY ANALYSIS

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր,  
տնտեսագիտության դոկտոր*

**ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Ժամանակակից զարգացած ժողովրդավարական երկրների փորձը ցույց է տալիս, որ պետությունները հասել են բարեկեցության բարձր աստիճանի՝ ինքնուրույն և կենտրոնական կառավարման մակարդակից անկախ տեղական ինքնակառավարման համակարգեր ստեղծելու միջոցով: Անցումային երկրները, ելակետ ունենալով այդ փորձը, կառավարման ապակենտրոնացման և իրական տեղական ինքնակառավարման համակարգի ստեղծման խնդիր են դրել, որը պետական շինարարության բաղկացուցիչ մասն են կազմում: Տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորմանն ազդում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ իշխանությունների քաղաքական կամքը, ապակենտրոնացման ռազմավարության և գործողությունների պլանի առկայությունը, երկրի սոցիալ-տնտեսական վիճակը և այլն: Դրանց մեջ առանձնահատուկ տեղ է գրավում երկրի վարչատարածքային բաժանումը:

Պետության վարչատարածքային բաժանման հիմքի վրա է խարսխվում հանրային կառավարման համակարգը: Գիշտ և օպտիմալ վարչատարածքային բաժանումը կարևոր պայման է կառավարման արդյունավետության բարձրացման համար: Հանրային կառավարումն իրականացվում է երկրի ողջ տարածքում: Դրա ձևերի (կենտրոնական կառավարում և տեղական ինքնակառավարում) կիրառման տարածքների ու շրջանակների, դրանց միջև փոխհարաբերությունների ձևավորումը կարևորագույն և մշտապես ուշադրություն պահանջող խնդիր ու անընդհատ գործընթաց է: Դա հատկապես կարևորվում է անցումային տնտեսություն ունեցող նորանկախ երկրներում, որոնք չունեն այդ ոլորտում ձևավորված ավանդույթներ և գտնվում են ինստիտուցիոնալ ու համակարգային բարեփոխումների դժվարին ճանապարհին:

Տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորման ու զարգացման հիմնական նախադրյալներից մեկն այն վարչատարածքային միավորին ներկայացվող պահանջներն են, որտեղ իրականացվում է տեղական ինքնակառավարումը: Այսինքն՝ վարչատարածքային միավորները պետք է բավարարեն որոշակի պայմանների:

**Ֆիզիկական պայմանները** այն տարածքը և շրջակա միջավայրն են, ուր տեղական ինքնակառավարում է իրականացվում: Այստեղ կարևորվում է համապատասխան հողային ռեսուրսների առկայությունը: Գյուղատնտեսական, քաղաքաշինական և այլ հողային ռեսուրսների չափերից, որակից ու օգտագործման հնարավորություններից է կախված վարչատարածքային միավորի զարգացման հեռանկարը: Կարող են լինել այնպիսի միավորներ, որտեղ գերակշռող է հողային ռեսուրսների այս կամ այն տեսակը: Տվյալ դեպքում կարևոր է այդ միավորի ռազմավարական նպատակի ճիշտ որոշումը, որը կախված է դրա աշխարհագրական դիրքից, բնական ռեսուրսների, տրանսպորտային ուղիների, հանգստի գոտիների առկայությունից և այլն: Հողային, բնական ու նյութական ռեսուրսների ռացիոնալ օգտագործմամբ են պայմանավորված տվյալ միավորի տնտեսության ու ենթակառուցվածքների ձևավորումն ու զարգացումը:

**Տնտեսական ու ֆինանսական պայմանները** այն հնարավորություններն են, որոնք ընձեռվում են տեղական ինքնակառավարման մարմիններին (այսուհետ՝ ՏԻՄ) համայնքի արդյունավետ կառավարումն իրականացնելու և բնակչությանը հանրային ծառայություններ մատուցելու նպատակով: Այդ նպատակին է ծառայում տեղական բյուջեն, որի ձևավորումն ու մեծությունը կախված են շատ գործոններից՝ տեղական բյուջեին ամրագրված հարկային եկամուտների չափերից, տեղական տուրքեր, վճարներ և վարձեր սահմանելու հնարավորությունից, բյուջեի մուտքերն ապահովելու լիազորությունից ու կարողությունից և այլն: Նշված պայմանների դեպքում է, որ ՏԻՄ-երը կարող են ձևավորել համապատասխան բյուջեներ՝ բնակչությանը հանրային ծառայություններ մատուցելու համար: Դրան մեծ չափով կնպաստի նաև տարբեր շուկաների ու շուկայական մեխանիզմների առկայությունը:

**Օրենսդրական ու ինստիտուցիոնալ պայմանները** ապահովում են ՏԻՄ-երի բնականոն գործունեությունն ու զարգացումը, պաշտպանում են նրանց շահերը: Տեղական ինքնակառավարման սահմանադրական և օրենսդրական հիմքերն այն ելակետերն են, որոնց հիման վրա գործում են ՏԻՄ-երը, որոնք երաշխավորում են տեղական ինքնակառավարման համակարգի կայունությունն ու խոչընդոտում կենտրոնական կառավարման կողմից անհարկի միջամտությունները: Հանրային կառավարման ինստիտուցիոնալ շրջանակի ձևավորումն անշրջելի է դարձնում տեղական ինքնակառավարման գոյությունը:

**Մարդկային ռեսուրսների առկայության և իրականացման պայմանները** վերաբերում են ՏԻՄ-երի կարողություններին: Մարդկային ռեսուրսները զարգացում ապահովող ակտիվ տարրերն են: Տվյալ վարչատարածքային միավորման բնակչությունը պետք է ունենա մտավոր ներուժ և այն համապատասխան ուղղությամբ ուղղորդելու հնարավորություն ու կամք: Առաջընթացի ապահովումը հնարավոր է միայն ՏԻՄ-երի կարողությունների գործադրման միջոցով:

Վերը նշված պայմաններն անհրաժեշտ է դիտարկել փոխադարձ կապի և փոխազդեցության միասնության մեջ: Եթե երկրի վարչատարածքային բաժանումը (հատկապես այն վարչատարածքային միավորների ձևավորումը, որտեղ իրականացվում է տեղական ինքնակառավարում) հաշվի առնի այս պայմանները, ինչպես նաև որոշ արտաքին գործոններ (պետության տարածքային քաղաքականություն, տարածաշրջանային շուկաներ և այլն), ապա տեղական ինքնակառավարման համակարգը կունենա զարգացման մեծ հնարավորություն:

Հայաստանի անկախության հռչակումից ի վեր, բնակչության, իշխանությունների և մասնագետների ուշադրության կենտրոնում է գտնվում հանրապետության վարչատարածքային բաժանման հարցը: Այն իր արդիականությունը չի կորցրել նույնիսկ ՀՀ Սահմանադրության ընդունումից և նոր վարչատարածքային բաժանումն իրականացնելուց հետո:

ՀՀ-ում տեղական ինքնակառավարման համակարգի կայացման գնահատումը հիմք է տալիս փաստելու, որ դրա հետագա զարգացման համար անհրաժեշտ է կատարել որոշակի համակարգային փոփոխություններ: Մասնավորապես, վարչատարածքային առկա բաժանումը տեղական ինքնակառավարմանը թույլ չի տալիս ծավալվելու և խոչընդոտում է դրա առաջընթացին: Դա տեղական ինքնակառավարման լիարժեք զարգացման համար անհրաժեշտ պայմաններից մեկն է: Հետևաբար, հաշվի առնելով խնդրի կարևորությունը, փորձենք ներկայացնել ՀՀ-ում վարչատարածքային բարեփոխումների անհրաժեշտությունը, ինչպես նաև վերջինիս հայեցակարգի վերաբերյալ առկա տեսակետները:

Անցած տարիների փորձը ի հայտ բերեց գործող վարչատարածքային բաժանման դրական և բացասական կողմերը: Մեր կարծիքով, դրական կողմերից են.

- նախկին խորհրդային կառավարման համակարգից անցումը պետական մարզային և տեղական ինքնակառավարման համակարգին, տեղական ինքնակառավարման դերի ու նշանակության բարձրացումը որպես պետության ժողովրդավարական ինստիտուտների և տնտեսության կայուն զարգացման հիմք,
- վարչական տարածքների խոշորացումը (մեկ մարզի մեջ ընդգրկված են նախկին 3-4 վարչական շրջաններ), դրա հետ կապված՝ կառավարման ապարատի կրճատումները:

Բացասական կողմերից առանձնացնում ենք.

- տեղական ինքնակառավարման միաստիճան համակարգի ստեղծումը և երկրորդ աստիճանի բացառումը (շրջանների վերացում),
- վարչական տարածքների խոշորացման հետ (մարզերի ստեղծում) մեկտեղ, չապահովվեց ՏԻՄ-երին լիազորությունների լայն շրջանակի տրամադրումը,



- մեծ թվով փոքր, թույլ և բնակչությանը ծառայություններ մատուցելու կարողություններ չունեցող համայնքների ստեղծումը,
- մարզպետարանների լիազորությունների դեկլարատիվ բնույթը, դրանց իրականացման մեխանիզմների, ինչպես նաև տարածքային կառավարման օրենքի բացակայությունը,
- այն հանգամանքը, որ լիարժեք հաշվի չեն առնվել հանրապետության ռելիեֆային խիստ բարդ կառուցվածքը, մակերևույթի կտրտվածությունը, կլիմայական պայմանների բազմազանությունը, գոտիականության առանձնահատկությունները, միասնական տրանսպորտային համակարգի բացակայությունը, դրա հետ կապված՝ որոշ համայնքների հեռավորությունը մարզկենտրոններից, ինչը դժվարություններ է ստեղծում համայնքների և մարզկենտրոնների միջև բնականոն կապ ապահովելու համար, պատմականորեն ձևավորված ենթակառուցվածքների ընդհանրությունը, նախկին շրջանների միջև եղած որոշակի հակասությունները, սովորույթներն ու առանձնահատկությունները:

Հիմնավոր ձևով կարող ենք փաստել, որ 1996 թ. գործողության մեջ դրված վարչատարածքային բաժանումը բացասաբար է անդրադարձել որոշ տարածաշրջանների սոցիալ-տնտեսական վիճակի վրա: Նախկին 37 գյուղական շրջանի այն վարչական կենտրոնները, որոնք դադարել են այդպիսին լինելուց, բոլոր առումներով նահանջ են ապրել: Վարչական կենտրոն լինելու գործոնը վճռական դեր է խաղացել ոչ միայն այդ կենտրոնի, այլև նրա ենթակայության տակ գտնվող բնակավայրերի զարգացման համար: Սակայն սխալ կլիմի կարծել, որ միայն վարչատարածքային բաժանումն է այդ անկման պատճառը: Դա պայմանավորված է նաև անցումային շրջանի առանձնահատկություններով: Նախկին ձևավորված և գործող համակարգից անցումը նոր ձևավորվող տեղական ինքնակառավարման համակարգին, դժվարություններ են ստեղծում արդյունավետ կառավարման համար:

Ներկայումս շրջանառության մեջ են վարչատարածքային նոր բաժանման երկու տարբերակ.

- վերադարձ մինչև 1995 թ. հանրապետությունում գործող տարածքային բաժանման համակարգին (37 վարչական շրջան): Նախկին վարչատարածքային բաժանման կողմնակիցները որևէ նոր հիմնավորումներ և փաստարկներ չեն բերում՝ համարելով այն արդեն կայացած և արդյունավետ գործող համակարգ,
- հաջորդ առաջարկությունն աշխարհագրական գիտությունների դոկտոր, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ պրոֆ. Ս. Մելքունյանի առաջարկն է: Նա գտնում է, որ հանրապետության վարչատարածքային բաժանումն անցման ժամանակաշրջանում պետք է իրականացվի ոչ թե վարչական միա-

վորների խոշորացման, ինչպիսին ներկայիս գործող համակարգն է, այլ համեմատաբար փոքր միավորների ստեղծման ճանապարհով՝ հաշվի առնելով մեր բարդ բնական պայմանների յուրահատկությունները, միասնական տրանսպորտային և առհասարակ ենթակառուցվածքների ընդհանրությունները: Ելնելով վերը նշված պահանջներից՝ առաջարկվում է հանրապետության տարածքը բաժանել 19 մարզերի (այդ թվում Երևան քաղաքը), նախկին 11-ի փոխարեն:

Առաջարկվող երկու տարբերակում էլ առավելություն է տրվում համեմատաբար փոքր միավորների ստեղծմանը, որը, ըստ առաջարկողների, տեղերում ավելի արդյունավետ կդարձնի պետական կառավարումը: Երկու դեպքում էլ շեշտը դրվում է մարզային կամ շրջանային բաժանմանը, որտեղ իրականացվում է պետական կառավարում: Առաջարկվող և ոչ մի տարբերակում չի նշվում տեղական ինքնակառավարման վերաբերյալ որևէ դրույթ: Այդպիսով, տեղական ինքնակառավարման համակարգը դուրս է թողնվում վարչատարածքային բաժանման համատեքստից: Վարչատարածքային բաժանման հիմնախնդիրը լուծելիս շեշտը պետք է դրվի տեղական ինքնակառավարման զարգացմանը, դրա հետագա դերի բարձրացմանը՝ մարզային կառուցվածքներին թողնելով միայն համապետական խնդիրների լուծումը տարածաշրջաններում:

Եվրոպական խարտիան հանդիսանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության բաղկացուցիչ մասը՝ գործում է անմիջականորեն և լուրջ խթան է Հայաստանում տեղական ինքնակառավարման ու վարչատարածքային համակարգի հետագա զարգացման համար: Եվրոպական խարտիայի սկզբունքները զարգացնում են Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման և վարչատարածքային սահմանադրական համակարգը, մասնավորապես՝ համայնքների միավորումներ ու միություններ ձևավորելու իրավունքը.

1. համայնքների իրավունքը՝ իրենց լիազորությունները իրականացնելիս համագործակցել և, օրենքով նախատեսված շրջանակներում, միավորվել մյուս համայնքների հետ՝ համատեղ հետաքրքրություններ կայացնող հարցերի լուծման համար,
2. համայնքների իրավունքը՝ ձևավորել միավորումներ ընդհանուր շահերը և նպատակները պաշտպանելու նպատակով, ինչպես նաև այդ նպատակներով համագործակցել այլ պետությունների համանման կառույցների հետ:

ՀՀ վարչատարածքային համակարգի զարգացումն ամրագրված է նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում: Հենվելով ՀՀ Սահմանադրության և Եվրոպական խարտիայի կողմից ամրագրված հայեցակարգային դրույթների վրա՝ օրենքն իր հերթին խթանում է վարչատարածքային համակարգի հետագա զարգացումը, մասնավորապես, համայնքը՝ որպես մասնավոր և հանրային իրավունքի սուբյեկտ, ճանաչվում է իրավաբանական անձ, որի հիմնադիրն է համայնքի

բնակչությունը, վարչական սահմանները սահմանվում են վարչատարածքային բաժանման մասին օրենքով, կառավարման մարմիններն են՝ ժողովրդի կողմից ընտրված համայնքի ղեկավարը և ավագանին, լիազորություններն ու սեփականությունը սահմանվում է օրենքով, և համայնքն ունի ինքնուրույն բյուջե:

Մեկ այլ հոդվածով օրենքը սահմանում է համայնքի վարչական տարածքը՝ որպես վարչատարածքային միավոր, որը կազմված է մեկ կամ ընդհանուր տարածքով միավորված մի քանի բնակավայրերից: Այս դրույթը հիմք է համայնքների խոշորացման գործընթացի:

Տեղական ինքնակառավարման սկզբունքներից է համայնքների իրավունքը՝ առանձին խնդիրներ համատեղ լուծելու նպատակով, օրենքով սահմանված կարգով, այլ համայնքների հետ միջհամայնքային միավորումներ ձևավորելու հնարավորությունը:

Օրենքում առանձին գլուխ է նվիրված միջհամայնքային միավորումների ձևավորմանը, դրանց մարմիններին և լիազորություններին, մասնավորապես.

- համայնքների որոշակի խնդիրներ համատեղ լուծելու և դրանց իրականացման ծախսերը նվազեցնելու նպատակով՝ համայնքները կարող են իրենց նախաձեռնությամբ ստեղծել միջհամայնքային միավորումներ, որոնք ճանաչվում են որպես իրավաբանական անձ,
- միջհամայնքային խնդիրների իրականացման նպատակով ստեղծվում է միավորման խորհուրդ՝ կազմված համայնքների ղեկավարներից, որոնք իրենց կազմից ընտրում են խորհրդի նախագահ: Խորհուրդը նշանակում է գործադիր ղեկավար:

Բացի վերը նշվածից, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը համայնքներին, որպես իրավաբանական անձերի, հնարավորություն է ընձեռում միավորումներ և միություններ ձևավորել, որով ամբողջանում են վարչատարածքային բարեփոխումների օրենսդրական նախադրյալները:

Օպտիմալ վարչատարածքային համակարգի ձևավորման նախադրյալներից է նաև մարզերում և համայնքներում տիրող իրավիճակը: Մարզպետարանները, չունենալով իրենց վերապահված լիազորությունների իրականացման մեխանիզմներ, փաստացի ներխուժում են տեղական ինքնակառավարման ոլորտ, որով զգալիորեն խոչընդոտում են համայնքների գործունեությանը: Օրենքով՝ համայնքներին, անկախ դրանց մեծությունից և ֆինանսական հնարավորություններից, վերապահված են նույն լիազորությունները, սակայն փոքր համայնքները ի վիճակի չեն իրականացնել իրենց լիազորությունների զգալի մասը, իսկ հասարակության շահերից բխում է, որ քաղաքացիները, անկախ բնակության վայրից, ստանան որակյալ ծառայություններ: Սակայն այս խնդրի արդյունավետ լուծման վրա զգալի ազդեցություն ունեն հետևյալ գործոնները.

1. ՀՀ բոլոր համայնքների փաստացի բյուջեների հանրագումարը կազմում է պետության համախմբված բյուջեի ընդամենը 5-6 տոկոսը,
2. Հայաստանի Հանրապետության մոտ 3 միլիոն բնակչության համար շատ մեծ է համայնքների թիվը (926), որի հետևանքով փոշիանում են առանց այդ էլ սուղ ֆինանսական միջոցները: Դրա հետևանքով փոքր համայնքները (համայնքների մեծ մասը) առկա ֆինանսական հնարավորություններով ի վիճակի չեն կատարել իրենց վերապահված զոնե պարտադիր լիազորությունները, ինչը ուղղակի հակասում է հասարակության կենսական շահերին,
3. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով համայնքներին պետության կողմից պատվիրակվել են մի շարք լիազորություններ, որոնք, սակայն, 1996 թ. առ այսօր ոչ միայն չեն ֆինանսավորվել, այլև չեն մշակվել անգամ դրանց իրականացման կարգերը: Այդ պատճառով՝ պատվիրակված լիազորությունները համայնքների մեծ մասի կողմից չեն իրականացվում կամ էլ խոշոր համայնքների կողմից իրականացվում են մասնակի՝ սեփական սուղ միջոցների հաշվին: Եթե հետագայում նույնիսկ պատվիրակված լիազորությունները ֆինանսավորվեն և մշակվեն դրանց իրականացման կարգերը, ապա համայնքների մեծ մասը ունակ չեն լինի լիարժեք իրականացնելու այդ լիազորությունները՝ տեխնիկական միջոցների և մասնագետների պակասի պատճառով:

Վերը նշված հիմնախնդիրները հաղթահարելու համար նախևառաջ անհրաժեշտ կլինի զգալիորեն ապակենտրոնացնել ֆինանսական ռեսուրսները՝ համայնքների բյուջեների ընդհանուր ծավալը հասցնելով պետական բյուջեի 20-25 տոկոսին: Սակայն առավել կարևոր է ձևավորել օպտիմալ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման վարչատարածքային համակարգ, որը կնպաստի մարզերի ու համայնքների մարդկային և ֆինանսական ռեսուրսների առավել արդյունավետ ու նպատակային օգտագործմանը:

Տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումներն ուղղակի կապված են վարչատարածքային օպտիմալ կառուցվածքի հետ: Վարչատարածքային բարեփոխումների իրականացման արդյունքում անհրաժեշտ է մշակել օրենսդրական փոփոխություններ, որոնք տարածքներում օպտիմալ կառավարման համակարգ ձևավորելու համար կնախատեսեն որոշակի խնդիրների իրականացումը:

Համայնքների և մարզերի խոշորացում.

1. խոշորացնել համայնքները՝ ի հաշիվ միաձուլված կամ հարևանությամբ գտնվող համայնքների, դրանով զգալի կրճատել համայնքների թիվը, կենտրոնացնել ֆինանսական միջոցները, կրճատել վարչական ծախսերը և դրա արդյունքում ավելացնել պարտադիր լիազորությունների ֆինանսավորումը: Մարզերին

օրենքով վերապահել տարածքների զարգացման ծրագրերի մշակման և համայնքների նկատմամբ պետական և իրավական վերահսկողության իրականացումը: Մարզերի խոշորացման արդյունքում կնվազեն տարածքային կառավարման ոլորտի վարչական ծախսերը և մարզպետարանների անհարկի միջամտությունները համայնքների գործերին,

2. առանձնացնել և ինքնուրույն ճանաչել այն համայնքները, որոնք իրենց սեփական ֆինանսական միջոցներով ունակ են լիարժեք կատարելու համայնքներին օրենքով վերապահված պարտադիր լիազորությունների ամբողջ ծավալը (այդպիսիք, մեր կարծիքով, կարող են լինել 20 000 և ավելի բնակիչ ունեցող համայնքները),
3. փոքր համայնքները միավորել միջհամայնքային միավորումներում՝ դրանց վերապահելով այն լիազորությունների կատարումը, որոնք փոքր համայնքները ի վիճակի չեն ինքնուրույն կատարելու,
4. Երևանում, Ելնելով համաքաղաքային խնդիրների իրականացման առանձնահատկություններից, այդ լիազորությունների միասնական իրականացման նպատակով, օրենքով ձևավորել Երևանի թաղային համայնքների միավորում:

Այս հայեցակարգն իր լիարժեք արտացոլումը պետք է գտնի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգն ամբողջացնող օրենսդրությունում, ըստ որի՝ իր ամրագրումը պետք է ստանան հետևյալ դրույթները.

- մարզերի և համայնքների խոշորացման սկզբունքները և մեխանիզմները,
- ինքնուրույն ճանաչված համայնքների ցանկը,
- միջհամայնքային միավորումների կազմում ընդգրկված համայնքները և դրանց վարչական սահմանները,
- միջհամայնքային միավորումների մարմիններն ու դրանց ձևավորման կարգը,
- մարզերի և միջհամայնքային միավորումների լիազորությունները,
- Երևանի թաղային համայնքների միավորման մարմինները,
- Երևանի թաղային համայնքների միավորման լիազորությունները,
- Երևանի թաղային համայնքների միավորման բյուջեի աղբյուրները:

Այս փոփոխություններն իրականացնելուց հետո, Ելնելով բարեփոխումների արդյունքներից, հարկ կլինի վարչատարածքային համակարգի զարգացումներն ամրագրել ՀՀ Սահմանադրությունում: Մասնավորապես, մեր կարծիքով, դա պետք է ներառի հետևյալ ուղղությունները՝

- ընդունել տեղական ինքնակառավարման երկրորդ աստիճանը և միջհամայնքային միավորումները ճանաչել վարչատարածքային միավորներ, որոնց կառավարման մարմիններն ընտրվում են բնակչության կողմից՝ ուղղակի ընտրությունների միջոցով,
  - Երևան քաղաքում ձևավորել երկաստիճան տեղական ինքնակառավարման համակարգ, ըստ որի՝ համաքաղաքային լիազորությունների իրականացման համար պատասխանատու կլինեն ուղղակի ընտրություններով ընտրված քաղաքի ավագանին և քաղաքապետը, իսկ թաղային լիազորությունների համար՝ ներկայումս գործող թաղային ՏԻՄ-երը, նույնպես ուղղակի ընտրությունների միջոցով՝ բացառելով նրանց նշանակումը:
- Հիմք ընդունելով ներկայացված տեսակետները և հաշվի առնելով դրանց առանձին ուղղությունները՝ կարծում ենք մեթոդաբանական փոփոխության կարիք կունենա նաև ֆինանսական համահարթեցման գործող մեխանիզմը:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), 2005 թ.:
2. ՀՀ օրենքը «ՀՀ բյուջետային համակարգի մասին», 1997 թ.:
3. ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», 2002 թ.:
4. *Հարությունյան Հ.*, «Համայնքի բյուջե. Ձևավորման և օգտագործման հիմնահարցեր», Երևան, 2003 թ.:
5. *Հարությունյան Հ.*, «Բյուջետային գործընթացի և ֆինանսական կայունության գնահատման հիմնահարցերը տեղական ինքնակառավարման համակարգում», Երևան, 2007 թ.:
6. *Օրդյան Է.*, «Տեղական ինքնակառավարման հիմունքներ», Երևան, 2000 թ.:
7. *Եղիզարյան Վ.*, «Կառավարման և ինքնակառավարման տեխնոլոգիաներ», Երևան, 2005 թ.:
8. *Хэзгрут С., Кронваль К.*, "Местное самоуправление в Швеции", Традиции и реформы, Фальчепинг 1996 г.
9. *Игнатов В. Г., Бутков В. И.*, Местное самоуправление: российская практика и зарубежный опыт, Учебное пособие, Москва-Ростов-на-Дону, 2007 г.
10. Финансовые механизмы межрегионального выравнивания, *Марченко Г.В., Мачульская О. В.*, Финансы и кредит, 2000 г.

**HOVHANNES HARUTYUNYAN**

*Rector of the Public Administration  
Academy of the Republic of Armenia,  
Doctor of Sciences (Economics)*

**ISSUES OF ADMINISTRATIVE TERRITORIAL DIVISION  
IN THE SYSTEM OF LOCAL SELF GOVERNANCE OF THE  
REPUBLIC OF ARMENIA**

The author touches some issues of existing administrative territorial division of the Republic of Armenia. The experience of the past years has identified that the 1996 administrative-territorial division of the country has affected the social-economic situation in some regions. As a result of administrative-territorial reform, it is necessary to develop legislative amendments, which will suggest a solution to certain issues related to the formation of an optimal local self-governance structure in territories. This article contains a detailed analysis and comparative assessment and mechanisms of regulation of the mentioned problems.

## ԱՐՄԵՆ ԹՈՉՈՒՆՅԱՆ

*ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի նախագահ,  
Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր,  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, կենսաբանական  
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

### ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՄԱՌՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ. ՓԱՍՏԵՐ ԵՎ ԴԱՍԵՐ

*Պատմությունը մեր գործերի զանձարանն է,  
անցյալի վկան, օրինակ ու խրատ ներկայի համար,  
նախազգուշացում՝ գալիքի համար:*

*Սերվանտես (1547-1616)*

Հասարակության և պետության մեջ նոր գիտելիքի ստեղծումը և արդյունավետ օգտագործումը գիտական ներուժի խնդիրն է:

Գիտական ներուժի պահպանումը, վերարտադրումը և նպատակային օգտագործումը, ինչպես նաև կրթության, գիտության և տնտեսության այլ ոլորտներում կադրերով ապահովումը և պետության սոցիալական քաղաքականությունը ենթադրում են գիտական ներուժի որակի գնահատում, որի ձևերից է գիտական աստիճանների շնորհումը:

Գիտական աստիճանների շնորհումը սկսվել է Իտալիայում՝ Բոլոնիայի համալսարանում, XII դարում (1130 թ.) և այնուհետև շարունակվել Ֆրանսիայում՝ Փարիզի 5-րդ համալսարանում (1231 թ.): Ռուսաստանում ատենախոսությունների պաշտպանություններն սկսվել են շատ ավելի ուշ՝ XVIII դարում (1755 թ.) Մոսկվայի կայսրական համալսարանում՝ անմիջապես դրա կազմակերպումից հետո: Սա Ռուսաստանի՝ եվրոպական կրթական և մշակութային տարածք մտնելու ճանապարհն էր:

Այսինքն՝ գիտական աստիճանների շնորհումն ունի երկարատև պատմություն, որի վերլուծությունն ինքնին հետաքրքրություն է ներկայացնում փաստերի ճիշտ ներկայացման և մեկնաբանման տեսակետից, պատմությունից կարևոր դասեր առնելու համար: Հարկ է նշել, որ Ռուսաստանի կայսրությունում ընդունվել են դասախոսական կադրերի պատրաստմանը և գիտական աստիճանների շնորհմանը վերաբերող 230-ից ավել օրենսդրական ակտ, իսկ այնուհետև Խորհրդային Միությունում՝ մոտ 300 նորմատիվ իրավական ակտ, որոնք փաստական լուրջ նյութեր են [1]:

Նման պատմության ուսումնասիրությունը Հայաստանում գրեթե չի կատարվել [2], չնայած որ ԽՍՀՄ-ում և այսօր էլ Ռուսաստանում գրվել են մենագրություններ [3-7], կազմակերպվում են գիտաժողովներ [8] և



այլն: Դա կարևոր է Հայաստանի Հանրապետությունում գիտական և գիտամանակավարժական կադրերի պատրաստման ու գիտական աստիճանների շնորհման օրենսդրության կատարելագործման, այդ բնագավառում պետական քաղաքականության նոր սկզբունքների մշակման և իրականացման համար: Նման ուսումնասիրությունը կարևորվում է ներկա ժամանակում, երբ ստեղծվում է տարբեր երկրների համար ընդհանուր կրթական ու գիտական տարածք, զարգանում է միջազգային համագործակցությունը, աճում է մասնագետների և գիտնականների տեղաշարժը: Միաժամանակ դրվում են բարձրագույն կրթության բարեփոխման, գիտական դպրոցների պահպանման և զարգացման, գիտության գերակա ուղղությունների որոշման ու դրանց առաջնային զարգացման և այլ հիմնահարցեր: Պետք է հաշվի առնվի այն, որ Հայաստանում հանգուցալուծում են պահանջում գիտական ներուժի որակավորման, բայց թերի բարոյական ու նյութական խրախուսման, բարձրագույն կրթության հաստատությունների դասախոսական կազմում գիտական աստիճաններ ունեցողների ցածր թվի, գիտամանակավարժական կադրերի ծերացման և այլ խնդիրները: Հաճախակի էլ անտեղյակությունից կան առանց բնագավառները տիրապետելու գիտական աստիճանների շնորհման հետ են կապում հետբուհական կրթության շատ խնդիրները, որոնք այսօր հատուկ լուծումներ են պահանջում:

**Գիտական աստիճանների շնորհման պատմությունը Ռուսաստանում**

Գիտական աստիճանների շնորհումը, ինչպես արդեն նշվեց, սկսվել է միջնադարում եվրոպական տարբեր երկրներում, այդ թվում՝ Ռուսաստանում: Տարբեր երկրներ անցել են իրենց ճանապարհով և կուտակել պատմական մեծ փորձ, որի համեմատական վերլուծությունը, ըստ էության, նոր է սկիզբ առնում: Սեզանում հատկապես կարևորվում է Ռուսաստանի փորձը, քանի որ Հայաստանը երկար տարիներ եղել է Ռուսական կայսրության, այնուհետև Խորհրդային Միության կազմում, իսկ ներկայիս Հայաստանի Հանրապետությունը ժառանգել է կրթական ու գիտական այդ համակարգը և Ռուսաստանի հետ է սերտորեն զարգացնում իր համագործակցությունը:

Այսպես, տարբեր աստիճաններ հայցելու ատենախոսությունների պաշտպանությունների փորձից ելնելով, դեռևս 1791 թ. Ռուսաստանի կայսրուհի Եկատերինա 2-րդի հրամանագրով [9] Մոսկվայի համալսարանին տրվեց բժշկագիտության դոկտորի գիտական աստիճան շնորհելու իրավունք: Այնուհետև 1802-1803 թթ. Ռուսաստանի ժողովրդական լուսավորության նախարարության ստեղծմամբ համալսարանների համընդհանուր կանոնադրություններով սկսվեց տարբերակված գիտական աստիճանների շնորհում, այդ թվում՝ գիտության թեկնածուի և գիտության դոկտորի՝ սահմանելով միասնական չափանիշներ [9-11]: Այդպիսի միասնական մոտեցում չկար ոչ մի եվրոպական երկրում: Նշենք, որ մեր օրերում տարբեր երկրների կրթական և գիտա-

կան ընդհանուր տարածքների ստեղծումը նախատեսում է միասնական սկզբունքների մշակում ու կիրառում:

Ներմուծվեց նաև գիտության մագիստրոսի աստիճան, որին հաջորդում էր դոկտորի աստիճանը: Նշենք, որ մագիստրոսի աստիճանի ներմուծումը տարբեր համալսարաններում կատարվեց որոշակի փորձից հետո, երբ 1747 թ. Ելիզավետա կայսրուհու հրամանագրով Սանկտ Պետերբուրգում ստեղծվեց գիտությունների և գեղարվեստի կայսրական ակադեմիան:

1819 թ. ընդունվեց և հետագայում (1837, 1844 և 1864 թթ.) լրամշակվեց գիտական աստիճանաշնորհման հատուկ կանոնակարգը [10-11], որով բոլոր գիտական աստիճանների շնորհման համար սահմանվեց ընդհանուր գործընթաց՝ հիմնված ատենախոսությունների պաշտպանության վրա, որի արդյունքը որոշվում էր բաց քվեարկությամբ: Ընդ որում՝ գիտական աստիճան շնորհվում էր որոշակի մասնագիտությամբ, բայց դրանց ցանկում բացակայում էին մանկավարժությունը, հոգեբանությունը և սոցիոլոգիան: Հատուկ կարգավորվում էին փորձարկումների (քննությունների) ժամկետները և անցկացման կարգը, դրանց ծրագրերը և քննական առաջադրանքները, հանձնաժողովների կազմերը, գնահատականների ցանկը և գնահատման մեթոդիկան, քննությունների ձևերը, վերահանձման հնարավորությունները և այլն [10-11]: Բացի դրանցից նշվում էին թեմայի ընտրության և հաստատման կարգը, արդյունքների ներկայացման ժամկետները, քննարկման գործընթացը և այլն:

Ատենախոսությունների պաշտպանությունը և գիտական աստիճանի առկայությունն անձին տալիս էր դասախոսական աշխատանքի, իսկ պետական ծառայության անցնելիս՝ համապատասխան դասի շնորհման իրավունք [10-11]: Գիտության դոկտորի գիտական աստիճանը հիմք էր պատվավոր քաղաքացու կոչման արժանանալու համար, իսկ մագիստրոսի աստիճան ունեցողները կարող էին անցնել քաղաքացիական ծառայության, զբաղեցնել նաև դասախոսի պաշտոն:

1884 թ. վերացվեց գիտության թեկնածուի գիտական աստիճանը:

Սակայն շուտով համալսարաններում հայտնաբերվեցին խախտումներ և 1816-1817 թթ. Ռուսաստանի կայսր Ալեքսանդր 1-ի հրամանագրերով առանձին գիտնականներ զրկվեցին դոկտորի գիտական աստիճանից և ազատվեցին պրոֆեսորի պաշտոնից, իսկ, օրինակ, Դորպատի համալսարանի ղեկավարները հեռացվեցին աշխատանքից [2,9]: Այդպիսի խախտումներից էին դոկտորի գիտական աստիճանի շնորհումն առանց մագիստրոսի աստիճանի առկայության, որակավորման քննության ընթացքում տրված հարցերի սահմանվածից պակաս քանակը, ատենախոսության հրապարակային պաշտպանության կայացած կամ ներկայացված չլինելը:

1918 թ. Ռուսաստանում ժողկոմխորհի որոշմամբ վերացվեցին գիտական աստիճանները [4]: Դրանք վերականգնվեցին գիտության թեկնածուի և գիտության դոկտորի աստիճանների ձևով միայն ԽՍՀՄ

Կենտրոնացված 19.09.1932թ. որոշմամբ համամիութենական բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՅ) ստեղծումով ու 1934թ. դրա առաջին կազմի հաստատումով ակադեմիկոս Գ.Կրժիժանովսկու նախագահությամբ [1]: Այդ նույն թվականին գիտության դոկտորի գիտական աստիճան ստացան Ի.Վ.Կուրչատովը, Մ.Պ.Լավրենտևը, Լ.Դ.Լանդաուն, Կ.Ի.Սկրյաբինը, Ա.Ն. Տուպոլևը և շատ ուրիշներ:

1937 թ. և հետագայում ԽՍՀՄ ժողովրդի որոշումներով հստակեցված որակավորման չափանիշներին համապատասխան [4] ծավալվեց գիտական աստիճանների շնորհումը: Արդեն 1973-1976 թթ. տարեկան հաստատվում էին մոտ 30 հազար թեկնածուական և մոտ 3 հազար դոկտորական աստիճաններ, մերժվում էին թեկնածուական աշխատանքների մոտ 1 % և դոկտորական աշխատանքների մոտ 6 %-ը [12]: 1973 թ. ընդունվեց գիտական և գիտամանկավարժական կադրերի ատեստավորման հետագա կատարելագործման միջոցների մասին որոշում, որով ԲՈՅ-ը վերակազմավորվեց որպես ԽՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր պետական կառավարման մարմին: ԲՈՅ-ի նախագահ նշանակվեց պրոֆ. Վ. Կիրիլով-Ուզրյունովը: Տարիների ընթացքում մշակվեցին գիտական աստիճանների շնորհման նոր ընթացակարգեր և հստակեցվեց ԲՈՅ-ի գործառույթը: Ստեղծվեցին ԲՈՅ-ի մասնագիտական խորհուրդներ. 1979 թ. գործում էին 3195 խորհուրդներ [12]: ԲՈՅ-ի կարգավիճակի բարձրացումից և պահանջների խստացումից հետո արդեն 1977-1978 թթ. տարեկան հաստատվում էին մոտ 20 հազար թեկնածուական և մոտ 1,7 հազար դոկտորական աստիճաններ, մերժվում էին թեկնածուական աշխատանքների մոտ 6 % և դոկտորական աշխատանքների մոտ 16 %-ը [12]:

ԽՍՀՄ փլուզումից հետո բազմիցս քննարկվեց գիտական աստիճանների շնորհման հայեցակարգը, որով նախատեսվում էր Ռուսաստանի Դաշնության նախագահին առընթեր բարձրագույն որակավորման կոմիտեի ստեղծում, գիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհում որոշակի ժամկետով, որից հետո դոկտորական ատենախոսություն չպաշտպանելու դեպքում այն որակագրվում էր և այլն [5]: Այդպիսի առաջարկությունները չընդունվեցին: Նորաստեղծ անկախ պետություններում երկրների նախագահներին կամ կառավարություններին առընթեր ստեղծվեցին ատեստավորման պետական մարմիններ, իսկ հետագայում Բելառուսում և Ադրբեջանում բարձրացվեցին նրանց կարգավիճակները:

Ռուսաստանում կառավարության 07.08.1998 թ. որոշմամբ ստեղծվեց ՌԴ ԲՈՅ-ը [1]: Ռուսաստանի ԲՈՅ-ը հաստատվում է կառավարության կողմից և նրա նախագահը ի պաշտոնե Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի փոխնախագահն է: ԲՈՅ-ի նախագահ նշանակվեց ակադեմիկոս Գ. Մեսյացը: 30.01.2002 թ. ՌԴ կառավարության որոշմամբ ընդունվել և 12.08.2003 թ. ու 20.04.2006 թ. որոշումներով լրամշակվել է գիտական աստիճանների շնորհման կանոնակարգը [13]: Դա ավելի լայն իրավասություն է տալիս գիտնական-մասնագետ-

ներին և մեծացնում ատենախոսական խորհուրդների պատասխանատվությունը: Հատուկ ուշադրություն է դարձվում հայցորդներին ներկայացվող պահանջներին և ատեստավորման գործընթացում հրապակայնության ընդարձակմանը: Ներկայումս Ռուսաստանում գործող համակարգում շնորհվում են երկու՝ գիտության թեկնածուի և գիտության դոկտորի գիտական աստիճաններ: Ընդ որում՝ գիտության դոկտորի գիտական աստիճանը, ինչպես և նախկինում, շնորհում է ՌԴ ԲՈՅ-ը:

Աստիճանաշնորհման ընդհանուր չափանիշներից են ատենախոսություններին ներկայացվող պահանջների համատեղելիությունը բուլոր մասնագիտություններով և գիտությունների բնագավառներով, նրանց պաշտպանությունների անցկացման հրապարակայնությունը և հանրայնությունը, ատենախոսության հիմնական գիտական արդյունքների հրատարակումը, գիտական աստիճաններ հայցողների ընդհանուր գիտական և մասնագիտական պատրաստվածության մակարդակը, ատենախոսությունների փորձաքննության իրավասությունը, անաչառությունը և անկախությունը [14]:

ԲՈՅ-ի գործունեությունն ապահովում է կրթության և գիտության ոլորտում վերահսկողության Դաշնային ծառայությունը. դա խստացրել է վերահսկողությունը: 2005-2006թթ. տարեկան հաստատվել են մոտ 30 հազար թեկնածուական և մոտ 3,3 հազար դոկտորական աստիճաններ [13]: Ինչպես և տարիներ առաջ, հիմա էլ հայտնաբերվում են տարբեր խախտումներ, որոնց արդյունքներով աշխատանքից հեռացվել են նույնիսկ բուհերի ղեկավարներ:

Մագիստրոսի աստիճանը ներմուծվեց 1993 թ. ոչ թե գիտական, այլ կրթական աստիճանի ձևով:

#### **Գիտական աստիճանների շնորհման պատմությունը Խորհրդային Հայաստանում**

Մինչև 1917 թ. Հայաստանում ընդհանուր կրթություն ստացած մեր հայրենակիցները հայցել են գիտական աստիճաններ Ռուսաստանի կայսրությունում, Գերմանիայում, Ֆրանսիայում և այլ պետություններում: Նրանցից 40-ն արժանացել են բնագիտության, բժշկագիտության, արևելյան լեզուների, իրավունքի, փիլիսոփայության, տնտեսագիտության և այլ բնագավառներում գիտական տիտղոսների [15]: Կարելի է հիշատակել լեզվաբան Մ. Աբեղյանին, քիմիկոս Հ. Աբելյանին, պատմաբաններ Ն. Ադոնցին, Ա. Հովհաննիսյանին, բժշկագետներ Վ. Արծրունուն, Ա. Հակոբյանին, մանկավարժ Տ. Ռազմաճյանին, ռազմական բժիշկ Ս. Քալանթարյանին և ուրիշների:

1935 թ. Խորհրդային Հայաստանում սկսվեցին ատենախոսությունների պաշտպանությունները: 1935-1975 թթ. պաշտպանվեցին 6 հազարից ավելի ատենախոսություններ [16]: Դոկտորական ատենախոսություն պաշտպանած առաջին հայ գիտնականներից էին բժիշկներ Գ. Մեղնիկյանն ու Բ. Ֆանարջյանը, թեկնածուական՝ կաթի և կաթնամթերքների տեխնոլոգ Զ. Դիլանյանը: Ատենախոսությունների 21 %-ը ներկայացնում էին բժշկական, 14 %-ը՝ կենսաբանական, 10 %-ը՝ գյու-

դատնտեսական, 10 %-ը՝ տեխնիկական, 9 %-ը՝ բանասիրական, 7 %-ը՝ պատմական գիտությունները: 1973-1975 թթ. ատեստավորման բնագավառում ԽՍՀՄ-ում կատարված բարեփոխումներից հետո, երբ գիտական աստիճաններն սկսեցին շնորհվել ԲՈՅ-ի մասնագիտական խորհուրդներում ատենախոսությունների պաշտպանության արդյունքում, շարունակվեց ատեստավորման գործընթացը: Հետագա տարիներին (1976-1992 թթ.) պաշտպանվեցին մոտ 3 հազար ատենախոսություններ [17], որոնցից 22 %-ը կազմում էին ֆիզիկամաթեմատիկական, 15 %-ը՝ կենսաբանական, 11 %-ը՝ քիմիական, 9,3 %-ը՝ բժշկական, 9,1 %-ը՝ տնտեսագիտական, 8,1 %-ը՝ տեխնիկական, 6,1 %-ը պատմական, 5,6 %-ը՝ գյուղատնտեսական, 4 %-ը՝ փիլիսոփայական գիտությունները: Այս թվերի համեմատումից կարելի է փաստել 1976-1992թթ. տարբեր գիտությունների միջև համամասնությունների փոփոխությունը, ֆիզիկամաթեմատիկական ուղղությունների զարգացումը: Ձևավորվեցին և զարգացան գիտական դպրոցներ:

Անհրաժեշտ է նշել, որ այդ տարիներին Հայաստանի գիտնականների զգալի թվաքանակն այս կամ այն գիտական աստիճան հայցելու համար ատենախոսություններ էին պաշտպանում Հայաստանից դուրս՝ Մոսկվայի, Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ), Կիևի, Թբիլիսիի և այլ քաղաքների գիտական կենտրոններում:

Այստեղ տեղին է նշել ատեստավորման ոլորտում այն մոտեցումները, որոնք հետագայում համարվեցին անընդունելի և մերժվեցին: Դա, մասնավորապես, 1918-1932 թթ. Ռուսաստանում և ԽՍՀՄ-ում որակավորման միասնական համակարգի լուծարումն էր [1], երբ դադարեցվեց գիտական աստիճանաշնորհումը: Դրանից հետո՝ 1960-1974 թթ., նորանուծություն էր գիտական աստիճանների շնորհման իրավասությունը բուհերի և գիտական կազմակերպությունների գիտական (ոչ մասնագիտական) խորհուրդներին տրամադրելը:

**Բարձրագույն որակավորման համակարգի ստեղծումը և գիտական աստիճանների շնորհումը Հայաստանի Հանրապետությունում** 1992-1993 թթ. ՀՀ-ում արդեն գործում էին 62 մասնագիտական խորհուրդ՝ գիտությունների գրեթե բոլոր բնագավառներով [2]:

Գիտական ներուժով և գիտական դպրոցներով Հայաստանի Հանրապետությունն իր գոյության առաջին իսկ տարիներից հիմնադրեց բարձրագույն որակավորման ինքնուրույն համակարգ: Հայաստանի Հանրապետության կառավարության 17.05.1993 թ. թիվ 241 որոշմամբ կառավարությանն առընթեր ստեղծվեց գիտական որակավորման հանրապետական մարմին՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովը (ԲՈՅ): ԲՈՅ-ի նախագահ նշանակվեց Ա. Գրիգորյանը: Ձևավորվեց համակարգ, որի գործունեության ոլորտները, գիտական աստիճանների և գիտական կոչումների շնորհումն ու ԲՈՅ-ի գործառույթն անրագրվեցին 26.12.2000 թ. վավերացված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում [18]: Իհարկե, նման համա-


կարգը ստեղծվեց պատմական փորձը հաշվի առնելով՝ որակավորման գործընթացում պահպանելով և զարգացնելով ավանդույթները, ինչպես նաև վերլուծելով եվրոպական երկրների, հատկապես արևելաեվրոպական և հետխորհրդային երկրների փորձը և դրանցում ընթացող բարեփոխումները. դա ներկայացվել է նախորդ հոդվածում [19]:

Առկա օբյեկտիվ դժվարությունները և առանձնահատկությունները (մի շարք մասնագիտություններով գիտության դոկտորների բացակայությունը կամ ոչ բավարար թվաքանակը, տվյալ մասնագիտությամբ մասնագիտական խորհուրդների եզակիությունը (մենաշնորհը), որպես առաջատար հանդես եկող հիմնարկների փոքր քանակը, գիտական հրատարակությունների մեծ քանակը, որոնք դեռևս չեն համապատասխանում միջազգային չափանիշներին, գիտատեղեկատվական դաշտի անկատարությունը, գիտական և գիտատեխնիկական գործունեության, այդ թվում՝ գիտափորձաքննական աշխատանքների ֆինանսավորման փոքր ծավալները և այլն) պահանջում են կարգավորում՝ ԲՈՅ-ի միջոցով: Սակայն հետագայում, հակառակ մյուս երկրներում ատեստավորման պետական մարմինների կարգավիճակի, 2002 թ. ԲՈՅ-ը տեղափոխվեց ԳՂ կրթության և գիտության նախարարության աշխատակազմ. պատասխանատվության մեծացման ճանապարհին սահմանափակելով նրա իրավասությունները նորմատիվ ակտերի ընդունման, պետական կառավարման մարմինների հետ համագործակցության ուղղությամբ, ինչպես նաև միջազգային կապերի զարգացման ոլորտում: 2007թ. նաև սահմանվեց բարեփոխումների ծրագրի մշակում պետական մի մարմնի կողմից, որը չի զբաղվում աստիճանաշնորհմամբ և չի էլ կարող տիրապետել բնագավառի վիճակին ու խնդիրներին. նման փորձ չկա որևէ երկրում:

Այսպես, ԳՂ-ում շնորհվում են երկու՝ գիտության թեկնածուի և գիտության դոկտորի գիտական աստիճաններ:

Ի տարբերություն ԽՍՀՄ-ում և ներկայումս Ռուսաստանում գործող համակարգից, նոր համակարգում սահմանվեց, որ մասնագետ-գիտնականներն են (մասնագիտական խորհուրդ) շնորհում գիտական աստիճան, դա հաստատվում և վկայագրով ամրագրվում է ԲՈՅ-ի կողմից (**տե՛ս գծապատկերը**). գործընթացի բոլոր փուլերում կարևորվում է մասնագետների կողմից փորձաքննությունը:

Պարզ է, որ մասնագիտական խորհուրդները չունեն ինքուրույն իրավաբանական կարգավիճակ և նրանց որոշումները պետք է հաստատվեն և վավերացվեն փաստաթղթով: Սա կարևոր է, քանի որ հենց գիտական աստիճանի վավերացումը, օրինակ՝ «Վիկիպեդիա» ազատ հանրագիտարանի [20] համաձայն, պետք է կատարվի գիտական աստիճան շնորհող դպրոցից անկախ կառույցի կողմից:



**Գծապատկեր. Գիտական աստիճանների շնորհման գործընթացը**

ԲՈՀ-ի ստեղծումից հետո մշակվեցին կանոնակարգող փաստաթղթեր՝ բարձրագույն որակավորման համակարգի լիարժեք գործունեության համար: Դրանցից է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ը [21] որակավորման չափանիշներով, որը հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 08.08.1997 թ. որոշմամբ՝ մի քանի տարվա ընթացքում լուրջ փորձարկման և մոտ 80 բուհում և գիտական կազմակերպություններում բազմակողմանի քննարկման արդյունքում: Ըստ այդ կանոնակարգի, գիտական աստիճանը շնորհվում է ատենախոսության պաշտպանությամբ. սա ընդհանուր է գրեթե բոլոր երկրներում: Սեր օրերում գիտության շատ բնագավառներում հետազոտություններն իրականացվում են գիտական խմբերում համատեղ և ատենախոսության ձևով դրանց ներկայացման և նրանում ձևակերպված հիմնական

դրույթների և եզրակացությունների միջոցով է որակավորվում գիտնականի մասնագիտական ձևավորումն ու հասունացումը:

Իսկ ատենախոսությունը հեղինակի գիտական հետազոտությունների հիման վրա կազմված աշխատություն է, որին ներկայացվող հիմնական պահանջներ են՝ գիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում կամ նոր խնդրի առաջադրում կամ կիրառական կարևոր խնդրի լուծումն ապահովող գիտականորեն հիմնավորված տեխնիկական, տնտեսական, տեխնոլոգիական մշակում, իսկ գիտության դոկտորի՝ էական նվաճում գիտության տվյալ բնագավառում կամ գիտատեխնիկական առաջընթացին նպաստող գիտականորեն հիմնավորված տեխնիկական, տնտեսական, տեխնոլոգիական լուծում: Այսինքն, ատենախոսությունն առաջին հերթին արժևորվում է իր բովանդակությամբ. բացի դրանից բնականաբար այն պետք է բավարարի նաև որոշակի ընդհանուր պահանջների:

Այդ կանոնակարգով գիտական աստիճանաշնորհման ոլորտում սահմանվել է կրկնակի պատասխանատվություն. որոշակի փուլերում **(տես գծապատկերը)** բուհերի և գիտական կազմակերպությունների մեջ է, իսկ այլ փուլերում՝ ԲՈՅ-ինն է: Միաժամանակ, ընդլայնելով բուհերի և այլ կազմակերպությունների իրավասությունները, սահմանափակվել են մասնագիտական խորհուրդների ղեկավարների նշանակման և ազատման, նրանց կազմերի ընտրության, գիտական ղեկավարների նշանակման հարցերում ԲՈՅ-ի իրավասությունները:

Ինչպես վերոնշյալ, այնպես էլ մասնագիտական խորհրդի աշխատանքի [22] կանոնակարգերով սահմանված է հստակ ընթացակարգ, որը համապատասխանում է ատեստավորման ոլորտում ձևավորված սկզբունքներին և կանոններին:

Ընդունվել են նաև գիտական աստիճանաշնորհման անվանացանկերը, ատենախոսության թեմայի հաստատման ու որակավորման (թեկնածուական) քննությունների կարգերը, սահմանվել ընդունելի գիտական հրատարակությունների և այլ պահանջներ:

Ընդ որում, աստիճանաշնորհման մասնագիտությունների ներկայիս անվանացանկը վերջին տարիներին (2006-2009 թթ.) լրամշակվել է՝ արդիականացման, կոնկրետ մասնագիտություններով գիտական ներուժի վերլուծության և աստիճանաշնորհման ապահովման, մասնագիտությունների խմբավորման ու կրճատման, ինչպես նաև նորերի ներմուծման միտումով: Որակավորման քննությունների ցանկում նոր է համակարգչից օգտվելու հիմունքներից ստուգարքը:

1993-2008 թթ. գիտական աստիճաններ են շնորհվել մոտ 5 հազար գիտնականների, որոնցից 16,4 %-ը տնտեսագիտությունից, 14,3 %-ը՝ տեխնիկական, 14,1 %-ը՝ բժշկական, 10,4 %-ը՝ ֆիզիկամաթեմատիկական, 9,4 %-ը՝ բանասիրական, 8,4 %-ը՝ կենսաբանական, 5,8 %-ը՝ պատմական, 4,6 %-ը՝ մանկավարժական գիտություններից: Այս տվյալները վկայում են գիտական դպրոցների պահպանման և միաժա-



մանակ նոր, հատկապես փոփոխվող տնտեսությանը համապատասխան ուղղությունների հիմնադրման և զարգացման մասին:

**Պատմության դասեր:** Փաստերի համառոտ վերլուծությունը հանգեցնում է այն եզրակացության, որ Ռուսաստանում գիտական աստիճանների շնորհման համակարգը, ձևավորվելով մոտ 2,5 դար առաջ, իր մեջ ներառել է որակավորման ձևեր, սկզբունքներ և չափանիշներ, որոնք այսօր էլ կիրառվում են: Առաջնորդվելով արգելքների և արհեստածին խոչընդոտների վերացման, փաստաթղթերի քանակի նվազման, բովանդակային չափանիշների և պահանջների հստակեցման ուղղված բազմաթիվ բարեփոխումների սկզբունքով՝ այն գործող համակարգ է գիտական ներուժի պահպանման և զարգացման համար:

ՀՀ-ում հիմնադրված համակարգն իր մեջ ներառում է երկրների զգալի մասում և կրթական ու գիտական ընդհանուր տարածքներում գործող ձևեր, սակայն նոր սկզբունքներով և չափանիշներով:

Ներկա ժամանակում գիտական աստիճանաշնորհման օրենսդրությունը կարգավորող լինելով հանդերձ՝ պետք է մասնագետ - գիտնականներին վերապահի պատասխանատվություն գիտության որակի նկատմամբ, իսկ պետական մարմնին՝ ԲՈՂ-ին տա գործընթացի կարգավորման և վերահսկման ու անկախ որոշումներ ընդունելու հստակ իրավասություններ, այդ թվում՝ մասնագիտական խորհուրդների ղեկավարների նշանակման ու ազատման, դրանց կազմերի ընտրության, գիտական ղեկավարների և պաշտոնական ընդդիմախոսների պատասխանատվության ապահովման ուղղությամբ:

Միաժամանակ, գործող օրենսդրությունը միասնական չէ, ինչը չի նպաստում համակարգի արդյունավետ գործունեությանը, և գիտական աստիճանաշնորհման ընդհանուր կանոնակարգի ընդունումը կարող է բարձրացնել համակարգի արդյունավետությունը:

Պետք է փաստել որակավորման համակարգի դերը գիտական ներուժի որակի ապահովման հարցում, որում համագործակցված մոտեցումները դեռևս բացակայում են: Դա վերաբերում է որակավորման չափանիշներին և գիտական ու գիտատեխնիկական գործունեության գնահատմանը: Իսկ գիտական աշխատանքի գնահատման համար չկա գիտելիքների դասակարգում, երբ տեսական ու կիրառական գիտելիքները պետք է գնահատվեն կոնկրետ և տարբերակված չափանիշներով: Չկա գիտական հոդվածների՝ որպես գիտական աշխատանքի արդյունքի հաշվառման և գնահատման համակարգ: Այդպիսի մոտեցում մշակված է գիտական հետազոտության և փորձարարական նախագծման (մշակումների) ոլորտի համար (Ֆրասկատիի ձեռնարկ) [23], որը կարող է օգտակար լինել Հայաստանում կիրառման համար:

Երբ գիտական աշխատանքի պատվերը տրվում է և ստացված արդյունքները գնահատվում են առանց չափանիշների, դրանց ստացումը և գնահատումը չպետք է պայմանավորվի կամ սկսվի ու ավարտվի որակավորման աշխատանքներով՝ առենախոսություններով: Գիտական աշխատանքի գնահատման հստակ և անաչառ չափանիշների

բացակայության պայմաններում ատենախոսությունների գնահատումը չի կարող լինել բացարձակ: Անհրաժեշտ են նաև նոր ցուցանիշներ: Բացի այս հիմնահարցից, կարելի է առաջարկել մշակելու գիտական դպրոցների պահպանման ու զարգացման, ինչպես նաև երիտասարդ գիտնականների և գիտության դոկտորների աջակցման պետական ծրագրեր, որոնք հիմնվեն գիտական աշխատանքի գնահատման հստակ և նոր համակարգի վրա: Նրանք ևս կօգնեն արժևորել գիտական ներուժը և այն նպատակաուղղել երկրի խնդիրների լուծմանը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Неволин В.Н.**, *Актуальные вопросы государственной системы аттестации научных и научно-педагогических работников на современном этапе*. М. Изд-во “ВК”, 2004. 138 с.
2. **Թռչունյան Ա.**, *Բարձրագույն գիտական որակավորման արդի վիճակը և զարգացման միտումները*: Երևան, 2004, 60 էջ:
3. **Галкин К.Т.**, *Высшее образование и подготовка научных кадров в СССР*. М.: Сов. наука, 1958.
4. **Лебин В.Д.**, *Подбор, подготовка и аттестация научных кадров в СССР. Вопросы истории и правового регулирования*. М.: Наука. 1966. 288 с.
5. **Аристер Н.И.**, *Экономика и организация научной аттестации*. С-Петербург. Изд-во С.-Петербургского университета экономики и финансов. 1993.109 с.
6. **Иванов А.Е.**, *Ученые степени в Российской Империи. XVIII в.-1917г.* М.: Ин-т Росс. Истории.1994-1999.
7. **Кинелев В.Г.**, *Высшее образование в России: очерк истории до 1917г.* М.: НИИ высш.образов., 1995. 185 с.
8. **Неволин В.Н.**, Доклад. В кн.: *Подготовка научных и научно-педагогических кадров и присуждение ученых степеней в России и Западной Европе: теория, история, опыт и тенденции развития*. Пятигорск, Изд-во “Технолог. университет”, 2003, с. 5-23.
9. **Корсаков Е.А.**, *Становление и развитие законодательства в сфере подготовки научно-педагогических кадров в Российской Империи*. В кн. *Материалы международной научно-практической конференции “Подготовка научных и научно-педагогических кадров и присуждение ученых степеней в России и Западной Европе: теория, история, опыт и тенденции развития”*. Пятигорск, “Технол. Ун-т”, 2003. 120,124-125.
10. **Якушев А.Н.**, *Итоги исследований развития законодательства и его реализации в сфере присуждения ученых степеней в Российской*

Империи. В кн.: Подготовка научных и научно-педагогических кадров и присуждение ученых степеней в России и Западной Европе: теория, история, опыт и тенденции развития. Пятигорск, Изд-во "Технолог. университет", 2003, с. 256-278.

11. **Якушев А.Н.**, Проблемы качества государственной подготовки и аттестации научных кадров в условиях инновационного развития экономики Российской Федерации и их решение. В кн.: Подготовка научных кадров высшей квалификации в условиях инновационного развития экономики. Региональные, межрегиональные и международные аспекты. Материалы Межд. научно-практ. конф., Под ред. И.В.Войтова. Минск, БелИСА, 2007, 85-89.

12. Материалы о работе ВАК СССР по реализации решений XXV съезда КПСС и постановления ЦК КПСС и Совета Министров СССР "О мерах по дальнейшему совершенствованию аттестации научных и научно-педагогических кадров". М. 1979, 22 с.

13. **Шамхалов Ф.И.**, Состояние и проблемы аттестации научных и научно-педагогических кадров высшей квалификации в Российской Федерации. Материалы 8-ой конф. Межд. ассоциации гос. органов аттестации научн. и научн.-пед. кадров.- Астана, 2007, 156-159.

14. Ատեստավորման պետական մարմինների միջազգային կոնֆերանսի որոշում (2008թ.): [www.boh.am/inter.php](http://www.boh.am/inter.php).

15. **Փաշայան Ա.**, Տիտղոսակիր հայեր XV-XIX դարեր: Եր. 2001, 299 էջ:

16. Հայաստանում պաշտպանած ատենախոսությունների սեղմագրերի մատենագիտություն. Գ. 1 (1935-1975 թթ.)- Եր. Հայաստանի ազգ. գրապալատ. 2003. 464 էջ:

17. Հայաստանում պաշտպանած ատենախոսությունների սեղմագրերի մատենագիտություն. Գ. 2 (1976-1992 թթ.)- Եր. Հայաստանի ազգ. գրապալատ. 2008. 256 էջ:

18. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, Եր., 2000, ք. 33 (131), էջ 7-20:

19. **Թռչունյան Ա.**, Բոլոնիայի գործընթացը և հետբուհական կրթության ու գիտական որակավորման խնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Հանրային կառավարում, 2006, N 2, 6-14:

20. <http://en.wikipedia.org/wiki/Doctorate>

21. ՀՀ պաշտոնական տեղեկագիր, Եր., 1997, ք. 20, էջ 65-70:

22. ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի տեղեկագիր. Եր., 2008, ք. 14, էջ 26-43.

23. Գիտական և տեխնոլոգիական ներուժ և արդյունավետություն.- Եր., AEPLAC. 2007, 247 էջ:

**ARMEN TRCHOUNIAN**

*Chairman of the Supreme Certifying  
Commission of the Republic of Armenia,  
Professor of Yerevan State University,  
Corresponding Member of the National  
Academy of Sciences of Armenia,  
D. Sc. in Biology, Professor*

**SHORT HISTORY OF SCIENTIFIC DEGREES AWARD.  
FACTS AND CONSEQUENCES**

A short history of scientific degrees award was given focusing on the historical facts in Russia started from the 18<sup>th</sup> century up to nowadays including those in Soviet Union beginning from 1935 up to 1993 and in Armenia established and adopted novel two level system from 1993 as well. Consequences have to be clarified with law and official regulations, with general and unified criteria implementing research expertise and some formal instructions and with state (governmental) authority body clear and strong responsibilities

**БАКУМЕНКО В.Д.**

*проректор по научной работе  
Академии муниципального управления  
(г. Киев, Украина)*

*доктор наук по государственному управлению,  
профессор*

**КУШНИР М.А.**

*заместитель руководителя Центра нормопроектного  
обеспечения деятельности Президента Украины  
Национального института стратегических исследований  
(г. Киев, Украина)*

*кандидат наук по государственному управлению*

### **ПОНЯТИЕ "МЕСТНАЯ ДЕМОКРАТИЯ" КАК ЭЛЕМЕНТ СУЩНОСТНОЙ СОСТАВЛЯЮЩЕЙ НАУКИ ГОСУДАРСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ**

Понятийный аппарат любой науки является базисом ее формирования, существования и развития. В этой логически увязанной цепочке всегда существует высокая вероятность появления новых процессов и явлений, иначе говоря – понятий, которые будут нуждаться в своем терминологическом определении. К числу таких понятий входит понятие "местная демократия".

В последнее время в словарный запас специалистов, которые занимаются проблемами демократических преобразований в государственном управлении, входит понятие "местная демократия".

Это понятие является достаточно употребляемым в отечественных научно-практических кругах. Однако в ни одном из них не дано определение понятия "местная демократия". Отдельные авторы используют его в качестве составляющего элемента местного самоуправления [7; 8], другие – отождествляют местное самоуправление и местную демократию [2; 6], третьи имеют ввиду общее развитие государства в контексте глобализационных процессов [5].

Следует отметить тот факт, что в Украине при Институте демократии имени Пылыпа Орлыка в 2006 году создан даже Центр местной демократии с целью инициации и активному содействию системному реформированию "всех звеньев местного самоуправления ради перестройки местной демократии в Украине по стандартам развитых демократических стран" [4].

Основываясь на философском подходе, как общенаучной методологической основе, отмечаем, что «понятие» является формой мышления, отображающей существенные свойства, связи и отношения предметов и явлений [1, с. 1049]. Понятие не только выделяет общее, но и расчленяет предметы, их качества и отношения, классифицируя последние в соответствии с их разновидностями. Слово или словосочетание, что призвано точно определить понятие и его соотношение с другими понятиями в пределах специальной сферы является термином [1, с. 1444].

С точки зрения системного обеспечения понятийного аппарата науки государственного управления, целесообразным является рассмотрение понятия «местная демократия» в контексте ряда политико-правовых инструментариев как национального, так и международного значения.

Совет Европы уделяет первоочередное внимание значению роли демократии на местном и региональном уровнях. С целью реального обеспечения этого вопроса в 1994 году был создан Конгресс местных и региональных властей Европы (далее по тексту – КМРВЕ) как консультативный орган, который заменил собой Постоянную Конференцию местных и региональных властей Европы. В пределах своих уставных заданий КМРВЕ разрабатывает рекомендации Совету Министров и парламентской Ассамблее Совета Европы по всем аспектам местной и региональной политики.

В основе деятельности КМРВЕ лежит принятая в 1985 году Европейская хартия местного самоуправления (далее по тексту – Хартия местного самоуправления). Этот документ определяет руководящие принципы местной демократии и служит моделью для проведения законодательных реформ в странах, которые развивают демократию.

Лишь в 2003 году КМРВЕ было принято семь решений относительно развития местной демократии ряда стран-

членов Европейского Союза, и тех, которые стремятся в него войти [15; 17-22]. Подобные решения принимались этим органом и в последующие годы [23; 24; 25].

В контексте нашего исследования вполне целесообразным представляется освещение позиции официальных институций Европейского Союза относительно тематики местной демократии.

Истинная демократия невозможна без демократии на местном уровне. Этот базовый принцип Совета Европы нашел свое отображение во многих областях деятельности этого органа, в частности:

1. В Белой книге о европейском управлении, утвержденной Европейской Комиссией 25 июля 2001 года, определено многоуровневую организацию демократического управления – *глобальная, европейская, национальная, региональная и местная* [13, с. 10];

2. Белая книга, о которой говорится выше, была в целом одобрена КМВРЕ [14];

3. Проекты местного уровня, которые проводятся под эгидой КМВРЕ, способствуют превращению местной демократии в крепкий фундамент развития для стран Центральной и Восточной Европы. В свое время на Балканах была развернута сеть "посольств местной демократии", призванных возродить общественную жизнь на местах. В 1998 году они были переименованы в агентства местной демократии. Осуществляя местные проекты – например, возобновление поврежденных систем водосохранения – они способствуют возрождению физической среды человеческого существования, укреплению доверия между разными группами населения. В 2001 году была создана Ассоциация агентств местной демократии, как неправительственная европейская организация, созданная для поддержки активной общественности и партисипативной демократии во всех областях местного управления [12].

4. Сам Совет Европы, положив начало с 1989 года ряду программ содействия развития и укрепления стабильности в условиях демократии, предусмотрел среди них программу ЛОДЕ (LODE) как специальный инструмент, направленный на укрепление демократии на местах ради поощрения развития эффективной демократии на местном уровне [9].

5. КМВРЕ, определяясь со своей позицией относительно роли местного самоуправления в будущем Конституционном договоре ЕС, принял ее в Резолюции 154 (2003) с соответствующим названием. Кроме общей позиции касательно необходимости усиления в Основном договоре Евросоюза акцентов относительно важности значения местной и региональной демократии в этой геополитической институции (п.п. 9, 16), было отмечено, что Конституционный договор следует дополнить четким указанием на то, что Союз уважает национальную, региональную и местную самобытность государств-членов, в связи с их принципами внутренней организации, а также культурное, языковое и территориальное разнообразие (п. 16 и.) [18].

Развивая на просторах Европы концепцию местной демократии, КМВРЕ в 2007 году на 15-й Европейской конференции министров, ответственных за местное и региональное развитие (октябрь 2007 года, Валенсия), внедрил проект "Европейская неделя местной демократии" [11].

Это ежегодное европейское событие, охватывающее одновременно национальные и местные мероприятия, которые организуются органами власти всех государств-членов и способствуют идеи демократического участия на местном уровне. Датой проведения таких мероприятий является неделя, которая включает 15 октября, то есть ту дату, когда была принята и открыта для подписания Хартия местного самоуправления (1985 год).

Указанная инициатива имеет несколько целей: расширить понимание европейских граждан о том, как местные органы власти действуют ради информирования этих граждан об их возможностях относительно участия в принятии решения на местном уровне и, как результат, привлечь их внимание к тому, каков критический уровень их непосредственной причастности к местным делам. Этот еженедельник служит также механизмом для повышения осознания важности значения местным чиновничеством участия граждан в демократических процессах на местах. К тому же эта инициатива призвана подчеркивать, что местная демократия – один из общих компонентов для строительства демократической Европы и должна опираться на лучшие достижения искусства управления [11].



С другой стороны, развитие местной демократии как основы демократического государства должно стать инструментом общеевропейской интеграции к демократическим принципам реализации гражданами Европы их неотъемлемого права на участие в решении вопросов местного значения.

Относительно практического проведения Недели местной демократии, в европейских странах проводятся такие мероприятия:

- местные органы исполнительной власти открывают свои учреждения для граждан на протяжении одного/нескольких дней, позволяя таким образом жителям ознакомиться с непосредственной работой этих органов;

- организовываются коммуникативные мероприятия в нескольких социальных группах (население в целом, молодежь, люди преклонных лет и т.д.) по разным вопросам местного значения. При этом речь может идти также о разных художественных фестивалях (детских, народных промыслов, и тому подобное);

- предоставление местными органами власти информации о возможности участия граждан в осуществлении разных процессов местного развития (презентации, круглые столы, общественные слушания как встречи с депутатами местных советов, руководителями и другими официальными лицами для обсуждения вопросов местного развития). При этом проведение ознакомления с деятельностью и планами органов местного самоуправления возможно в развлекательной форме (игры, конкурсы и т.п.). Особое внимание в таких мероприятиях уделяется привлечению молодежи, с целью формирования у нее чувства причастности к общественной жизни, создание для нее возможности самой принимать участие в жизни общества и, следовательно, стать полноценной частью этого общества.

Отечественное законодательное поле вполне органично приняло понятие "местная демократия", воплотив его в Указе Президента Украины "О Европейской неделе местной демократии" [10].

Этим документом было положено начало проведения в Украине Европейской недели местной демократии, которая также проходит ежегодно в неделю, включающую 15 октября.

Учитывая обоснования принятия этого документа, которые определены в его преамбуле, существенными обстоятельствами в смысле нашего исследования есть то, что:

1) отмеченный акт Президента Украины был принят по случаю 10-й годовщины ратификации Украиной именно Европейской хартии местного самоуправления;

2) его принятие было обусловлено приоритетным курсом Украины на европейскую интеграцию с признанием развития местного самоуправления в государстве одной из неотъемлемых составляющих этого курса;

3) в указанном документе определена поддержка инициативы КМВРЕ, о которой было сказано выше.

Иначе говоря, Украина четко выразила свое желание стать активным партнером в реализации такой политической инициативы Совета Европы как "Европейская неделя местной демократии", направленной на повышение участия граждан в общественно-политической жизни на местном уровне.

Во исполнение вышеуказанного решения Президента Украины уже два года подряд в государстве осуществляются широкомасштабные мероприятия по реализации Европейской недели местной демократии (лишь в 2007 году их было проведено в свыше 1000 общинах по всем регионам Украины) [3]. Кроме того, Советом Европы для проведения Европейской недели местной демократии в 2008 году были избраны 4 города-пилота, в числе которых, наряду с Мадридом, Брюсселем и Варной, была и Одесса (Украина).

Однако практические работники отмечают необходимость приведения понятия «местная демократия» к общему знаменателю, поскольку в настоящее время оно разными силами (особенно политическими) трактуется неодинаково. В то же время это понятие должно быть выписано на уровне закона [6].

Поэтому, учитывая вышеизложенное, можем констатировать, что под понятием «местная демократия» следует вести речь о демократичном местном самоуправлении, когда идет речь о государствах, которые заботятся процессами децентрализации власти и в которых существуют (реально действуют) институты местного самоуправления и гражданского общества. Введение этого термина в науку государственного управления и в практику государственной жизни в качестве

определенного законодательного понятия будут свидетельствовать о практических шагах строительства мощного и демократического местного самоуправления.

Суммируя вышеизложенное, следует отметить, что понятие "местная демократия" в контексте науки "государственное управление" (в частности, ее украинской составляющей) до сих пор не нашло своего надлежащего отображения. Необходимость соответствующего терминологического оформления этого понятия обуславливается также потребностями законодательной деятельности и практической активности органов публичной власти, что требует надлежащих разработок (как научных, так и практических).

## ЛИТЕРАТУРА

1. Великий тлумачний словник української мови (з дод. і допов.) / Уклад. і голов. ред. **В. Т. Бусел**. – К. ; Ірпінь : ВТФ «Перун», 2005. – 1728 с.

2. **Власенко О. В.**, Місцева демократія: практичні кроки чи імітація руху? // Територіальна організація влади. Вісник Центральної виборчої комісії. – К. : № 2 (12), 2008. – с. 20-21.

3. Из выступления Министра регионального развития и строительства Украины **В.С. Куйбиды** на пленарной сессии Конгресса местных и региональных властей Совета Европы (Страсбург, 28 мая 2008 г.) [Электронный ресурс] - <https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=20080528-speech-kuybida&Language=lanRussian&Ver=original&Site=COE&BackColorInternet=DBDCF2&BackColorIntranet=FDC864&BackColorLogged=FDC864>.

4. Институт демократии имени Пилипа Орлика [Электронный ресурс] / - <http://www.cld.org.ua/>.

5. **Куйбіда В. С., Куйбіда М. С., Бабінова О. О.**, Місцеве самоврядування України в контексті розвитку місцевої демократії. Монографія. – Хмельницький : Вид-во ХУУП, 2008. – 468 с.

6. Місцева демократія в Україні: яка вона? Із матеріалів "круглого столу" Сумського обласної державної адміністрації (15 жовтня 2008 р.) - [http://state-gov.sumy.ua/2008/10/15/msceva\\_demokratja\\_v\\_ukran\\_jaka\\_vona.html](http://state-gov.sumy.ua/2008/10/15/msceva_demokratja_v_ukran_jaka_vona.html).

7. **Музиченко Г.В.**, Основні компоненти місцевої демократії в сучасній Україні // Труды Одесского политическогo университета. – 2002. - Вып 1 (17). – с. 1-3.

8. **Рубцов В. П.**, Особливості розвитку місцевої демократії на початку другого десятиліття незалежності України // Сучасні проблеми місцевого самоврядування в контексті адміністративної реформи та регіональної політики. - К. : Логос, 2001. - с. 131-141.

9. Совет Европы в Центральной и Восточной Европе: программы содействия развитию и укреплению стабильности в условиях демократии [Электронный ресурс] - <http://www.coe.ru/15zagl.htm>.
10. Указ Президента України від 27 вересня 2007 р. № 922/2007 "Про Європейський тиждень місцевої демократії" [Электронный ресурс] - <http://zakon.rada.gov.ua>.
11. About the European Local Democracy Week [Электронный ресурс] — [http://www.coe.int/T/congress/demoweeek/content/default\\_en.asp](http://www.coe.int/T/congress/demoweeek/content/default_en.asp).
12. Association of the Local Democracy Agencies [Электронный ресурс] - [http://alda-europe.eu/alda/front\\_content.php?idcat=3](http://alda-europe.eu/alda/front_content.php?idcat=3).
13. European Governance. A White Paper. Commission of the European Communities. Brussels, 25.07.2001 [Электронный ресурс] - [http://eur-lex.europa.eu/LexUriServ/site/en/com/2001/com2001\\_0428en01.pdf](http://eur-lex.europa.eu/LexUriServ/site/en/com/2001/com2001_0428en01.pdf).
14. Opinion 16 (2002) on the White Paper of the European Commission on European Governance [Электронный ресурс] - [https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=OPI\(2002\)016&Language=lanEnglish&Ver=original&Site=COE&BackColorInternet=DBDCF2&BackColorIntranet=FDC864&BackColorLogged=FDC864](https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=OPI(2002)016&Language=lanEnglish&Ver=original&Site=COE&BackColorInternet=DBDCF2&BackColorIntranet=FDC864&BackColorLogged=FDC864).
15. Recommendation 128 (2003) on the revised European Charter on the Participation of Young People in Local and Regional Life [Электронный ресурс] - <https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=39661&Site=Congress&BackColorInternet=e0cee1&BackColorIntranet=e0cee1&BackColorLogged=FFC679>.
16. Recommendation 192 (2006) on local and regional elections in Ukraine (observed on 26 March 2006) [Электронный ресурс] - <https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=1000157&Site=Congress&BackColorInternet=e0cee1&BackColorIntranet=e0cee1&BackColorLogged=FFC679>.
17. Resolution 151 (2003) on local and regional democracy in Azerbaijan [Электронный ресурс] – [https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=RES\(2003\)151&Language=lanEnglish&Ver=original&Site=Congress&BackColorInternet=e0cee1&BackColorIntranet=e0cee1&BackColorLogged=FFC679](https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=RES(2003)151&Language=lanEnglish&Ver=original&Site=Congress&BackColorInternet=e0cee1&BackColorIntranet=e0cee1&BackColorLogged=FFC679).
18. Resolution 154 (2003) on the place of local and regional self-government in the future Constitutional Treaty of the European Union [Электронный ресурс] - [https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=RES\(2003\)154&Language=lanEnglish&Ver=original&Site=Congress&BackColorInternet=e0cee1&BackColorIntranet=e0cee1&BackColorLogged=FFC679](https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=RES(2003)154&Language=lanEnglish&Ver=original&Site=Congress&BackColorInternet=e0cee1&BackColorIntranet=e0cee1&BackColorLogged=FFC679).
19. Resolution 156 (2003) on local democracy in Belgium [Электронный ресурс] - [https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=RES\(2003\)156&Language=lanEnglish&Ver=original&Site=Congress&BackColorInternet=e0cee1&BackColorIntranet=e0cee1&BackColorLogged=FFC679](https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=RES(2003)156&Language=lanEnglish&Ver=original&Site=Congress&BackColorInternet=e0cee1&BackColorIntranet=e0cee1&BackColorLogged=FFC679).
20. Resolution 167 (2003) on local democracy in Armenia [Электронный ресурс] - [https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=RES\(2003\)167&Language=lanEnglish&Ver=original&Site=Congress&BackColorInternet=e0cee1&BackColorIntranet=e0cee1&BackColorLogged=FFC679](https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=RES(2003)167&Language=lanEnglish&Ver=original&Site=Congress&BackColorInternet=e0cee1&BackColorIntranet=e0cee1&BackColorLogged=FFC679).

21. Resolution 165 (2003) on NGOs and local and regional democracy [Электронный ресурс] - [https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=RES\(2003\)165&Language=lanEnglish&Ver=original&Site=Congress&BackColorInternet=e0cee1&BackColorIntranet=e0cee1&BackColorLogged=FFC679](https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=RES(2003)165&Language=lanEnglish&Ver=original&Site=Congress&BackColorInternet=e0cee1&BackColorIntranet=e0cee1&BackColorLogged=FFC679).
22. Resolution 168 (2003) on regional democracy in Norway [Электронный ресурс] - [https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=RES\(2003\)168&Language=lanEnglish&Ver=original&Site=Congress&BackColorInternet=e0cee1&BackColorIntranet=e0cee1&BackColorLogged=FFC679](https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=RES(2003)168&Language=lanEnglish&Ver=original&Site=Congress&BackColorInternet=e0cee1&BackColorIntranet=e0cee1&BackColorLogged=FFC679).
23. Resolution 173 (2004) on challenges for Local Democracy in South Eastern Europe [Электронный ресурс] - [https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=RES\(2004\)173&Language=lanEnglish&Ver=original&Site=Congress&BackColorInternet=e0cee1&BackColorIntranet=e0cee1&BackColorLogged=FFC679](https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=RES(2004)173&Language=lanEnglish&Ver=original&Site=Congress&BackColorInternet=e0cee1&BackColorIntranet=e0cee1&BackColorLogged=FFC679).
24. Resolution 207 (2006) on young people and new information and communication technologies: a new opportunity for local democracy [Электронный ресурс] - <https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=969833&Site=Congress&BackColorInternet=e0cee1&BackColorIntranet=e0cee1&BackColorLogged=FFC679>.
25. Resolution 257 (2008) Democracy and local governance in South-East Europe: the role of Local Democracy Agencies (LDAs) [Электронный ресурс] - <https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=1300179&Site=Congress&BackColorInternet=e0cee1&BackColorIntranet=e0cee1&BackColorLogged=FFC679>.

**V.D. BAKUMENKO**

*Vice-rector for Science of the Academy of  
Municipal Administration; Kyiv, Ukraine  
Doctor of Sciences (Public  
Administration), Professor*

**M.O. KUSHNIR**

*Doctor of Public Administration*

**THE CATEGORY OF “LOCAL DEMOCRACY” AS  
ELEMENT OF ESSENCE MAKING SCIENCE OF STATE  
ADMINISTRATION**

*This research is devoted permission of scientific and practical  
problem, related to development of concept vehicle of science of  
state administration. Opens up the essence of concept «local  
democracy».*

Key words: local democracy, local government.

**ՎԻԼԻԿ ԵԴԻՊԱՐՅԱՆ**

*ՀՀ պետական կառավարման ակադեմիայի դասախոս,  
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների  
թեկնածու, դոցենտ*

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՓՈՒՆԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ  
ՄԵԳԱՄԻՏՈՒՄՆԵՐԸ**

Քաղաքակրթությունը գոյատևում է և դառնում շարունակական, երբ մարդու հնարավորությունների ընդլայնմանը զուգընթաց, այն նաև իմաստնանում է: Մարդու հնարավորությունների էներգետիկ հզորությունն այժմ գերազանցում է նախորդ ժամանակներում ձեռք բերած զսպող միջոցներին և այդ անհամամասնությունը մարդկությանը (այդ տեսակին) հասցրել է ինքնառչնչացման եզրին: Ներկա քաղաքակրթությունը սպառել է բնական-տարերային զարգացման հնարավորությունը: Մարդկության գոյատևման հիմնախնդիրը նրա սոցիալ-էկոլոգիական ոլորտում պահանջում է ավանդական ուղու վերաիմաստավորում:

Բոլոր ավանդական մշակույթները ձևավորվել են միանգամայն այլ՝ ներկայի գործիքային հնարավորություններին անհամեմատ նվազ պայմաններում և այժմ այդ հանգամանքը ձեռք է բերում վճռորոշ նշանակություն:

Գոյատևման ռազմավարության առանցքը գաղափարական ու քաղաքական հարաբերությունների համակարգի արմատական վերակառուցումն է: Որպեսզի մարդկությունը գոյատևի, պարտավոր է ձեռք բերել իր գործիքային հզորությանը համարժեք մտածելակերպ, որն ենթադրում է հանդուրժողականության չափազանց բարձր աստիճան, ինքնաքննադատություն ու փոխզիջումների պատրաստականություն:

Մտածողության էկոլոգիայում գոյություն ունի գործընթացների հոլովույթ կապված մտքի ճկունության հետ: Որոշ նախադրյալներ, որոնք խորն արմատավորվել են մեր կյանքում, պարզապես ճիշտ չեն ու դառնում են ախտածին, քանզի համակարգային մտածողությունը վերարտադրում է դատողության հիմքում դրված սխալը [1, շ. 469]:

Քաղաքակրթությունը հասել է մի սահմանագծի, երբ նոր մշակույթը կրող անձը դուրս է գալիս սոցիալական ու մշակութային հսկողությունից և այդ տեղի է ունենում անհավասարաչափ ու բազմազան կոմբինացիաներով:

Ֆրոստրացված անձը, որն օտարվում է հասարակությունից և, որը, սակայն, օժտված է ամբիցիաներով, սոցիալական բնազդներով ու արժանապատվությամբ, գերադասում է ոչնչացումը. քաղաքական

տեռորը դարձել է ուժեղի դեմ թույլի միակ զենքը՝ նրան պարտադրված քաղաքական վարքը:

Քաղաքական դաշտում, որպես հիմնական «խաղացողներ», երևան են եկել վերազգային ընտրանիներ, որոնք կառավարում են հասարակության նպատակադրումները, թելադրում նրա կյանքի իմաստը որոշող արժեքները, կարծրատիպերը, գործողությունների ալգորիթմները:

XX դարում բացահայտվեց, որ որքան էլ մարդու կողմից ձեռնարկվող գործողությունները լինեն նպատակաուղղված, այնուամենայնիվ դրանք չեն կարող բնության համար չունենալ որոշակի բացասական հետևանքներ: Այդ արդյունքը դեռևս նկատվել է Յեզեի կողմից, որը նշել է. «Համաշխարհային պատմության մեջ մարդկանց գործողությունների շնորհիվ ընդհանրապես ստացվում են նաև այլ արդյունքներ, քան որոնց նրանք ձգտում են և որոնց հասնում են, քան այն արդյունքները, որոնց մասին նրանք իմանում են և որոնց նրանք ցանկանում են: Նրանք հասնում են իրենց շահերի բավարարմանը, սակայն դրա շնորհիվ իրականացվում է ևս ինչ-որ բան, այնպիսի բան, որը թաքնված է դրանց մեջ, սակայն չի գիտակցված նրանց կողմից և չի եղել նրանց մտադրությունների մեջ» [2, c. 27] :

Հիմնախնդիրն այն է, որ բարոյականության զգացումը, բնորոշ է անհատին, այլ ոչ հանրությանը: Հանրությունը հիմնականում ապրում է ոչ թե համամարդկային արժեքներով, այլ՝ իր շահերով: Հասարակության «հիվանդության» խորագույն պատճառներն ընկած են մշակույթներում, մարդկային արժեքների ոլորտում: Մշակույթներում են ձևավորվում արժեքներ, որոնք ուղղորդում են հասարակությանը: Կան համամարդկային արժեքներ, որոնք բարձր են ցանկացած շահերից: Սակայն հիմնախնդիրը կայանում է ոչ թե համամարդկային արժեքների ընտրությունում, այլ նրանում, թե որքան ադեկվատորեն են այդ արժեքները ներառվում մշակույթներում:

Մյուս հիմնախնդիրը մշակույթների համաշխարհայնացման փոխհարաբերությունների ներդաշնակեցման ընդունակությունն է, այսինքն՝ թե մեր մշակույթներում ինչ գործոններ են խանգարում Երկիր-մոլորակը որպես ընդհանուր տուն ընկալելու:

Քաղաքակրթության առաձգականությունը պետք է կարողանա մրցել շրջակա միջավայրի ճկունության հետ:

Գլոբալացումը լինելով դինամիկ կապիտալի, միջազգային շուկայի ինտեգրման, անմիջական կապերի, տեղեկատվության և բաց սահմանների աշխարհի [3, c. 16], ու սկսվելով որպես շուկայական ուժերի անաչառ գործընթաց, վերածվել է վերազգային պետական միավորումների միահեծանության հաստատման գործընթացի:

Այն ներառում է պետությունների բնական իրավունքները, պետությունները կորցնում են իրենց ազդեցությունը և որոշ իրավունքներ սեփական համակարգի ներսում:

Ժամանակակից գործընթացներին հատուկ դինամիկա է տալիս անհավասարաչափությունը՝ տարածաշրջանների դինամիկայի անհա-



վասարաչափությունը: Աշխարհի տարածաշրջաններ զարգանում են տարբեր տեմպերով: Աշխարհաքաղաքական և գեոէկոնոմիկական նոր պատկերի ձևավորումն ուղեկցվում է միջազգային հարաբերությունների կարգավորման, համակարգային զարգացմամբ ու ամրացմամբ: Այդ համակարգը գտնվում է համապարփակ հանրության մեջ գտնվող ուժերի հարաբերակցության ուղղակի ազդեցության ներքո ու նշանակալի չափով համարվում է աշխարհաքաղաքական և գեոէկոնոմիկական դոմինանտ՝ սուբյեկտների շահերին:

Տեղի է ունենում փոփոխությունների քառասյին կուտակում, որը կարող է հանգեցնել ժամանակակից աշխարհակարգի արմատական փոփոխության:

Վճռորոշ նշանակություն է ձեռք բերում զանգվածային տեղեկատվական միջոցների ամենուրեք թափանցելիությունը: Տեղի է ունենում տեղեկատվական հոսքերի քառասցում, որը պահանջում է նոր մշակութային սինթեզ:

Գլոբալացումը, գրավելով աշխարհը, կարող է ամփոփվել իր մեջ՝ իր բոլոր հետևանքներով դառնալ փակ համակարգ:

***Տեխնոլոգիան առաջ է անցել ինստիտուտներից:***

Երկրների միջև ավանդական քաղաքական ցանցերի փոխարեն օգտագործվում են ժողովրդավարական (լիբերալ-ժողովրդավարական) ինստիտուտները, որոնք ժողովուրդների մտածելակերպերի տարբերության պատճառով կատարյալ լուծումներ չեն կարող տալ:

Կան աշխարհայացքային բախումներ, ավանդույթների, քաղաքակրթությունների, գլոբալացման տարբերակների բազմազանություն, որոնք չեն կարող ներառվել մեկ շրջանակի մեջ:

Փոփոխության անհրաժեշտություն կա միջազգային հարաբերություններում: Հարցն այն չէ, թե ինչ պետք է անել գոյություն ունեցող կանոնների շրջանակներում, այլ՝ ինչպես հեռանալ այդ կանոններից: Առայժմ գործառության մեջ է կարճատև եսասիրությունը, նեղ գավառամտությունը և քաղաքական իներցիան:

Homo-Sapiens-ի հետագա զարգացումը, նրա գիտակցության ընդլայնումը պահանջում է համամոլորակային ռազմավարություն և այդ պետք է գիտակցվի մարդկության կոլեկտիվ ինտելեկտի կողմից:

Ստեղծվում է մարդկության նոր կենսակերպ, որը պահանջում է աշխարհընկալման ու մտածողության ոչ գծայնություն. աշխարհի լիովին ընկալումը տրամաբանորեն հնարավոր չէ:

Գոյատևման խնդրի լուծումը գիտակցության որակի բարձրացման, հոգևոր ոլորտում համապարփակ փոփոխությունների մեջ է:

Մենք հետզհետե ավելի քիչ ենք հասկանում մեզ և ուրիշներին: Ուժեղանում է գայթակղությունը մխրձվելու գործողությունների մեջ, ուղղորդվելով շրջապատի սպասումներով, այլ ոչ մեր սեփական մղումներով: Մեր գիտակցության մեջ համարյա մոռացել ենք, թե ինչ բան է «լինել»: Այնինչ աշխարհն անբաժանելի ամբողջություն է, հա-

րաբերությունների ցանց է, և այդ հարաբերությունները կախված են դիտորդից ու նրա աշխարհի մտնելու ձևից:

**Աշխարհն ունի դիտորդի հատկություն:**

Մարդու կենսունակության համար նրա միջավայրը և կենսակերպը պահանջկոտ է, որ դրանք դառնան առավել արհեստական: Սակայն անհատ տեսակի համար առավել բարենպաստ կյանքի պայմանները նվազեցնում են ամբոխահաճության (պոպուլյացիայի) կենսունակությունը:

Փոխելով իրեն՝ մարդը փոխում է աշխարհը և իր ճակատագիրը, իսկ փոխակերպված աշխարհը փոխում է մարդուն ու նրա ապագան:

Պետությունների սահմանները, քաղաքական և սոցիալական ինստիտուտներն արդեն չեն կարող անջրպետել (պաշտպանել) հասարակությանը համապարփակ քաղաքական ազդեցություններից:

Անհրաժեշտ է որոշել. ո՞ւր և հանուն ինչի՞ ենք մենք ուղղորդելու մեր ուժերը, օգտագործելու գիտելիքները և ունակությունները, գտնելու պետական շինարարության նոր մոտեցումներ, նոր սոցիալական ու քաղաքական տեխնոլոգիաներ, որոնք թույլ կտան դիմագրավելու մեր գոյատևմանն ու զարգացմանն ուղղված մարտահրավերների: Մենք պարտավոր ենք ունենալ համապատասխան տրամադրվածություն ու մտադրվածություն, ճշգրիտ իմանալ ի՞նչ պետք է անել և ինչո՞ւնն է մեր ուղին:

Մեր բոլոր հիմնախնդիրների պատճառը վատ մտագործունեությունն է, մտային սովորույթները:

Համակարգի ուժը հիմնականում համընկնում է նրա թույլ օղակի ուժին:

Կոնցեպտուալ անորոշությունն երկրին դատապարտում է անորոշության ու նրան խոցելի դարձնում: Անհրաժեշտ է արմատապես վերագիտակցել մեր հարաբերությունը ստեղծվածի, մեր հնարավորությունների, խնդիրների ու մեր ապագայի նկատմամբ: Գլխավորը՝ գտնել մեր նիշան աշխարհում ու դրան համապատասխան գործառույթյան անհրաժեշտ կառուցակարգերը: Գտնել սեփական քաղաքակրթության ներուժի ակտիվացման միջոցները:

Գոյատևման համար անհրաժեշտ է ձեռք բերել միջավայրի գործիքային հզորությանը համարժեք մենթալիտետ (հանդուրժողականության, ինքնաքննադատության ու փոխզիջման որոշ չափերի պատրաստականություն):

Գերիշխում են ոչ թե ուժը, ֆինանսները և տեղեկատվությունը (դրանք միայն միջոցներ են), այլ ոգին, կամքը և հավատը:

Տեղի է ունեցել նոր սերնդի արժեքային կողմնորոշման փոփոխություն, առաջացել է քաոսային վիճակ, որը հանգեցրել է նեղ անձնային վերակողմնորոշման, եսակենտրոն վարքի: Ազգերի զանգվածային գիտակցության մեջ նոր տեղաշարժ է պետք, որը կարող է տեղի ունենալ հզոր ինտեգրող գաղափարների միջոցով: Անհրաժեշտ են մշակույթի և մարդկային հոգևոր կերտվածքի ու ոգու նոր խորհրդանիշեր, արժեքային կողմնորոշումների բեկում, հասարակութ-

յան և պետության փոխհարաբերությունների, պետական գործառույթների, պետական կառավարման վերափոխումներ:

Ներկա քաղաքակրթություններն սպառել են տարերային-բնական զարգացման հնարավորությունները: Գոյատևման հիմնախնդիրը զարգացման ավանդական ուղու վերագիտակցման մեջ է: Մենք պատասխանատվություն ենք կրում ոչ միայն արածի և ասածի, այլև կամայական մտքի համար: Բարոյական մարդկանց թվաքանակը, սակայն, կախված չէ բարոյական ուսմունքների թվաքանակից: Մենք չենք կարող այլևս ձևանալ, տատանվել կամ դանդաղել:

Նախկին հարմար ու ծանոթ աշխարհն արագորեն անհետանում է: Նոր դարաշրջանում ժամանակն արդեն չի չափվում տարիներով, քանզի սկսած արմատական փոփոխությունները ծնում են կատարելապես այլ աշխարհ:

XX դարի սկզբներին ձևավորված տեխնիկատնտեսական և կազմակերպական մտածողության պարադիգման արդեն կորցրել է առաջնայնությունը: Դրան փոխարինում են երկրների, ազգերի փոխհարաբերությունների և աշխարհաստեղծման դիրքորոշումների հոգևոր-կրոնական չափումները: Մարդկության ներքին արժեքային աշխարհի բարոյակրոնական լուծումներ կարող են հանդիսանալ այն պարադիգմաները, որոնք կօժանդակեն նոր աշխարհակեցության հիմքերի ստեղծմանը:

Պատմության կուտակիչ գործընթացը հանգում է ոչ այնքան տեխնիկատնտեսական նվաճումների, որքան հոգևորի ու բարոյականության, բարոյական ուժի կուտակման, որոնք արթնացնում են խիղճն ու պատասխանատվությունը:

Մարդկության շահերի համապարփակ միավորումը դրված է որոշակի քաղաքականության հարթության վրա: Եկել է տարածաշրջանների ու տարածքների համապարփակ քաղաքական և տնտեսական համակարգերի մեջ ինտեգրման ժամանակը: Սակայն պետք է նշել, որ առանց «ներքին» ինտեգրացման անհնար է լուծել համապարփակ ինտեգրման խնդիրը: Հարկավոր են նոր հայացքներ մարդու, իշխանության և կազմակերպական արժեքների վերաբերյալ: Հասարակական կազմակերպական ռացիոնալության չափանիշ կարելի է համարել հասարակության ռազմավարության և բնության տրամաբանության համաձայնեցվածության աստիճանը: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել երկիր մոլորակում էկոնոմիկայի և էկոլոգիայի անվտանգությանը: Նոր պետական կառավարումը պահանջելու է մարդկանց իմացական և տեխնոլոգիական գործունեության էթիկական կարգավորում: Մոլորակային մտածողության նոր տիպի ձևավորման գործընթացը հիմնված է տոլերանտության (հանդուրժողականության) և մշակույթների երկխոսության վրա: Մարդկության զարգացման ռազմավարությունը պարզապես պետք է համաձայնեցվի կենսոլորտի զարգացման հետ, այլ պետք է լինի այնպիսին, որ կենսոլորտի զարգացումն ընթանա մարդկության էվոլյուցիոն ուղուն համաձայն: Հասարակական

կառույցը պետք է կրի հիմնարար փոփոխություն և փոխի հասարակական արժեքների կառույցը:

Միայն արժեքային կողմնորոշված անձը, ոգևորված վեհ գաղափարներով, ոչ միայն վեր է հանում այլընտրանքներ, այլև անցնում է հատուկ հոգևոր չափման, ընկալում է ընտրությունն որպես բարձրագույն պարտք և կոչում:

Նյութը նույնպես կարիք ունի ոգու, որպեսզի կարողանա իրականացնել իր պոտենցիալ բազմազանությունը: Ինչքան անհոգի ու անոգի է աշխարհը, այնքան այն միօրինակ է: Աշխարհը մեծ բարոյական դպրոց է, որտեղ բոլորս պետք է սովորենք ներդաշնակ զարգացնելու մեր կամքը, միտքը, հոգին և ոգին: Մենք պետք է լիակատար պատասխանատվությամբ վերաբերենք երկրի վրա մեր գտնվելուն: Գիտակցել, որ ինչ անում ենք, կարող է դառնալ մեր վերջին արարքը երկրի վրա, մեր վերջին ճակատամարտը: Մենք ժամանակ չունենք:

Կշահի նա, ով մերժ է բնական ինքնակարգավորման:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Бейтсон Г.**, Экология разума. М., “Смысл”, 2000г.
2. **Гегель Г.**, Философия истории. Т. VIII, 1935г., с. 27.
3. **Тетчер М.**, Искусства управления государством, М., “Альпино паблишер”, 2003г., с.16.

**VILIK EDIGARYAN**

*Docent of Public Administration  
Academy of the Republic of Armenia,  
Candidate of Sciences in Physics and Mathematics*

## **MEGATRENDS OF PUBLIC TRANSFORMATIONS**

In the work are given some megatrends in the sphere (area) of economy, policy and psychology, which we have to know and their challenges to take into account.

Ideas for counteraction of some challenges are proposed.

**ԹԵՐԵԶԱ ԽԵՉՈՅԱՆ**

*ՀՀ պետական կառավարման ակադեմիայի  
արտաքին կապերի գծով պրոռեկտոր*

**ԵՐԶԱՆԿՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ.  
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ**

Երջանկության տնտեսագիտությունը երկրի բարեկեցության վերաբերյալ գիտություն է, որն իր ուսումնասիրություններում միաձուլում է տնտեսագետների և հոգեբանների մեթոդները: Ինչպե՞ս չափել երջանկությունը, որո՞նք են բարեկեցության աստիճանը բնութագրող ցուցանիշները: Համախառն ազգային երջանկության (այսուհետ՝ ՀԱԵ) ցուցանիշն որոշ երկրներում դարձել է երկրների համեմատության չափանիշ ավանդական մակրոտնտեսական ցուցանիշների հետ համատեղ, ինչպիսիք են՝ Համախառն ազգային արդյունքը (այսուհետ՝ ՀԱԱ) և Համախառն ներքին արդյունքը (այսուհետ՝ ՀՆԱ):

1972 թվականին Բուրբանի Վանգչուկ թագավորն առաջինն է առաջարկել ներդնել այդ ցուցանիշը որպես համախառն ազգային արդյունքի այլընտրանքային ցուցանիշ:

2006 թ. հեղաշրջումից հետո Թաիլանդը նույնպես կիրառության մեջ դրեց նշված ցուցանիշը: Երկրի նոր կառավարությունը նպատակ դրեց ոչ միայն ազգային հարստության ավելացման, այլև երջանկության հարցը: ՀՆԱ-ի հետ միասին Թաիլանդը ներկայացնում է ՀԱԵ ցուցանիշն ամսական կտրվածքով: Ցուցանիշը հիմնված է 1-10 սանդղակով կատարված հետազոտության վրա: 2007 թ. Թաիլանդի ՀԱԵ ցուցանիշը 5,1 էր: Դրա հիմքում ընկած էին բնակչության մեջ կատարված հարցումների արդյունքները, որոնք ընդգրկում էին մի շարք գործոններից բավարարվածության աստիճանը՝ անվտանգություն, լավ կառավարում, սոցիալական արդարություն, կրթություն, կենցաղային սպասարկում և այլն:

Ավստրալիան, Կանադան, Չինաստանը, Ֆրանսիան և Միացյալ Թագավորությունը ևս հաշվարկում են ազգային երջանկությունը:

Գուցե մոտ ապագայում բոլոր երկրներում Համախառն ազգային արդյունքի ցուցանիշի փոխարեն կամ դրա հետ մաս կիրառության մեջ մտնի ՀԱԵ ցուցանիշը: Ազգային վիճակագրության ծառայությունը հավանաբար կարիք կունենա ստեղծել վիճակագիրների խումբ, ովքեր կաշխատեն սուբյեկտիվ բարեկեցության տվյալների վրա:

«Համախառն ազգային երջանկություն» հասկացությանը զուգահեռ կիրառության մեջ է մտել «Համախառն միջազգային երջանկություն» (այսուհետ՝ ՀՄԵ) հասկացությունը, որի արմատները բուդիստական փիլիսոփայության մեջ են: Համախառն միջազգային երջանկության ծրագիր է իրականացվում, որն ընդգրկում է երջանկության թեմայով գիտաժողովների (առաջինն անցկացվել է 2004 թ., Բուքանոն), սեմինարների, գիտական հետազոտությունների անցկացումը և դրանց հրատարակումը:

«Ներկայումս տնտեսագիտության ոլորտների մեջ երջանկության տնտեսագիտությունն զբաղեցնում է երրորդ տեղն ավտոմոբիլային արդյունաբերությունից և տեղեկատվական տեխնոլոգիաներից հետո»,- նշում է ամերիկացի հայտնի տնտեսագետ Փոլ Ջեյն Փիլցերը իր «Առողջական վիճակի նոր հեղափոխություն» (The New Wellness Revolution) գրքում [1]: Ստեղծվել է երջանկության վերաբերյալ տվյալների համաշխարհային բազա (World Database of Happiness): Տարբեր երկրների համալսարաններում ավելանում է երջանկության տնտեսագիտության ամբիոնների թիվը, նշված թեմայով հրատարակվում են գիտական հանդեսներ, ինչպես, օրինակ, «Երջանկության հետազոտությունների ամսագիրը» (Journal of Happiness Studies), իսկ Ավստրալիայի երջանկության ինստիտուտում 1 ժամվա համար 140 դոկարով դասընթացներ են կազմակերպվում երջանկության ավելացման վերաբերյալ:

«Երջանկագետ» տնտեսագետների և հոգեբանների հետազոտությունները պարզել են, որ չնայած միջին հաշվով հարուստ երկրները, որոնց բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 15 000 դոլարից ավելի է (աշխարհի երկրների մեծ մասում այդ ցուցանիշը նշված թվից փոքր է), առավել երջանիկ են, քան աղքատ երկրները:

Երջանկության համաշխարհային տվյալների բազայում ներկայացված են միջին երջանկության մակարդակները 1990-ականներին՝ աշխարհի 90 երկրում: Հարցումների միջոցով կատարված հետազոտությունները պարզել են, որ 0-10 միավոր գնահատվող սանդղակում կյանքից բավարարվածության ցուցանիշով աշխարհում ամենացածր մակարդակը գրանցվել է Ջիմբաբվեում՝ 3.3 միավոր, առաջնակարգ տեղ են զբաղեցնում Դանիան, Սալթան, Շվեյցարիան 8.0-ական միավոր (տե՛ս աղյուսակ 1): Նշված սանդղակով աշխարհում երջանկության միջին մակարդակը 6.5 է, Ռուսաստանում՝ 4.9, ճապոնիայում՝ 6.6: Ապրած երջանիկ տարիների թվով Շվեյցարիան առաջին տեղում է՝ 63 տարի, իսկ վերջին տեղում Ջիմբաբվեն է՝ 13 երջանիկ տարիներ: Միջին երջանկության մակարդակը վերջին 30 տարիների ընթացքում փոքր-ինչ բարձրացել է, սակայն ճապոնիայում և ԱՄՆ-ում մնացել է նույն մակարդակի վրա:

**Աղյուսակ 1**

**Ամենաբարձր միջին երջանկության մակարդակ ունեցող 10 երկրների ցանկը**

	Երկիրը	Երջանկության միջին մակարդակը
1.	Դանիա	8.0
2.	Մալթա	8.0
3.	Շվեյցարիա	8.0
4.	Իսլանդիա	7.8
5.	Իռլանդիա	7.8
6.	Կանադա	7.6
7.	Լյուքսեմբուրգ	7.6
8.	Նիդերլանդներ	7.6
9.	Մեքսիկա	7.5
10.	Շվեդիա	7.5

Աղբյուրը՝ [http://www.happiness.org/Resources/Happiness\\_Studies/Happiest\\_Countries.aspx](http://www.happiness.org/Resources/Happiness_Studies/Happiest_Countries.aspx)

Ձարմանալի չէ, որ ամենաերջանիկ երկրների շարքում են բարգավաճող, հարուստ երկրները:

**Ի՞նչ գործոններ են ազդում երջանկության վրա և ինչպե՞ս է այն գնահատվում**

Երջանկությունն իր բնույթով սուբյեկտիվ է: Շատ դժվար է համեմատել մեկի երջանկությունը մեկ այլ անձի հետ: Եվ հատկապես դժվար է դա անել երկրների մակարդակով: Այնուամենայնիվ, երջանկության տնտեսագետները գտնում են, որ լուծել են այդ խնդիրը: Աբրահամ Մասլոուն գտնում է, որ մարդկային երջանկությունն որոշվում է կարիքների բավարարման աստիճանով: Նա կարիքների աստիճանակարգումը ներկայացնում է բրգաձև տեսքով, որը ընդունված է անվանել Մասլոուի բուրգ: Այն ընդգրկում է կենսաբանական, անվտանգության և ապահովության, սոցիալական, սիրո/հարգանքի և ինքնարտահայտման կամ ինքնադրսևորման կարիքները:

Անգլիացի վերլուծաբան Ադրիան Ուայթը մշակել է առաջին «Յամաշխարհային երջանկության քարտեզը»: Նրա կարծիքով ամե-



նակարևոր գործոններն են՝ առողջությունը, աղքատության մակարդակը, կրթության մատչելիությունը, ինչպես նաև բնակչության թիվը: Համաձայն Ուայթի՝ Դանիան աշխարհի ամենաերջանիկ երկիրն է: Նա օգտագործել է վիճակագրական տվյալներ, ինչպես նաև աշխարհի 178 երկրի 80000 մարդու հարցումների սուբյեկտիվ պատասխանները՝ բացահայտելու համար այդ երկրների բարեկեցության մակարդակները: Ըստ նրա հետազոտության արդյունքների՝ Դանիան, Շվեյցարիան, Ավստրիան, Իսլանդիան ամենաբարձր բարեկեցություն ունեցող երկրներն են, իսկ Ջիմբաբվեն և Բուրունդին գտնվում են հակառակ բևեռում: Չինաստանը 82-րդ տեղում է, Հնդկաստանը՝ 125-րդ, Ռուսաստանը՝ 167-րդ, իսկ Միացյալ Նահանգները՝ 23-րդ տեղում [3]:

Տնտեսագետները նշում են մի շարք այլ գործոններ, որոնք մարդկանց երջանիկ են դարձնում: Փողը որոշակի կորելացիայի մեջ է երջանկության հետ, սակայն կարևոր է, թե եկամուտը որքանով է գերազանցում որոշակի նվազագույն եկամտի մակարդակը:

Մարդկանց ազատ ժամանակը նույնպես կորելացիայի մեջ է երջանկության հետ: Աշխատանքը կորցնելը կարող է լուրջ պատճառ դառնալ ոչ երջանիկ լինելու համար:

Երեխաները հակված են նվազեցնելու ծնողական երջանկությունը մինչև դպրոց հաճախելը, թեև ողջ կյանքի կտրվածքով հակառակն է նկատվում:

Ամուսնացած մարդիկ ավելի երջանիկ են, սակայն այնքան էլ պարզ չէ՝ դա ամուսնանալու՞ հետևանք է, թե՞ արդեն երջանիկ մարդիկ են հակված ամուսնանալու:

Երջանկության վերաբերյալ հետազոտությունները և հարցումները միշտ էլ մի փոքր անվստահության արձագանք են ունենում այն առումով, թե արդյո՞ք հարցվողները ճիշտ են պատասխանել հարցերին և կարելի՞ է հենվել դրանց վրա: Որպեսզի երջանկության վերաբերյալ տվյալներն ավելի արժանահավատ լինեն, գիտնականները նոր գործիքներ ու մեթոդներ են կիրառում, որոնք ներկայումս նրանք ունեն իրենց տրամադրության տակ: Տեխնոլոգիական նվաճումները գիտնականներին հնարավորություն են տալիս օբյեկտիվորեն որոշել՝ երբ է անձը իսկապես երջանիկ՝ դիտելով նրա ուղեղի ուրախության կենտրոնի փոփոխությունները:

Տյուրիիսի համալսարանում հետազոտություն է անցկացվել, որը բացահայտել է, որ ժողովրդավարությունը և համադաշնությունը բարեկեցություն են բերում անհատներին: Քաղաքական մասնակցության հնարավորությունը բարձրացնում է քաղաքացիների սուբյեկտիվ բարեկեցությունը: Դա բացատրվում է երկու պատճառով՝

1. քաղաքացիների ակտիվ մասնակցությունը քաղաքականությանը հնարավորություն է տալիս քաղաքացիների կողմից մոնիտորինգ իրականացնել քաղաքական գործիչների նկատմամբ, որը հանգեցնում է քաղաքացիների՝ պետությունից ավելի բավարարված լինելուն,

2. քաղաքացիների՝ քաղաքական գործընթացներին մասնակցությունը և դրանց նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հնարավորությունը բարձրացնում է բարեկեցությունը:

Երջանկության վերաբերյալ հետազոտությունների սուբյեկտիվ բնույթը հաշվի առնելով՝ տարբեր մոտեցումներ են ցուցաբերվել անհատի կյանքի վրա այլ գործոնների ազդեցության նկատմամբ, օրինակ՝ երջանկությունը հակադարձ կախվածության մեջ է սթրեսների, ասթմայի, ալերգիայի և այլ հանգամանքներից:

Աշխարհի զարգացած շատ երկրներում վերջին 50 տարում երջանկությունն այս առումով նվազել է:

Ուսումնասիրությունները բացահայտել են, որ առավել երջանիկ իրենց համարել են բարձր կրթություն ունեցողները, կանայք, բարձր եկամուտներ ունեցողները, երիտասարդները, ծերերը (բայց ոչ միջին տարիքի անձինք), ամուսնացածները, թոշակառուները, ինքնազբավածները: Չափահաս եվրոպացիների մեկ քառորդն իրեն համարում է «շատ երջանիկ» և գտնում է, որ փողն ակնհայտորեն նպաստում է երջանկության մեծացմանը, և որ աշխատանք ունենալը մեծ ազդեցություն ունի երջանկության մակարդակի վրա:

### Անդրադարձ Իսթերլինի պարադոքսին

Երջանկության տնտեսագիտության նպատակն է որոշել, թե որն է մարդկանց բարեկեցության աղբյուրը: Պատմականորեն մարդիկ այն տեսակետն են ունեցել, որ բարեկեցությունը եկամտի պարզ ֆունկցիան է: Բացահայտված է, որ երբ մարդը ձեռք է բերում իրեն անհրաժեշտ գոյության միջոցները, դրա կարևորությունը իբրև բարեկեցության չափանիշ նվազում է: Այս պարադոքսը մեզ հայտնի է Իսթերլինի անունով: Ռիչարդ Իսթերլինն առաջինն էր ժամանակակից տնտեսագետներից, ով 1970-ականների սկզբներին անդրադարձավ «երջանկություն» հասկացությանը: Իսթերլինի պարադոքսն ենթադրում էր, որ հասարակության տնտեսական զարգացման և երջանկության միջին մակարդակի միջև կապ չկա [13]: Այն հետևանք է, ինչպես Իսթերլինն է նշում, «հեղոնիկ ցիկլի»: Իր աշխատանքում նա նշում է, որ մենք շատ արագ ենք հարմարվում երջանկությանը և ընդունում ենք այն, կարծես այդպես էլ պետք է լիներ, կամ էլ համեմատում ենք մերը ուրիշների ունեցածի հետ, այլ ոչ թե նրա հետ, ինչ մենք ունեինք նախկինում: Սա նշանակում է, որ եկամտի աճի հետ ձգտումներն ավելանում են, և երբ առաջին անհրաժեշտության կարիքները բավարարվում են, հարաբերական եկամտի մակարդակն ավելի մեծ ազդեցություն է ունենում բարեկեցության վրա, քան բացարձակ եկամտի մակարդակը:

Ավելի ուշ՝ 1990-ականներին մի շարք այլ հեղինակներ ևս անդրադարձել են հարցին (Օսվալդ, Գրեհեն, Լայարդ, Սթիվենսոն, Վուլֆերս, այլք):

Երջանկության տնտեսագիտությունը բարեկեցությունը գնահատում է տնտեսագետների և հոգեբանների մեթոդների համատեղ կիրառմամբ: Երջանկությունն ուսումնասիրելիս հոգեբաններն ավելի վաղ էին սկսել բարեկեցության մասին հետազոտությունները, իսկ տնտեսագետները միայն վերջերս են մտել այս ոլորտ: «Երջանկագետ» տնտեսագետներից շատերը երջանկությունը կախվածության մեջ են դիտարկում միայն եկամուտներից: Սակայն մարդիկ տարբեր նախապատվություններ են ունենում նյութական և ոչ նյութական բարիքների առումով: Օրինակ՝ նրանք կարող են գերադասել ավելի ցածր վարձատրվող, սակայն իրենց ավելի հոգեհարազատ աշխատանք:

Անշուշտ, երջանկության տնտեսագիտությունը չի մերժում բարեկեցության մակարդակի չափումն ըստ եկամուտների, այլ բարեկեցության մակարդակի չափման լրացուցիչ չափանիշներ է առաջարկում: Այդ չափանիշները հիմնվում են հետազոտությունների արդյունքների վրա, որոնք անց են կացվել ըստ երկրների և տարբեր ժամանակահատվածներում՝ 100 հազարավոր մարդկանց հարցումների միջոցով՝ առաջարկելով գնահատել իրենց բարեկեցության մակարդակը: Հետազոտությունները տեղեկատվություն են տրամադրում տարբեր գործոնների վերաբերյալ, որոնք ազդում են բարեկեցության մակարդակի վրա, այդ թվում՝ եկամուտները, առողջական վիճակը, ընտանեկան վիճակը, զբաղվածությունը և այլն:

Երջանկության հետազոտությունները հիմնվում են հարցումներով, որտեղ անձին հարց է տրվում, օրինակ՝ «Ընդհանուր առմամբ որքանո՞վ եք Դուք Ձեզ համարում երջանիկ», կամ «Որքանո՞վ եք Դուք բավարարված Ձեր կյանքից»՝ որոշակի միավորների վրա հիմնված սանդղակի հնարավոր պատասխաններով:

Երջանկության մասին հետազոտությունները բացահայտել են, որ միջին հաշվով հարուստ մարդիկ ավելի երջանիկ են, քան աղքատները: Միջին հաշվով հարուստ երկրներն ավելի երջանիկ են, քան աղքատ երկրները: Ըստ երկրների կատարված հետազոտությունները պարզել են, որ եկամուտները նպաստում են երջանկության ավելացմանը: Ջրկվածությունն ու ծայրահեղ աղքատությունը, մասնավորապես, շատ վատ են անդրադառնում երջանկության վրա: Նույնիսկ եթե առաջին անհրաժեշտության կարիքները բավարարված են, այլ գործոններ են սկսում կարևորվել երջանկության գնահատման առումով, ինչպես, օրինակ, հարաբերական եկամուտների տարբերությունները, ավելացող նոր ձգտումները, ստեղծված հարստության/եկամուտների անվտանգության ապահովումը, ի լրումն եկամուտների ավելացման:

Այսպիսով, Իսթերլինի պարադոքսի մեկնաբանությունը հետևյալն է՝ եկամուտների ավելացմանը զուգահեռ մարդկանց ձգտումները ևս ավելանում են և երբ առաջին անհրաժեշտության կարիքները բավարարվում են, հարաբերական եկամուտների մակարդակն ավելի է ազդում բարեկեցության վրա, քան բացարձակ եկամուտների մակարդակը: Պարադոքսի մեկ այլ մեկնաբանություն է տրվում հոգեբանների

կողմից, ովքեր ելնում են այն ենթադրությունից, որ անձը երջանկության տարբեր մակարդակների վրա է գտնվում ժամանակի տարբեր հատվածներում, ասենք, լոտոյի վիճակահանությամբ շահում ունենալու կամ անուսնուց բաժանվելու պարագայում: Այս տեսության մեկնաբանությունը քաղաքականության տեսանկյունից այն է, որ երջանկությունը մեծացնելու համար ոչինչ հնարավոր չէ անել նման պարագայում:

Մարդիկ զարմանալիորեն շատ հարմարվող են և կարող են ընտելանալ շատ բաների, նաև եկամուտների աճին: Իսթերլինը գտնում է, որ մարդիկ ավելի շատ հարմարվող են դրամական, քան ոչ ֆինանսական հարցերում, մինչդեռ կյանքը փոխող իրադարձությունները, օրինակ՝ ծանր կորուստները երկարատև ազդեցություն ունեն երջանկության վրա: Քանի որ քաղաքականությունները մեծ մասամբ հենվում են բարեկեցության ֆինանսական չափորոշիչների վրա, դրանք ընդգծված ուշադրություն են դարձնում եկամտային բարեկեցության վրա և թերագնահատում են մյուս գործոնները, ինչպես, օրինակ, առողջությունը, ընտանիքը, կայուն զբաղվածությունը:

Միասնական տեսակետ չկա այն մասին, թե որ մոտեցումն է ամենաճիշտը:

2008-ին ամերիկացի տնտեսագետներ Բեթսի Սթիվենսոնը և Ջասթին Վուլֆերսը հրապարակեցին հոդված, որտեղ անդրադարձան Իսթերլինի պարադոքսին և վերագնահատեցին այն՝ օգտագործելով նորագույն տվյալներ: Նրանք հանգեցին եզրակացության, որ եկամտի բացարձակ աճը սերտորեն կապված է երջանկության ավելացման հետ [13]:

Սթիվենսոնը և Վուլֆերսը վերլուծության ենթարկեցին մի քանի տասնամյակների (1972-2006 թթ.) հարուստ տվյալների բազան: Նրանք բացահայտեցին սուբյեկտիվ բարեկեցության միջին մակարդակի և բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի միջև ակնհայտ ուղիղ համեմատական կախվածություն տարբեր երկրների կտրվածքով և հերքեցին այն տեսակետը, թե հարուստ երկրներում սուբյեկտիվ բարեկեցությունը հարստության աճի հետ չի ավելանում: Բացի այդ, նրանք հիմնավորեցին, որ բացարձակ եկամտի ազդեցությունն ավելի մեծ է հարաբերական եկամտի համեմատությամբ՝ երջանկության չափը որոշելիս:

Իսթերլինի պարադոքսը ժխտում են Ռուբ Վենհովենը և Մայքլ Յագերթին, ովքեր 2003 թ. հրատարակեցին իրենց հետազոտության արդյունքները, նշելով, որ ոչ մի պարադոքս էլ չկա, մարդկանց երջանկությունն ավելանում է եկամտի աճին զուգահեռ [15]:

Իսթերլինն իր հերթին հերքեց նրանց տեսակետը՝ նշելով, թե իր քննադատները իրենց վերլուծություններում ոչ ճիշտ տվյալներից են օգտվել [12]:

Մի շարք ուսումնասիրություններ ցույց են տվել, որ երջանկության աստիճանը տարբեր գործոնների ազդեցության տակ կարող է էականորեն փոփոխվել:

**Աղյուսակ 2-ում** ներկայացված տվյալները, որոնք հիմնված են 12 երկրի 108802 հարցվածների պատասխաններով (հետազոտությունն անց է կացվել Ռաֆայել դի Տելլայի և Ռոբերտ Մաք Քալոչի կողմից), թույլ են տալիս պատկերացում կազմել, թե որքան տարբեր են մարդկանց տարբեր խմբերի պատասխանները երջանկության մասին հարցումներին: Բոլոր հարցվածների միայն 23%-ն է շատ երջանիկ, 19%-ը իրեն համարել է ոչ երջանիկ, ամուսնացածների 16%-ն է ոչ երջանիկ, ամուսնալուծվածների՝ 33%-ը, գործազուրկների 33%-ը ոչ երջանիկ է, իսկ 16%-ը՝ երջանիկ, տղամարդկանց 18% և կանանց 19%-ը ոչ երջանիկ է, ամենացածր եկամուտ ունեցողների 27%-ն է իրեն համարել ոչ երջանիկ, 19%-ը՝ շատ երջանիկ, ամենաբարձր եկամուտ ունեցողների 13%-ը երջանիկ չէ, 28%-ը շատ երջանիկ է:

Միացյալ Նահանգներում կյանքի որակի վերաբերյալ պարբերաբար հետազոտություններ են անցկացվում երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Պարզվում է, որ հարցվածների մեջ իրենց երջանիկ համարողների թիվը 1950-ականներին և ներկայումս գրեթե չի փոփոխվել:

Ամերիկացի հոգեբաններ Էդ Դիները և Մարտին Ջելիգմանը նշում են, որ 1945-ից ի վեր ԱՄՆ ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով երեք անգամ ավելացել է, սակայն սոցիոլոգիական հարցումները ցույց են տալիս, որ բնակչության «երջանկության մակարդակը» գրեթե նույնն է մնացել, նույնիսկ մի փոքր էլ նվազել: Նույնը նկատվում է արևմտյան այլ երկրներում, բացառությամբ Դանիայի, որտեղ վերջին 30 տարվա ընթացքում կյանքից գոհ մարդկանց թիվն աճել է [17]:

Երջանկության մակարդակն ըստ տարբեր հատկանիշային խմբերի

Երջանկության աստիճանը, %	Ընդհանուրի մեջ	Գործազուրկներ	Ընտանեկան վիճակը		Սեռը		Եկամտային խմբեր	
			Ամուսնացածներ	Ամուսնալուծվածներ	Արական	Իգական	Ամենացածր եկամուտ ունեցող 25%-ը	Ամենաբարձր եկամուտ ունեցող 25%-ը
Շատ երջանիկ	23	16	26	12	22	25	19	28
Բավականին երջանիկ	58	51	58	55	60	56	54	59
Ոչ երջանիկ	19	33	16	33	18	19	27	13

Աղբյուրը՝ **Andrew Oswald**, A Non-Technical Introduction to the Economics of Happiness (PDF).  
<http://www2.warwick.ac.uk/fac/soc/economics/staff/faculty/oswald/intro.pdf>

Այսպիսով, եկամուտներն ավելացել են, իսկ երջանկությունը՝ ոչ: Այս փաստը տնտեսագետներին անհանգստացրեց. ի՞նչ է դա նշանակում: Է. Օսվալդը պատկերավոր համեմատություն է անում՝ բերելով ֆուտբոլային խաղի հանդիսատեսի օրինակը, երբ խաղը դեռ նոր է սկսվում, նա դաշտը հրաշալի է տեսնում, սակայն երբ խաղի ընթացքում նրա առջև նստածները ոտքի են կանգնում, նրա վիճակը տեսանելիության առումով վատանում է խաղասկզբի իր դիրքի համեմատությամբ [4]: Արդյո՞ք փողով հնարավոր է երջանկություն ձեռք բերել: Արդյո՞ք տնտեսական աճը միշտ է նպաստում ունևոր մարդկանց թվի ավելացմանը կամ չքավորության նվազեցմանը:

«Financial Times»-ի 2006 թ. հունվարի 18-ի համարում զետեղված իր՝ «Հիպիները ճիշտ էին երջանկության իրենց ըմբռնման մեջ» հոդվածում [5] Օսվալդը պնդում է, որ ոչ թե տնտեսական աճը, այլ երջանկությունը պետք է լինի հաջորդ և առավել իմաստավորված նպատակը հաջորդ և առավել զգայուն սերնդի համար՝ ավելացնելով, որ հիպիները, «կանաչները», հանգիստ և լարվածություն չպահանջող ցածր վարձատրվող աշխատանքը չափազանց մեծ սթրեսների հետ կապված և բարձր վարձատրվող աշխատանքից գերադասող անձինք, ուն սովորաբար քնծիծաղով են վերաբերվում շատերը, իրենց վերաբերմունքով մերժում են տնտեսական աճի առաջնային դերը երջանկության ավելացման հարցում:

Հոլանդացի հոգեբան Ռութ Վենհովենը՝ «Journal of Happiness Studies» ամսագրի խմբագիրը, առաջ է քաշել կյանքից բավարարվածության ընդհանրական ցուցանիշը, որը կոչվում է «երջանիկ կյանքի տարիներ», որտեղ ընդգրկվում են կյանքի տևողության և կյանքից բավարարվածության աստիճանի տվյալները:

Այսպես, Կանադայում կյանքի միջին տևողությունը 78,6 տարի է, իսկ կյանքից բավարարվածության միջին մակարդակը (սուբյեկտիվ ցուցանիշ, որը չափվում է հարցումների միջոցով՝ պայմանական սանդղակով)՝ 0,763 բալ է: Դրանք բազմապատկելով՝ ստանում ենք 60 «երջանիկ տարիներ»: ԱՄՆ-ում այդ ցուցանիշը կազմում է 57 տարի, Հոլանդիայում՝ 59, Հնդկաստանում՝ 39, Ռուսաստանը (29 «երջանիկ տարիներ») մի փոքր զիջում է Հարավաֆրիկյան Հանրապետությանը (30,8) և Նիգերիային (32,7) [17]:

Վենհովենը հետաքրքիր հետազոտություն է անցկացրել տարբեր երկրներում՝ պարզելու, թե մարդու ապրած տարիների ո՞ր հատվածն է ամենաերջանիկը: Փաստվել է, որ զարգացած երկրներում (Ֆրանսիա, Գերմանիա, ԱՄՆ) կյանքի երջանիկ տարիներ են համարվել 50-ից 60, ճապոնիայում՝ 40-ից մինչև 50 տարեկանը [18]: Բացի այդ, կանայք ավելի երջանիկ են, քան տղամարդիկ, երեխաներ ունեցող ընտանիքները երեխա չունեցողներից ավելի երջանիկ են, կրթվածներն ավելի երջանիկ են կրթություն չունեցողների համեմատ:

Նշենք, որ Վենհովենը, որպես հիմնական ցուցանիշ, դիտարկել էր ժողովրդի կենսամակարդակի ցուցանիշը:

Իհարկե, չի կարելի նույնացնել կյանքից բավարարվածությունը և երջանկության զգացումը: Երջանկության հետազոտական հարցումների ժամանակ մարդկանց երկու հարց է տրվում՝ «որքանով եք դուք երջանիկ այժմ» և «ինչպե՞ս եք գնահատում Ձեր հաջողակությունը ողջ կյանքի ընթացքում»:

Մի շարք երկրներում կյանքից բավարարվածության մակարդակը ցածր է, իսկ երջանիկ մարդկանց թիվը՝ մեծ: Սովորաբար դա բնորոշ է զարգացող երկրներին, որտեղ վիճակն աստիճանաբար բարելավվում է, այդ պատճառով էլ անցած կյանքը նրանց անհաջող է թվում: Այսպես, Նիգերիան աշխարհում առաջին տեղն է զբաղեցնում շատ երջանիկ մարդկանց թվով, իսկ կյանքից բավարարվածության աստիճանով մոտ է երկրագնդի միջին ցուցանիշին:

Ամերիկացի Դ. Մայերսը վերլուծել է փողի քանակի և երջանկության զգացողության միջև կապը 1960-1990 թթ. ընթացքում: Նրա հետազոտության արդյունքները բացահայտեցին, որ ամերիկացիների եկամուտների աճը չի ավելացրել այն մարդկանց թիվը, ովքեր իրենց համարում են «շատ երջանիկ»: Այդ ցուցանիշը կազմում էր 30%: Այս փաստը հանգեցնում է այն մտքին, որ մարդիկ դատում են իրենց եկամուտների մասին՝ համեմատության մեջ դնելով դրանք ուրիշների (հարևանի) եկամտի հետ:

1985 թ. «Չիկագո տրիբյուն» լրագիրը տարեկան 30000 դոլարից ցածր և 100000 դոլարից բարձր եկամուտ ստացող մարդկանց հարցումներ անցկացրեց: Պարզվեց, որ որքան շատ է վաստակում մարդը, այնքան ավելի շատ կցանկանար վաստակել: 30000 դոլար վաստակողները նշել էին, որ երջանիկ զգալու համար կուզենային տարեկան 50000 դոլար ունենալ: Տարեկան 50000 դոլար վաստակողները կցանկանային 250000 դոլար եկամուտ ունենալ:

Տարբեր ժամանակներում երջանկության մասին պատկերացումները փոփոխություններ են կրել, հիմնականում՝ կախված կենսամակարդակից: Մարդը, ազատվելով վաղվա օրվա մասին մտածելու խնդրից, ապահովված դառնալուց հետո սկսում է մտահոգվել իր բարեկեցիկ վիճակը կորցնելու վտանգի շուրջը: Դրանից, անշուշտ, պակասում է նրա երջանկության աստիճանը:

Սուբյեկտիվ բարեկեցության վերաբերյալ տվյալները կարող են օգտակար լինել՝ դատողություններ անելու համար հանրային քաղաքականության արդյունավետության մասին: Դրանք կարող են հիմք ծառայել այս կամ այն քաղաքականության իրականացման հիմնավորման համար, ինչպես նաև քաղաքականության արդյունքները գնահատելիս: Քաղաքականությունը մշակողները պետք է շահագրգիռ լինեն բնակչության երջանկության մակարդակի բարձրացման համար միջոցառումներ պլանավորելու և իրականացնելու, քանզի անհատների սուբյեկտիվ բարեկեցությունը դրական ազդեցություն ունի հասարակության վիճակի վրա ամբողջությամբ վերցրած: Անհատների կյանքի պայմանների բարելավումը, աղքատության կրճատումը քա-



ղաքականությունն մշակողների ուշադրության կենտրոնում պետք է լինի, քանզի անբարեկից կյանքով ապրող, ոչ երջանիկ մարդը չի կարող արդյունավետ աշխատել: Հետևաբար, երջանկության չափորոշիչների ու ցուցանիշների մշակումը և ներդրումը չափազանց կարևորվում է բարեկեցության և անբարեկեցության մակարդակները գնահատելիս և համեմատական վերլուծություններ կատարելիս երկրի ներսում՝ ժամանակագրական կտրվածքով, ինչպես նաև այլ երկրների հետ համեմատություններ կատարելիս ու եզրահանգումներ անելիս՝ հետագա քաղաքականությունների ուղղությունները պլանավորելու համար:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Paul Zane Pilzer**, The New Wellness Revolution, Second Edition  
<http://thewellnessrevolution.paulzanepilzer.com/files/TNWR-Preview.pdf>.
2. [http://www.happiness.org/Resources/Happiness\\_Studies/Happiest\\_Countries.aspx](http://www.happiness.org/Resources/Happiness_Studies/Happiest_Countries.aspx).
3. [http://www.businessweek.com/globalbiz/content/oct2006/gb20061011\\_072596.htm](http://www.businessweek.com/globalbiz/content/oct2006/gb20061011_072596.htm).
4. **Andrew Oswald**, A Non-Technical Introduction to the Economics of Happiness (PDF)  
<http://www2.warwick.ac.uk/fac/soc/economics/staff/faculty/oswald/intro.pdf>.
5. **Andrew Oswald**, The Hippies were Right all Along about Happiness. Financial Times, January 19, 2006.  
[http://www2.warwick.ac.uk/fac/soc/economics/staff/faculty/oswald/ft\\_happinessjan96.pdf](http://www2.warwick.ac.uk/fac/soc/economics/staff/faculty/oswald/ft_happinessjan96.pdf).
6. [http://www.businessweek.com/globalbiz/content/aug2008/gb20080820\\_874593.htm](http://www.businessweek.com/globalbiz/content/aug2008/gb20080820_874593.htm).
7. <http://www.grossinternationalhappiness.org/>.
8. Tallying National Happiness. The Japan Times online, October 24, 2004  
[http://www.grossinternationalhappiness.org/downloads/The\\_Japan\\_Times\\_Editorial\\_on\\_Bhutan.pdf](http://www.grossinternationalhappiness.org/downloads/The_Japan_Times_Editorial_on_Bhutan.pdf).
9. **Carol Graham**, The Economics of Happiness.  
[http://www3.brookings.edu/views/papers/graham/2005graham\\_dict.pdf](http://www3.brookings.edu/views/papers/graham/2005graham_dict.pdf).
10. **David Bollier**, A New Dismal Science-Happiness Economics. Watch out! Economists are trying to measure happiness in order to guide public policy  
<http://onthecommons.org/content.php?id=2265>.
11. **Richard Easterlin**, Does Economic Growth Improve the Human Lot? Some Empirical Evidence  
<http://graphics8.nytimes.com/images/2008/04/16/business/Easterlin1974.pdf>.

12. **Richard Easterlin**, Feeding the Illusion of Growth and Happiness: A Reply to Hagerty and Veenhoven  
<http://www-rcf.usc.edu/~easterl/papers/HVcomment.pdf>.
13. **Betsey Stevenson and Justin Wolfers**, Economic Growth and Subjective Well-Being: Reassessing the Easterlin Paradox.  
<http://bpp.wharton.upenn.edu/betseys/papers/Happiness.pdf>.
14. **Rafael Di Tella and Robert MacCulloch**, Gross National Happiness as an Answer to the Easterlin Paradox?  
<http://129.3.20.41/eps/mac/papers/0504/0504027.pdf>.
15. **Michael Hagerty and Ruut Veenhoven**, Wealth and Happiness Revisited. Growing wealth of nations does go with greater happiness  
<http://www2.eur.nl/fsw/research/veenhoven/Pub2000s/2003e-full.pdf>.
16. **Ed Diener**, Guidelines for National Indicators of Subjective Well-Being and Ill-Being  
<http://listserv.vt.edu/cgi-bin/wa?A2=ind0511&L=isqols-listserv&D=0&T=0&P=356>.
17. Наука и жизнь, 2006г., # 4  
<http://www.nkj.ru/archive/articles/5242/>.
18. **Нина Михальская**, Экономика счастья  
[http://old.e-xecutive.ru/print/without/article\\_5046/](http://old.e-xecutive.ru/print/without/article_5046/).

**TEREZA KHECHOYAN**

*Public Administration Academy  
of the Republic of Armenia,  
Vice-rector for International Relations*

**HAPPINESS ECONOMICS:  
INTERPRETATIONS AND APPROACHES**

The article examines approaches and interpretations of economics of happiness by different authors from different countries. There is increasing interest in measuring of happiness, depending on incomes, as well as other factors. Particularly a new macroeconomic indicator is analyzed, which was proposed by the King of Bhutan in 1972, and is used in different countries as an instrument to measure overall happiness. This measure is Gross National Happiness Index.

The World Database of Happiness, outcomes of surveys and studies carried out by economists and psychologists are used to illustrate average happiness in different parts of our Planet. Also, subjective well-being and life satisfaction are represented in this paper.

Does money increase happiness? Does economic growth make nations wealthy? This issues, as well as Easterlin paradox are examined in the article.

**ՍՈՒՐԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ**

*ՀՀ պետական կառավարման  
ակադեմիայի ասպիրանտ*

**ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ  
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԳԱՐՑԵՐԸ**

Պետական կառավարման արդյունավետությունը ոչ միայն պայմանավորված է կենտրոնացված կառավարման գործունեությամբ, այլ նաև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ) գործունեությամբ, քանզի այդ մարմինների ճիշտ գործունեությամբ են ձևավորվում պետական կառավարման ինստիտուցիոնալ հիմքերը: Հանրային կառավարման բարեփոխումների իրականացման անմիջական կարևոր օղակներն են տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները:

Տեղական և տարածքային կառավարման արդյունավետության ու, հատկապես, դրա կարևոր տարրը կազմող համայնքների բյուջետավորման գործընթացի արդյունավետությունը ճիշտ ընկալելու համար անհրաժեշտ է դիտարկել, նաև գնահատել այն բարեփոխումները և կատարելագործման ուղին, որն անցել է Հայաստանի Հանրապետությունը՝ սկսած 1995 թ. ՀՀ Սահմանադրության [1] ընդունումից, որում միջոցով ամրագրվեցին տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հիմքերը:

Արդյունավետության գնահատմանը ցույց տրվող մոտեցումներն ունեն երկու հիմնական ուղղվածություն [2, էջ 202].

1. կողմնորոշում դեպի որոշակի արդյունքները,
2. կողմնորոշում դեպի որոշակի գործընթացները:

Առաջին մոտեցումը հիմնվում է կանոնավոր կատարողականի, հաշվետվությունների և հանրային կազմակերպությունների ու գործակալությունների ծրագրերի և անհատների մասնակցության վրա: Այդ ձևով կապ է հաստատվում հստակ սահմանված նպատակների և համեմատվող փաստացի լուծված խնդիրների, արդյունքների և կատարված ծախսերի միջև, այսինքն՝ եթե դիտարկելու լինենք բյուջետավորման գործընթացի արդյունավետության տեսանկյունից, ապա ակնհայտ է, որ այն պայմանավորված է վերոնշյալ տարրերից յուրաքանչյուրի արդյունքի հետ:

Երկրորդ մոտեցման հիմքում ընկած է գործընթացների ընդլայնման գաղափարը, քանի որ կենտրոնանալով ծրագրերի կատարելագործման վրա, անընդհատ շտկվում են բացթողումները և վերջնական արդյունքում հասնում խնդիրների լուծման, այսինքն՝ այստեղ շեշտվում է բուն բյուջետավորման գործընթացը: Այնուամենայնիվ, երկու

մոտեցումներն էլ ունեն միաբևեռ ուղղվածություն, և լավագույն տարբերակը կայանում է այս մոտեցումների զուգակցման մեջ, քանի որ և՛ նպատակների վրա կենտրոնանալու, և՛ գործընթացները կատարելագործելու պարագայում արդյունքները լինում են ավելի բարձր, իսկ լուծված խնդիրներն ավելի մեծ տեսակարար կշիռ են կազմում:

Տեղական ինքնակառավարման արդյունավետությունն առաջին հերթին պայմանավորված է համայնքի ղեկավարի կոմպետենտության և արհեստավարժության հետ [3]: Այս նպատակով աշխարհի շատ երկրներում անցկացվում են համայնքների ղեկավարների և համայնքային ծառայողների վերապատրաստումներ, պարապմունքներ (թրեյնինգներ)՝ նպատակ ունենալով ավելացնել նրանց մասնագիտական պատրաստվածությունն ու գիտելիքները տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ասպարեզներում: Սա արվում է նաև կրճատելու համար այն բացը կամ տարբերությունը, որ գոյություն ունի հասուն և նոր ձևավորվող ու դեռևս թույլ տեղական ինքնակառավարման համակարգ ունեցող երկրների միջև:

Տեղական ինքնակառավարման արդյունավետության գնահատման մոտեցումներից մեկում (Tocqueville Research Center – T-RC, Budapest 2001) նշվում է այն մասին, որ արդյունավետության գնահատման համար անհրաժեշտ է ցուցաբերել իրավիճակային մոտեցում՝ համեմատելով տարբեր համայնքներում տիրող իրավիճակը, այս հանգամանքը ևս կարևորվում է մենեջմենթում, քանի որ վերջնական արդյունքում ոչ բոլոր համայնքներում է, որ խնդիրները թեկուզ բյուջեի կամ եկամուտների հավաքագրման համակարգում ունեն միևնույն ուղղվածությունը, հետևապես ցուցաբերելով իրավիճակային այլ ոչ թե համակարգային մոտեցում կարելի է լուծում տալ հստակ համայնքում առկա հստակ խնդիրներին, իսկ համակարգային մոտեցման պարագայում նույնական լուծումներ են տրվում համակարգի բոլոր տարրերին:

Պատկերացում կազմելու համար տեղական ինքնակառավարման արդյունավետության վերաբերյալ, պետք է ուսումնասիրել այն հիմնական գործող միավորների (մարզպետարաններ, քաղաքապետարան, թաղապետարան, գյուղապետարան) պարամետրերը, որոնք իրենց գործունեությամբ ազդեցություն են թողնում տարածաշրջանի (մարզ, համայնք) բնակչության սոցիալ-տնտեսական կյանքի վրա:

Տեղական ինքնակառավարման արդյունավետությունը նպատակահարմար է բաժանել չորս հիմնական հատվածի.

1. տեղական մարմինների և քաղաքացիների միջև փոխհարաբերությունների որակը,
2. ՏԻՄ-երի համագործակցությունն արտաքին աշխարհում (միջազգային կազմակերպություններ և այլն),
3. համայնքի ղեկավարների արհեստավարժությունը և ինտեգրումը (համապատասխանություն անձնական և կազմակերպական արժեքների (նպատակների) և վարքագծի միջև),

4. համայնքի ղեկավարի և այլ միավորների միջև փոխհարաբերությունների արդյունավետությունը (մասնավոր հատված, հասարակական կազմակերպություններ, ՁԼՄ-ներ, կենտրոնացված և տարածքային կառավարման մարմիններ):

Վերջինիս միջոցով էլ ձևավորվում են բյուջետային ֆեդերալիզմի հիմքերը, իսկ ՏԻՄ-երի և կենտրոնացված կառավարման մարմինների փոխհարաբերություններով արտահայտվում են բյուջետավորման գործընթացի արդյունավետության տարրերը:

Տեղական ինքնակառավարման արդյունավետության վերաբերյալ գոյություն ունի երկու ձևաչափ [4, էջեր 208-209]:

Առաջին ձևաչափը *քանակական* է, իսկ երկրորդը՝ *գործոնային-վերլուծական*: Քանակական ձևաչափի էությունն այն է, որ ցույց է տալիս տարբեր գործոնների անդրադարձը տեղական ինքնակառավարման արդյունավետության վրա: Սակայն պետք է նշել, որ մշակված ձևաչափը լիարժեք չի վերածվել դասակարգված և հայեցակարգի տեսք ստացած պարադիգմայի, այլ ուղղակի տարբեր հիմքերի վրա ձևաչափում ցույց են տրվել համայնքի ղեկավարների գործունեության բնորոշ գծերը, կանոնների, սկզբունքների, մասնագիտական գործունեության այն բնագավառները, որոնք տանում են դեպի արդյունավետություն:

Այս ձևաչափում բացթողումը կայանում է նրանում, որ հստակ սահմանված չեն գործունեության մոտիվացման հիմքերը, բացակայում են հիերարխիկ կազմակերպական կառուցվածքի տարրերը, նշված չէ համայնքի ղեկավարի արհեստավարժության ազդեցությունը մակրո համակարգի տարրերի և գործոնների վրա: Տեղական ինքնակառավարման արդյունավետության հիմքում պետք է ընկած լինեն մարդկային, կազմակերպական, նորանուծական գործոնները և հանրության մասնակցությունը:

Հաջորդ՝ *գործոնային-վերլուծական ձևաչափ*ն իր էությամբ ունի համեմատական բնույթ, քանի որ համեմատության հարթության վրա է դիտարկում տեղական ինքնակառավարման արդյունավետությունը: Այս ձևաչափի հիմքում ընկած են հինգ հիմնական գործոններ, որոնք բաժանվում են ենթագործոնների.

1. տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների արհեստավարժությունը,
2. համայնքների և մարզերի կառավարման համակարգային մոտեցումը,
3. տեղական ինքնակառավարման համակարգի կատարողականի կազմակերպման համակարգումը,
4. տեղական ինքնակառավարման մարմինների կատարողականի կազմակերպման առանձնահատկությունները,
5. ՏԻՄ-երի ղեկավարների գործունեությանն աջակցություն:

Տեղական ինքնակառավարման արդյունավետության գնահատման չափանիշներն են՝ *իրագործելիությունը, խնայողականությունը,*

*որակը, ծախսերի և արդյունքների հարաբերակցությունը, աշխատանքից բավարարվածությունը, նորանուծությունների ներդրումը և այլն:*

Վերոնշյալ խնդիրները տանում են տեղական ինքնակառավարման համակարգի առանձին ոլորտների գործունեության արդյունավետության, որոնք հետագայում պետք է միավորվեն՝ կազմելով ամբողջական արդյունավետության բաղադրատարրերը՝ ելնելով առաջնայնության չափանիշից, այսինքն՝ պետք է հաշվի առնվեն առավելագույն կարևորություն ունցող ոլորտների հիմնախնդիրները և դրանց արդյունավետ լուծման հնարավորությունները: Ոլորտի առաջնայնությունը կամ խնդիրների կարևորությունը կարող է որոշվել փորձագիտական եղանակի հիման վրա, որը պետք է պայմանավորված լինի տվյալ համայնքի առանձնահատկություններով և տվյալ ժամանակահատվածով:

Կան մի շարք ցուցանիշներ որոնցով կարելի է գնահատել համայնքի բյուջետավորման գործընթացի արդյունավետությունը.

1. համայնքի բյուջեի եկամուտների պլանավորման որակը (պլանավորված եկամուտներ/փաստացի եկամուտներ հարաբերակցությունը),
2. համայնքի բյուջեի ծախսերի պլանավորման և իրականացման որակը (պլանավորված ծախսեր/փաստացի ծախսեր հարաբերակցությունը),
3. համայնքի բյուջեի կարճաժամկետ կրեդիտորական պարտքերի տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ծախսերում,
4. համայնքի բյուջեի կարճաժամկետ կրեդիտորական պարտքերի աճի (նվազեցման) միտումները,
5. համայնքի բյուջեի հարկային և ոչ հարկային եկամուտների աճի տեմպերը համայնքի բնակչության մեկ շնչի հաշվով,
6. հատուկ հարկային ռեժիմներով հավաքված եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի եկամուտներում,
7. ՏԻՄ սեփականությունից ստացված եկամուտների և սեփականության պահպանության համար կատարվող ծախսումների հարաբերակցությունը,
8. ՏԻՄ սեփականության օգտագործումից ստացվող եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի եկամուտների մեջ,
9. ՏԻՄ սեփականության օգտագործումից ստացվող եկամուտների աճի տեմպերը,
10. ՏԻՄ հողատարածությունների օգտագործումից ստացվող եկամուտների աճի տեմպերը և այլն:

Այս ցուցանիշներն օգտագործելով կարելի է քիչ թե շատ համեմատական առանցք անցկացնել համայնքների բյուջետավորման գործընթացների արդյունավետության միջև, սակայն համայնքների թիվը 33-ում այնքան շատ է, որ յուրաքանչյուր համայնքի վերաբերյալ բավականին դժվար է կազմել և գնահատական տալ: Մյուս կողմից նշված ցուցանիշներից մի քանիսը 33 տեղական ինքնակառավարման համակարգի համար կիրառական նշանակություն չունեն, օրինակ՝ 6-րդ

ցուցանիշը, քանի որ ՀՀ տեղական ինքնակառավարման բյուջեներ հատուկ հարկային ռեժիմներով մուտքեր նախատեսված չեն:

Հարկ ենք համարում նշել, որ յուրաքանչյուր գործընթացի արդյունավետության գնահատումը բավականին բարդ է, և տեղական ինքնակառավարման գործում բյուջետավորման գործընթացի արդյունավետությունը կարող է իր անմիջական ազդեցությունը թողնել համայնքների զարգացման վրա: Սակայն պետք է նշել, որ արդյունավետությունն ինքնին հանդիսանալով ամբողջական կատեգորիա, ենթադրում է համակարգի մյուս բոլոր տարրերի սինխրոնիզացված արդյունավետ գործունեություն: Այդ իսկ պատճառով համայնքների զարգացման գործում չենք կարող ժխտել մյուս գործոնների ազդեցությունը:

Համայնքային ծրագրերի իրականացման առումով կարևորվում են ֆինանսական պաշարները, քանի որ դրանց առկայությամբ են պայմանավորված թե՛ մարդկային պաշարների կարողությունների ամրապնդումը և թե՛ տեխնիկական միջոցների ու ենթակառուցվածքների նորացումը: Համայնքի ֆինանսական պաշարների գնահատման նպատակը համայնքի բյուջեի եկամուտների կանխատեսումն է և ծախսերի կատարման հնարավորությունների բացահայտումը:

Հատկապես կարևորվում է սեփական եկամուտների գնահատումը, քանի որ դրանց հավաքագրման հիմնական պատասխանատուն ՏԻՄ-երն են, իսկ բյուջետավորման գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է եկամուտների հավաքագրման և դրանց կանխատեսման մակարդակով:


Հարկային եկամուտների գնահատման համար չափազանց կարևոր է *հարկային բազայի ճշգրտումը և հարկային եկամուտների ծավալների որոշումը*: Համայնքի հարկային եկամուտներն այնպիսին են, որ դրանց ծավալները հնարավոր է որոշել առավել ճշգրտությամբ: Հարկային եկամուտների ծավալների որոշումից հետո անհրաժեշտ է պարզել դրանց փաստացի հավաքագրման վիճակը, մկատվող միտումները և առկա թերությունները: Նման ձևով ուսումնասիրվում և գնահատվում են տեղական տուրքերն ու վճարները, հողի և գույքի վարձակալական վճարները և մյուս եկամտատեսակները: Համայնքի ֆինանսական պաշարների գնահատմամբ կատարվում է բյուջեի եկամուտների կանխատեսում՝ ըստ առանձին եկամտատեսակների: Համայնքի բյուջեի եկամուտների կանխատեսումը նշանակում է հաջորդ ֆինանսական տարում ակնկալվող եկամուտների չափերի հաշվարկում և փաստում: Հայտնի են բյուջեի եկամուտների կանխատեսման տարբեր մեթոդներ, որոնց թվում կան ինչպես պարզ, այնպես էլ համակարգչային բարդ ծրագրեր պարունակող մեթոդներ: Դրանցից գործնականում ավելի շատ կիրառվողը *տնտեսական միտումների վերլուծության* մեթոդն է, որը կարող է օգտագործվել համայնքի բյուջեի եկամուտների մեծ մասի կանխատեսման նպատակով: Այն հիմնվում է նախորդ տարիների (3-5) բյուջեի եկամուտների վերաբերյալ տվյալների, ցուցանիշների և տնտեսական պայմանների վերլուծության վրա: Դրանց արդյունքում



բացահայտվում են եկամուտների փոփոխությունների միտումները: Բյուջեի եկամուտների կանխատեսման ժամանակ հաշվի են առնվում միտումների վրա ազդող այնպիսի գործոններ, ինչպիսին են եկամտային բազայում սպասվող փոփոխությունները, հարկերի, տուրքերի ու վճարների դրույքաչափերի փոփոխությունները, եկամուտների հավաքագրման վարչարարության փոփոխությունները, ժողովրդագրական փոփոխությունները և բնակչության կենսամակարդակի ու ծառայությունների պահանջարկի փոփոխությունները: Պաշտոնական տրանսֆերտների կանխատեսումը կարելի է կատարել միայն գործող օրենսդրության ընձեռած հնարավորությունների շրջանակում, որը, որպես կանոն, լինում է սահմանափակ: Համայնքի իրավիճակի վերաբերյալ մանրամասն տեղեկությունների հավաքագրման ու վերլուծության, առկա պաշարների գնահատման ու կանխատեսման արդյունքում հստակեցվում են համայնքի ուժեղ ու թույլ կողմերը և առանձնացվում են համայնքի առջև ծառայած ռազմավարական հիմնահարցերը:

Հարկ ենք համարում նշել, որ Հայաստանում համայնքների եկամուտների և ծախսերի կանխատեսման և կառավարման հիմնահարցերը գտնվում են ավելի ցածր մակարդակում, քան պետական բյուջեի եկամուտների ու ծախսերի կանխատեսման և կառավարման հիմնահարցերը: Այդ է վկայում նաև, որ յուրաքանչյուր տարի թարմացվում և վերահաշվարկվում են Միջնաժամկետային ծախսերի ծրագրում (ՄԺԾ) [5] ընդգրկված հիմնական ցուցանիշները, դրանք կանխատեսվում են միջինաժամկետ ժամանակահատվածի համար և ուղեցույց են հանդիսանում յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի նախագիծը կազմելիս: Համայնքներում, որպես այդպիսի ծրագիր հանդես է գալիս եռամյա զարգացման ծրագիրը, սակայն եռամյա զարգացման ծրագրերում համայնքների կատարած կանխատեսումները ոչ բոլոր դեպքերում են իրատեսական, ինչպես նաև իրագործելի: Այն ամենը, ինչ պետք է դրված լինի եռամյա զարգացման ծրագրի հիմքում, այսինքն՝ ապահովի ծրագրային ցուցանիշների հիմնավորվածությունը, դրանց հավաստիորությունը, իրագործելիությունը և այլն, ոչ միշտ է հնարավոր լինում ապահովել:

Հաշվի առնելով այն, որ *տնտեսական միտումների վերլուծության* մեթոդն լայն կիրառությունն ունի համայնքների եկամուտների կանխատեսման գործընթացում, ինչպես կանխատեսված եկամուտների հետագա ծախսման ուղղությունների բացահայտման գործում, այնպես էլ հարկային եկամուտների հավաքագրման տեսանկյունից, հարկ ենք համարում վերլուծությունն իրականացնել այդ մեթոդի հիման վրա:



**Գծանկար 1. Համայնքի հարկերի միտումների կանխատեսում**

Օրինակ, օգտվելով լոգարիթմական հավասարումներից, փորձել ենք ներկայացնել համայնքների եկամուտների աճի միտումները, իսկ կիրառելով արտաբևեռացման մեթոդը, ստացել ենք նաև ընդհանուր հարկային եկամուտների, գույքահարկի և հողի հարկի կանխատեսվող մուտքերը 2008-2010 թթ. դրությամբ: Այստեղ բավականին հետաքրքիր պատկեր է տիրում գույքահարկի ուղղությամբ կատարվող կանխատեսումներում, և այն մոտենում է 8 միլիարդ դրամի սահմանին, իսկ ինչ վերաբերում հողի հարկին, ապա 2009 թվականին, ըստ կանխատեսման տվյալների, այն կգերազանցի 2 միլիարդ դրամի սահմանագիծը:

Այս մեթոդաբանությունը կիրառելով՝ յուրաքանչյուր համայնք կարող է իր համար մշակել նաև սցենարներ, որոնք սովորաբար մշակվում են տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից՝ հնարավոր իրադարձությունների զարգացման ամպլիտուդը պատկերացնելու համար: Այս ամենը կօգնի անորոշության պայմաններում առավել ճկուն կողմնորոշվել, որը ռիսկերից խուսափելու լավագույն եղանակն է:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «ՀՀ Սահմանադրություն», Եր., «Ամարաս», 2000թ.:
2. A comprehensive evaluation of local government performance in Ukraine and Russian cities 202 pg.
3. Practice for Effective Local Government Management, (ICMA – International City/Country Management Association), 2001.
4. Delivering public services in CEE countries: Trends and developments, Cracow, Poland, 25-27 April, 2002, 208-209 pg.
5. «ՀՀ 2006-2008 թվականների պետական միջինաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում N 777-Ն 11.07.2005թ. ՀՀ ՊՏ N 43 (415):

**SUREN TOROSYAN**

*Post-graduate Student of  
Public Administration Academy  
of the Republic of Armenia*

!

**MAIN PROBLEMS OF RISING EFFECTIVENESS OF  
BUDGETING PROCESS OF COMMUNITIES**

The article deals with communities' budgeting process effectiveness rising problems of the Republic of Armenia. We can mention that the development of local self-government system is connected with effective expenditure policy, regulation of tax field, rising tax gathering level, and at last with a problem of financial independence of local self-government bodies. The experience of local self-governance in Armenia shows that communities are quiet weak in financial terms. Further development of local self-governance system would be impossible without strengthening its financial sustainability and without effective budgeting processes and policy.

**ԱԼԲԵՐՏ ԲԱԲԱՅԱՆ**

*ՀՀ պետական կառավարման  
ակադեմիայի ասպիրանտ*

**ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱՇԽԱՐԻՎՅԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀՀ ՍՏԱՆՁՆԱԾ ՈՐՈՇ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ԸՆԹԱՑՔԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ**

Առևտրի համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ) համաձայնագրերը հանդիսանում են այժմյան բազմակողմ միջազգային առևտրի կարգավորման իրավական հիմքը: Դրանք ձևավորվել և ընդունվել են բանակցությունների Ուրուգվայ փուլի ընթացքում և ներառում են ԱՀԿ հիմնադրման Մարաքեշի համաձայնագիրը, նրա հավելվածները (ապրանքների առևտրի բազմակողմ-պարտադիր համաձայնագրեր, ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագիր, մտավոր սեփականության՝ առևտրին առնչվող իրավունքների հայեցակետերի մասին համաձայնագիր, վեճերի կարգավորման կանոններն ու ընթացակարգեր, առևտրային քաղաքականության վերաբերյալ գործակառույց, բազմակողմ-կամավոր համաձայնագրեր), ինչպես նաև նախարարական հայտարարագրերը և որոշումները:

ԱՀԿ անդամակցության ընթացքում երկիրն ստանձնում է որոշակի պարտավորություններ: Կարելի է առանձնացնել երկու գլխավոր ուղղություն. առաջին՝ պարտավորություններ, որոնք կապված են ազգային օրենսդրությունը ԱՀԿ դրույթներին և պահանջներին համապատասխանեցնելուն, երկրորդ՝ դա համաձայնություն է՝ անհատական պարտավորություններ են ապրանքների և ծառայությունների շուկաների մատչելիության վերաբերյալ:

**Մաքսատուրքեր**

Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագիրը (այսուհետ՝ ՄԱԳՀ), որով ստեղծվել է ԱՀԿ-ն, սահմանում է անդամ պետությունների համար ապրանքների առևտրի հիմնական կանոնները: Դրանց հիմքում ընկած է ազգերի առավել բարենպաստության մոտեցումը: Ըստ դրա, անդամ պետությունները չեն կարող խտրականություն կիրառել իրենց առևտրային գործընկերների նկատմամբ: Որևէ պետության, այլ երկրի համար հատուկ արտոնություններ սահմանելով (օրինակ՝ ցածր մաքսատուրքեր այդ երկրից ներմուծվող որոշակի արտադրատեսակների համար) ստիպված կլինի այդ արտոնությունները տարածել ԱՀԿ բոլոր անդամ պետությունների վրա:

Հայաստանում ներմուծումների նկատմամբ նույնպես կիրառվում է ազգերի առավել բարենպաստության ռեժիմ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ երկկողմ առևտուրը կարգավորվում է ազատ առևտրի համաձայնագրերով: Նշված համաձայնագրերը կազմում են ազգերի առավել բարենպաստության մոտեցումից հիմնական բացառությունը, որը ևս ամրագրված է ՄԱԳԳ-ում:

Համաձայն ԱՀԿ շրջանակներում ստանձնած մաքսատուրքերի դրույքաչափերին վերաբերող իր պարտավորություններին՝ Հայաստանը պետք է սահմանի ոչ ավել, քան 8.5 % մաքսատուրքի միջին սահմանային դրույքաչափ՝ ներառյալ 14.7 %՝ գյուղատնտեսական ապրանքների, և 7.5 %՝ արդյունաբերական ապրանքների համար (**տես աղյուսակ 1**): Մինչև ժամանակ պետք է նշել, որ Հայաստանը տարիներ ի վեր կիրառում է մաքսատուրքի շատ ավելի ցածր դրույքաչափեր, քան ԱՀԿ-ի կողմից սահմանված առավելագույն շեմը: Հայաստանի մաքսատուրքի միջին գործող դրույքաչափը կազմում է ընդամենը 3%: Մաքսատուրքի միջին դրույքաչափի ցածր մակարդակը պայմանավորված է նրանով, որ Հայաստանը կիրառում է միայն երկու մաքսատուրքի դրույքաչափ՝ 0 %՝ կիրառվող ավելի քան 70 % մաքսային գծերի նկատմամբ, և 10 %՝ մնացածի նկատմամբ:

**Աղյուսակ 1**

**Մաքսատուրքի դրույքաչափերի մասով ԱՀԿ շրջանակներում Հայաստանի ստանձնած պարտավորությունները.**

	Ընդհանուր	Գյուղատնտեսական ապրանքներ	Արդյունաբերական ապրանքներ
Պարտավորություններով սահմանված միջին դրույքաչափ	8.5%	14.7%	7.5%
Փաստացի գործող միջին դրույքաչափ	3.0%	7.9%	2.3%

Ինչ վերաբերում է Հայաստանից արտահանողների համար շուկայի մուտքի ապահովմանը, ապա հարկ է նշել, որ Հայաստանն ունի ազգերի առավել բարենպաստության ռեժիմ ԱՀԿ մնացած անդամ պետություններից: Հայաստանն ունի նաև ազատ առևտրի ռեժիմ ԱՊՀ երկրների հետ, ինչը չի հակասում ԱՀԿ կանոններին: Ի լրումն, հայկական ապրանքները կարող են օգտվել Եվրամիության՝ Արտոնությունների ընդհանրացված համակարգի (Generalized System of Preferences) շրջանակներում նախատեսված նվազեցված մաքսատուրքերի դրույքաչափերից: Ոչ Եվրամիության, ոչ էլ ԱՀԿ անդամ պետությունները չեն

սահմանում Հայաստանից ներմուծումների նկատմամբ որևէ պաշտպանական միջոցառումներ:

### **Առևտրի տեխնիկական խոչընդոտներ**

Առևտրի դյուրինացումը կարող է սահմանվել որպես «առևտրային գործընթացների բարդությունը և դրա հետ կապված ծախսերը նվազեցնող համապարփակ և ընդհանուր մեթոդ»: Դրա նպատակն է նվազեցնել մատակարարման միջազգային շղթայի հետ կապված ծախսերը, մասնավորապես հենց միջսահմանային փուլում: Բարդեցված և ոչ անհրաժեշտ փաստաթղթերը, ինչպես նաև արտահանման և ներմուծման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջները և մաքսային սահմանը հատելու հետ կապված ձգձգվող ընթացակարգերը խոչընդոտներ են ստեղծում առևտրի միջազգային հոսքերի համար: Հաշվի առնելով նաև, որ մաքսատուրքերը կրճատման միտում ունեն, թեժանում են մտահոգություններն առ այն, որ արտահանման և ներմուծման հետ կապված ընթացակարգերը կարող են ստեղծել կամ ներկայացնել լրացուցիչ ոչ սակագնային խոչընդոտներ:

Գոյություն ունի առևտրի դյուրինացման հետ կապված երկու խնդիր. առաջին՝ մաքսային համակարգերի և ընթացակարգերի բազմազանություն, և երկրորդ՝ մեծ քանակությամբ իրավական փաստաթղթեր ու արտահանողներին և ներմուծողներին ներկայացվող փաստաթղթային պահանջներ: Երկու խնդիրն էլ, այսինքն՝ բազմազան փաստաթղթերը և տվյալների նկատմամբ չափազանց շատ պահանջները, այդ թվում նաև սահմանն անցնելու հետ կապված ձանձրալի ընթացակարգերը մեծ խոչընդոտներ են առաջացնում ապրանքների տեղաշարժի համար: Դրանք հանգեցնում են արտահանողների և ներմուծողների համար հավելյալ ծախսերի ու ուշացումների, և վնաս են հասցնում կառավարությունների տնտեսական շահերին, մասնավորապես զարգացող երկրների կառավարությունների տնտեսական շահերին:

Ըստ տարբեր գնահատումների՝ առևտրի ընթացակարգերի վրա կատարվող ծախսերը կազմում են առևտրի ընդհանուր արժեքի մոտավորապես 4-5%-ը: Մի շարք ուսումնասիրությունների արդյունքում միաժամանակ ճանաչվել է առևտրի դյուրինացման արդյունքում ստացվող հնարավոր օգուտների ծավալը, որը բոլոր երկրների համար կարող է լինել փոխշահավետ խնդիր: Մասնավորապես, զարգացող երկրները հակված են մեծապես շահել նման ջանքերից: Օրինակ՝ համաձայն Միավորված ազգերի կազմակերպության գնահատմանը՝ առևտրի դյուրինացման արդյունքում հնարավոր է խնայել մոտ 490 մլրդ ԱՄՆ դոլար [1]:

***Առևտրի դյուրինացման ընթացիկ կարգավիճակը ԱՀԿ բանակցությունների Դոհայի փուլում***

1996 թ. Սինգապուրում կայացած նախարարական համաժողովում առևտրի դյուրինացումն առաջին անգամ դարձել է ԱՀԿ աշխատանքային ծրագրի մի մաս, երբ նախարարները հանձնարարեցին ԱՀԿ Ապրանքների առևտրի խորհրդին նախաձեռնել հետազոտական և վերլուծական աշխատանք տվյալ հարցի շուրջ: 2001 թ.՝ Դոհայի նախարարական համաժողովի ավարտին, նախարարները համաձայնության եկան առևտրի դյուրինացման շուրջ բանակցություններ վարել, պայմանով, որ հինգերորդ նախարարական համաժողովի ընթացքում հետագա բանակցությունների անցկացման համար մոտեցումների շուրջ ձեռք կբերվի ընդհանուր փոխհամաձայնություն: Բացի դրանից, նախարարները համաձայնության եկան, որ նախքան հինգերորդ համաժողովը Ապրանքների առևտրի հարցերով խորհուրդը պետք է վերանայի և պատշաճ կերպով պարզաբանի և բարելավի ՄԱԳՅ-94-ի 5-րդ, 8-րդ և 10-րդ հոդվածների համապատասխան դրույթները [2]:

ԱՀԿ անդամ պետությունների կողմից հետագայում ներկայացվել են մի քանի առաջարկներ առ այն, թե ինչպես վերանայել, պարզաբանել և բարելավել ՄԱԳՅ-ի հոդվածները՝ ինչպես նախատեսված է Դոհայի հռչակագրի 7-րդ կետով: Իր առաջարկներում Եվրամիությունը ձգտել է ամբողջությամբ գործող դարձնել ՄԱԳՅ-ի 8-րդ հոդվածը (առևտրի դյուրինացման վերաբերյալ հիմնական հոդվածը), քանի որ, ըստ էության, այն չի ընդգրկում ոչ մի պարտադիր պարտավորություն ԱՀԿ անդամ պետությունների համար: ԱՀԿ քարտուղարության կողմից այս խնդիրների վերաբերյալ անդամ պետությունների ներկայացված առաջարկների ամփոփումը ևս վկայում է, որ գոյություն ունի լայն աջակցություն՝ ուղղված ՄԱԳՅ-ի հոդվածներում ընդհանուր պարտավորությունների ամրապնդման հարցում, ինչպես նաև հատուկ և տարբերակված մոտեցման, զարգացող երկրների համար տեխնիկական աջակցության և կարողությունների ստեղծման հարցերում: Չնայած այս ջանքերին, այնուամենայնիվ, ԱՀԿ անդամ պետություններին չի հաջողվել համաձայնության գալ առևտրի դյուրինացման խնդրի շուրջ 2003թ. Կանկանում կայացած հինգերորդ նախարարական համաժողովում, քանի որ այս խնդրի շուրջ քննարկումների ժամանակ գոյություն ունեին խորն անհամաձայնություններ գյուղատնտեսության, սինգապուրյան երեք այլ խնդիրների (ներդրումներ, մրցակցության պաշտպանություն և պետական գնումներ) շուրջ, ինչպես նաև այլ դժվարություններ՝ կապված Դոհայի օրակարգի հետ:

***Առևտրի դյուրինացման կարգավորումն ԱՀԿ շրջանակներում***

Առևտրի դյուրինացման վերաբերյալ դրույթներ ընդգրկված են ԱՀԿ մի շարք համաձայնագրերում, որոնցից հիմնականները հետևյալն են.



1. ՄԱԳՅ-1994 5-րդ հոդված (տարանցիկ փոխադրման ազատություն), 8-րդ հոդված (արտահանման և ներմուծման հետ կապված գանձումներ և ձևակերպումներ) և 10-րդ հոդված (առևտրի կանոնակարգերի հրատարակում և իրականացում)։
2. ՄԱԳՅ-94–ի 7-րդ հոդվածի իրականացման մասին համաձայնագիր (Մաքսային գնահատում),
3. «Ծագման կանոնների մասին» համաձայնագիր,
4. «Նախաառաքումային ստուգման մասին» համաձայնագիր,
5. «Ներմուծման լիցենզավորման ընթացակարգերի մասին» համաձայնագիր,
6. «Առևտրի տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագիր,
7. «Սանիտարական և բուսասանիտարական միջոցների մասին» համաձայնագիր,
8. «Մտավոր սեփականության՝ առևտրին առնչվող իրավունքների հայեցակետերի մասին» համաձայնագիր (ՄՍԱԱ)։

Քննարկենք ԱՅԿ վերոնշյալ համաձայնագրերից մի քանիսի շրջանակներում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները և անդրադառնանք կատարման ընթացքին։

ԱՅԿ-ին անդամակցելու ժամանակ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվեց իր օրենսդրությունը համապատասխանեցնել ԱՅԿ Առևտրի տեխնիկական խոչընդոտների մասին համաձայնագրին, ինչի հետևանքով 2004 թ. դեկտեմբերի 31-ից պարտադիր սերտիֆիկացման համակարգը փոխարինվեց կամավոր ստանդարտներով և միջազգային չափանիշների վրա հիմնված պարտադիր տեխնիկական կանոնակարգերով։ 2005 թ. ի վեր, ԳՕՍՏ ստանդարտները դարձան կամավոր, և այդպիսով այդ ոլորտի կարգավորման գործում առաջացան բացեր, քանի որ այդ պահին ընդամենը 50 ոլորտ կարգավորող պարտադիր տեխնիկական կանոնակարգեր էին հաստատվել, իսկ մնացած ոլորտները մնացին չկարգավորված։ Այնուհետև, Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատեց ևս 43 տեխնիկական կանոնակարգ, ինչի շնորհիվ վերոնշյալ բացերը նվազեցին։ Չնայած բոլոր այս բարեփոխումներին, ՀՀ օրենսդրությունում գոյություն ունի հակասություն «ԱՅԿ տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագրի պահանջներին։ «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ ստանդարտները կրում են կամավոր բնույթ, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց ցանկը կցվում է տեխնիկական կանոնակարգին։ Սա հակասում է նաև Եվրամիության մոտեցումներին, որոնց համաձայն անհրաժեշտ է հստակ տարանջատում անվտանգության պարտադիր պահանջներ սահմանող տեխնիկական կանոնակարգերի և դրանց կիրարկումն ապահովող կամավոր ստանդարտների միջև։

ԱՅԿ անդամակցության իր արձանագրությունում Հայաստանը պարտավորվել է կնքել հավաստագրերի փոխադարձ ճանաչման և համապատասխանության հավաստման միջազգայնորեն ճանաչված մարմինների որոշումների միակողմանի ճանաչման վերաբերյալ։ Ներ-

կայուն շայաստանը նման համաձայնագրեր ունի միայն ԱՊՀ երկրների և Իրանի հետ: Շայաստանը չունի ստորագրված որևէ բազմակողմ համաձայնագիր այս ոլորտում, և համապատասխանության հավաստման միջազգայնորեն ճանաչված մարմինների որոշումների միակողմանի ճանաչման ուղղությամբ որևէ որոշում դեռ չի ընդունվել: Միևնույն ժամանակ, շուկայական տնտեսությամբ զարգացած երկրները չեն համաձայնվում կնքել Շայաստանի հետ հավաստագրերի փոխադարձ ճանաչման համաձայնագրեր, քանի որ Շայաստանում գոյություն չունեն միջազգայնորեն ճանաչված կազմակերպություններ: Այնուամենայնիվ, Շայաստանի օրենսդրությամբ նախատեսվում է հնարավորություն եվրամիության «CE» նշանի միակողմանի ճանաչման համար, և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը ներկայումս քայլեր է ձեռնարկում այդ ուղղությամբ:

Կարևոր է անդրադառնալ նաև ԱՀԿ Մաքսային արժեքի գնահատման մասին համաձայնագրով սահմանված պահանջներին և Շայաստանի կողմից այդ պահանջների կատարմանը: Սակայն նախքան այդ համաձայնագրի քննարկմանն անցնելը, ներկայացնենք մի շարք տվյալներ Շայաստանի մաքսային համակարգի վերաբերյալ: Շայաստանի Հանրապետության մաքսային ծառայությանը (ներկայումս գործող ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կառուցվածքում) մի շարք միջազգային կազմակերպությունների կողմից տրված գնահատականները բավականին ցածր են: Օրինակ՝ Համաձայն Համաշխարհային բանկի՝ գործարարությամբ զբաղվելու դյուրինության համաթվի՝ [3] 2008թ. Շայաստանը զբաղեցրել է 44-րդ տեղը 181 երկրի շարքում, սակայն համաթվի հաշվարկման մեջ ընդգրկված մի շարք ցուցանիշներով Շայաստանը գտնվում է բավական ցածր հորիզոնականներում: 2008թ. համար Շայաստանը Համաշխարհային բանկի կողմից ցածր գնահատական է ստացել հարկերի վճարմանը և միջսահմանային առևտրին առնչվող խնդիրների համար: Ավելին, 2008թ. այս ցուցանիշներով Համաշխարհային բանկի կողմից Շայաստանին տրված գնահատականը էլ ավելի ցածր է, քան 2007թ.: Միջսահմանային առևտրի ցուցանիշն իր հերթին բաղկացած է մի շարք ցուցանիշներից: Այսպես, Շայաստանը ստացել է ցածր գնահատական [3] հատկապես արտահանման և ներմուծման ընթացակարգերի տևողության և դրանց հետ կապված ծախսերի համար: Շայաստանը 2008թ. արտահանման (30 օր) և ներմուծման (24 օր) ընթացակարգերի տևողության ցուցանիշներով զբաղեցրել է համապատասխանաբար 136-րդ ու 101-րդ տեղերը, իսկ արտահանման (յուրաքանչյուր կոնտեյների համար 1746 ԱՄՆ դոլար) և ներմուծման (յուրաքանչյուր կոնտեյների համար 1981 ԱՄՆ դոլար) հետ կապված ծախսերի ցուցանիշներով՝ համապատասխանաբար 143-րդ ու 146-րդ տեղերը: Այս ցուցանիշները, իրոք, ապացուցում են, որ մաքսային վարչարարության հետ Շայաստանը լուրջ խնդիրներ ունի: Հիմնականներից մեկն այն է, որ ՀՀ մաքսային ծառայության հիմնական գործառույթը դիտվում է ներմու-

ծումներից մաքսատուրքերի և անուղղակի հարկերի հավաքագրումն ու սահմանին վերահսկողությունը: Մաքսային համակարգը պետք է նման մոտեցումից անցում կատարի առևտրի դյուրինացմանը՝ հավասարակշռություն ապահովելով առևտրի անխափան հոսքերի և առողջության ու անվտանգության ապահովմանն ուղղված անհրաժեշտ վերահսկողության միջև: Նման հավասարակաշռության հասնելու ձևերից մեկը կարող է լինել մաքսային արժեքի գնահատման համար Հայաստանում օգտագործվող կողմնորոշիչ գների ցուցակների վերացումը: Նշված գները հակասություն ունեն ԱՀԿ Մաքսային արժեքի գնահատման մասին համաձայնագրի հետ, սակայն դրանք լայնորեն կիրառվում են Հայաստանում: Այնուամենայնիվ, նշենք, որ Հայաստանի մաքսային օրենսգիրքը լիովին համապատասխանում է ԱՀԿ նշված համաձայնագրին, սահմանելով, որ հայտարարագրված մաքսային արժեքը պետք է լինի առաջին եղանակը (գործաքի արժեք) ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու համար:

Խոսելով առևտրի դյուրինացման ոլորտում ԱՀԿ-ի կողմից սահմանված պահանջների մասին՝ հարկ է հիշատակել նաև ԱՀԿ Մտավոր սեփականության՝ առևտրին առնչվող իրավունքների հայեցակետերի մասին համաձայնագիրը (ՄՍԱԱ): ԱՀԿ-ին անդամակցության պահից Հայաստանի Հանրապետությունը պարտավորվեց ապահովել իր օրենսդրության համապատասխանությունը նշված համաձայնագրին առանց որևէ անցումային ժամանակաշրջանի: Այդ ժամանակ ՀՀ կառավարությունը նախաձեռնեց օրենսդրության բարեփոխման լայնածավալ ծրագիր՝ նպատակ հետապնդելով համապատասխանեցնել ՀՀ օրենսդրական և կարգավորիչ շրջանակը մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության միջազգային կանոններին՝ մասնավորապես ՄՍԱԱ համաձայնագրին: Ընդունվեցին այս ոլորտը կարգավորող մի շարք օրենքներ, ինչպես նաև փոփոխություններ և լրացումներ կատարվեցին ՀՀ քրեական և մաքսային օրենսգրքերում՝ արտացոլելով ՄՍԱԱ համաձայնագրի պահանջները: Կարելի է ասել, որ ՀՀ օրենսդրությունն ամբողջությամբ համապատասխանում է ԱՀԿ այս համաձայնագրին, սակայն ակնհայտ է, որ մտավոր սեփականության պաշտպանության վերաբերյալ օրենսդրության կիրարկման հարցում կան բացեր: Մասնավորապես, Սեփականության իրավունքի միջազգային համաթվի համաձայն [4], մտավոր սեփականության պաշտպանության առումով Հայաստանը 115 երկրների շարքում զբաղեցնում է վերջին տեղը: Ուստի, կարելի է ենթադրել, որ ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության կառուցվածքում գործող Մտավոր սեփականության ոլորտում հանցագործությունների դեմ պայքարի բաժինը չի կարողանում ապահովել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

### **Ծառայություններ**

ԱՀԿ Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագիրը (ԾԱԳՀ) ընդգրկում է ծառայությունների առևտրի սահմանումը, որը լայ-

նորեն կիրառվում է առևտրի մասին տարբեր համաձայնագրերում, ԱՀԿ անդամ պետությունների համար մի շարք ընդհանուր և հատուկ պարտավորություններում, ինչպես նաև պարունակում է դրույթներ ծառայությունների առևտրի հետագա ազատականացման մասին: ԾԱԳՀ-ի հոդված 1:2-ը ներկայացնում է ծառայությունների առևտրի չորս տեսակները (տե՛ս աղյուսակ 2):

**Աղյուսակ 2**

**Ծառայությունների առևտրի տեսակները՝ սահմանված ԾԱԳՀ-ով**

Տեսակ	Ծառայության անվանում	Նկարագրություն
1.	Անդրսահմանային մատուցում	Ծառայությունը տրամադրվում է մեկ անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք (օրինակ՝ հեռահաղորդակցության, փոստային ծառայությունների կամ համակարգչային սկավառակների միջոցով մատուցվող ծառայություններ):
2.	Սպառումն արտերկրում	Ներառում է ծառայության մատակարարում մի անդամ պետության տարածքում մեկ այլ անդամ պետության սպառողին (օրինակ՝ զբոսաշրջություն, կրթական ծառայություններ և նավերի վերանորոգման ծառայություններ):
3.	Առևտրային ներկայություն	Ծառայության մատուցում օտարերկրյա մատուցողի առևտրային ներկայության միջոցով, ինչպես օրինակ՝ կորպորացիա, գրասենյակի մասնաճյուղ կամ համատեղ ընկերություն (օրինակ՝ բանկային կամ հեռահաղորդակցության ծառայություններ):
Բացի այդ, դիրեկտիվը նպատակ ունի ներդաշնակեցնել նշանակալից մասնակցության ձեռքբերման և գնահատման չափանիշների և ընթացակարգերի վերաբերյալ կանոնները: Արժեթղթերի, այդ թվում՝ բաժնետոմսերի ձեռքբերման դեպքում բաժնետերերի և տնօրենի կողմից նախատեսված չափանիշներին համապատասխան պատշաճ գնա-

հատման իրականացումը պետք է համաձայնեցվի նաև իրավասու մարմնի հետ: Այդ չափանիշները հենվում են հետևյալ սկզբունքների վրա՝

➤ յուրաքանչյուր անձի վարկանիշը և փորձը, որը կապահովի ապահովագրական ընկերության գործունեության կառավարումը բաժնետոմսերի ձեռքբերումից հետո,

➤ պոտենցիալ ձեռքբերողի ֆինանսական կայունությունը,

➤ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման ուղղված գործողություն կամ դրա փորձի կատարման վերաբերյալ հիմնավոր կասկածի բացակայությունը:

Դիրեկտիվը նպատակ ունի նաև ուժեղացնել ներդրողների պաշտպանությունը՝ սահմանելով նվազագույն նորմեր ազգային իրավասու մարմնի լիազորությունների վերաբերյալ, որոնք առնչվում են դիրեկտիվի խախտման դեպքերի ուսումնասիրմանը և պատասխանատվության միջոցների կիրառմանը:

Դիրեկտիվը նախատեսում է պարտականություն՝ ապահովել շուկայի միասնականությունը և ապահովել կնքված գործարքների գրանցումը: Այն նախատեսում է նաև պարտականություն ապահովել նախաբանակցային գործընթացների թափանցիկությունը: Դիրեկտիվը, մասնավորապես, պարտավորեցնում է միջազգային գործարքներ կնքող օպերատորներին և շուկայի մասնակիցներին հրապարակել այն փոխարժեքի չափը, որի դեպքում նրանք համաձայն են իրականացնել առուվաճառք և մտնել քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ իրենց հաճախորդների հետ: Այս պարտականությունը չի տարածվում շուկայի միջին գնից ցածր արժեք ունեցող գործարքների վրա: Այսպես, օրինակ, եվրոպական մեծածախ շուկայի վրա չեն տարածվում նախաբանակցային գործընթացների թափանցիկության վերաբերյալ նորմերը:

Դիրեկտիվը նախատեսում է նաև մի շարք կառուցակարգեր օպերատորների պաշտպանության համար, իրենց կողմից միջազգային գործարքների կնքման ժամանակ փոխարկման դրույքաչափի հայտարարման ժամանակ, ինչը թույլ է տալիս վերջիններիս մատուցել իրենց հիմնական ծառայությունները հաճախորդներին առանց մեծ ռիսկերի դիմելու: Նրանք իրավունք ունեն, մասնավորապես, փոփոխել դրույքաչափը:

Դիրեկտիվը փոքր և միջին ներդրողների համար ստեղծում է նաև բարենպաստ շուկա: Այն մասնավորապես արգելում է ֆինանսական հաստատություններին կիրառել խտրականություն ներդրողների նկատմամբ՝ որոշներին առաջարկելով, օրինակ՝ մտնել շուկա հանրային հրապարակային գնից ավելի ցածր գնի վճարմամբ:

Դիրեկտիվը նպատակ ունի բարելավելու արժեթղթերի շուկան կանոնակարգող ԵՄ օրենսդրությունը: Մասնավորապես, դիրեկտիվով սահմանված պահանջները համարվում են պարտադիր անդամ պետությունների համար: Այս նպատակով ԵՄ հանձնաժողովի կողմից սահմանվել են հատուկ պահանջներ գործարքների կատարման, վե-

րանայման, հսկման և հաշվետվությունների ներկայացման համար, որի ժամանակ հաշվի են առնվել անդամ պետությունների շուկաների մասնակիցների կարծիքները և արժեթղթերի շուկան կարգավորող եվրոպական կոմիտեի կարծիքը:

Բացի վերոնշյալ դիրեկտիվից, Եվրամիության շրջանակներում մշակվում է նաև պատշաճ վարվելակերպի օրենսգիրք: Դրա մշակման և ընդունման նպատակն ունի ոչ այնքան իրավական, որքան քաղաքական ենթատեքստ: Մասնավորապես, շրջանառվում է, որ ներդրումները կարող են միջոց հանդիսանալ երրորդ պետությունների, հատկապես, Ռուսաստանի և Չինաստանի կողմից դրանք՝ որպես արտադրական և տեխնոլոգիական լրտեսության միջոց կիրառելու համար [5], ինչը կարող է խախտել և վատթարացնել շուկայի բնականոն գործունեությունը և ստեղծել խնդիրներ անդամ պետությունների և Եվրամիության անվտանգության ապահովման համար: Այս իրավիճակը կանխելու նպատակով, առաջարկվում է իրականացնել մի շարք միջոցառումներ՝

1. ուշադրություն դարձնել ներդրումային ֆոնդերի և ֆինանսական շուկայի թափանցիկության ապահովման հիմնախնդրին,
2. քննարկել կապիտալի և իրավաբանական անձանց հիմնադրման ազատ տեղաշարժի նկատմամբ հնարավոր բացառությունները, որոնք կիրառելի կլինեն օտարերկրյա ներդրողների նկատմամբ,
3. մշակել պատշաճ վարվելակերպի օրենսգիրք՝ ի շահ ներդրողների և ԵՄ անդամ պետությունների:

Որքան էլ այս կարծիքը բխի քաղաքական նկատառումներից, այն ունի նաև իրավաբանական նշանակություն օտարերկրյա ներդրողների իրավունքների իրականացման և պաշտպանության համար [6, p. 8-20]: Յետևաբար, թե պատշաճ վարվելակերպի օրենսգրքի մշակման, թե հետագա օրենսդրության ներդաշնակեցման ուղղված քայլերն իրականացնելիս պետք է հաշվի առնվեն օտարերկրյա ներդրողների իրավունքների պաշտպանության ապահովման խնդիրները: Ներդրումային ոլորտի ներդաշնակեցման ժամանակ հարկ է ուշադրություն դարձնել նաև ներդրումային իրավունքին հարող այլ իրավական իրավանորմերին, ինչը կնպաստի ոլորտի համապարփակ կարգավորմանը: Այս առումով, թերևս, հարկ է հաշվի առնել օտարերկրյա ներդրողների կորպորատիվ իրավունքները, քանի որ ներդրումային գործունեության գրեթե բոլոր փուլերում օտարերկրյա ներդրողի ներդրումային իրավունքների հետ սերտ փոխկապակցված են նրա կորպորատիվ իրավունքները [6, p. 27-30]: Ներդրումային և կորպորատիվ իրավունքների համատեղ քննարկման արդյունքում հնարավոր կլինի մշակել առավել արդյունավետ պաշտպանության կառուցակարգեր:

Ինչևէ, խոսելով Եվրամիության շրջանակներում ներդրումային գործունեության մասին, նշենք, որ ներդրումների միջոցով տնտեսության զարգացման ապահովման նպատակով, Եվրամիության մակար-

դակով ստեղծվել է ոչ միայն որոշակի իրավական համակարգ, այլև հիմնադրվել են ներդրումային ինստիտուտներ, ինչպիսին է՝ Եվրոպական ներդրումային բանկը (այսուհետ՝ ԵՆԲ) [7]: ԵՆԲ-ի հիմնական գործառույթն է աջակցել ներդրումային նախագծերի իրականացմանը Եվրոպական Միության տարածքում՝ փոխառությունների, վարկերի և երաշխիքների տրամադրմամբ: ԵՆԲ-ը ոչ առևտրային կազմակերպություն է:

Բացի այդ, Եվրոպական Միության շրջանակներում գործում է նաև Եվրոպական ներդրումային հիմնադրամը (այսուհետ՝ ԵՆՀ), որը ստեղծվել է 1994 թվականին փոքր և միջին բիզնեսի զարգացմանն աջակցելու համար: ԵՆՀ-ի բաժնետոմսերի մեծամասնության սեփականատերն է Եվրոպական ներդրումային բանկը: Եվրոպական ներդրումային հիմնադրամը, մասնավորապես, աջակցում է վեցնչուրային կապիտալով փոքր և միջին ձեռնարկություններին (ՓՄՁ), ինչպես նաև տրամադրում երաշխիքներ ֆինանսական հաստատություններին, օրինակ, բանկերին՝ նպաստելով ՓՄՁ-ների վարկերի մարմանը: Այն, այնուամենայնիվ, չի հանդիսանում վարկեր կամ սուբսիդիաներ տրամադրող կազմակերպություն: ԵՆՀ-ը չի կատարում ուղղակի ներդրումներ ձեռնարկություններում, սակայն, այն գործում է բանկերի և այլ ֆինանսական միջնորդ կազմակերպությունների միջոցով՝ օգտագործելով կամ իր սեփական միջոցները, կամ ԵՆԲ-ի, կամ էլ Եվրամիության միջոցները:

Այսպիսով, կատարված ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրակացնել, որ թեև ներդրումների ներգրավման հիմնախնդիրը կարևորվել է Եվրամիության կողմից, սակայն ներդրումային գործունեության կանոնակարգման ուղղված միջոցառումները Եվրամիությունում սկսել են իրականացվել հիմնականում վերջին քսան տարիների ընթացքում: Ընդ որում, իրականացրած ներդաշնակեցման և մոտարկման աշխատանքները միայն որոշակիորեն են կանոնակարգել ներդրումային գործունեությունը Եվրամիության մակարդակով: Մի շարք ներդրումային հարաբերություններ շարունակում են մնալ ԵՄ անդամ պետությունների օրենսդրության կանոնակարգման ներքո: ԵՄ օրենսդրությունից կարգավորմանը չենթարկված ներդրումային ոլորտների հետագա կանոնակարգման հեռանկարները կախված են ինչպես քաղաքական խնդիրներից, այնպես էլ ներդրումների ավելացման և ներդրողների շահերի պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացման անհրաժեշտությունից: Այս առումով, հարկ է նկատել, որ ԵՄ քաղաքական տրամադրվածությունն օտարերկրյա ներդրումների վերաբերյալ և օտարերկրյա ներդրողների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրը հայտվել են տարամիտված շահային բևեռներում: Մի կողմից՝ Եվրամիությունը շարունակում է ներդրումների ներգրավմանն ուղղված իր քաղաքականության իրականացումը: Այս մասին է վկայում Եվրոպական հանձնաժողովի նախագահ ժոզե Բարոսոյի հայտարարությունը, որի համաձայն՝ «Եվրոպան պետք է շարունակի մնալ օտարերկրյա ներդրողների համար բաց...»: Նրա կարծիքով օտարերկրյա ներդրողները ներարկում են կանխիկ միջոցներ և

նպաստում ֆինանսական շուկայի կայունության ապահովմանը [5]: Մյուս կողմից, սակայն, առաջարկվում է մշակել պատշաճ վարվելակերպի օրենսգիրք՝ ԵՄ անվտանգության դեմ ուղղված օտարերկրյա ներդրողների կողմից իրականացվելիք գործողությունների կանխման նպատակով: Թե՛ առաջին, թե՛ երկրորդ նպատակների իրականացման ժամանակ չի շեշտադրվում օտարերկրյա ներդրողների իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովման հիմնախնդիրը, ինչն առանձնակի կարևորվում է օտարերկրյա ներդրողների կողմից: Ավելին, չի շոշափվում օտարերկրյա ներդրողների ներդրումային իրավունքների և կորպորատիվ իրավունքների համատեղ կանոնակարգման խնդիրը: Յետևաբար, ներդրողների իրավունքների իրականացման և պաշտպանության տեսակյունից ներդաշնակեցմանն ուղղված քայլեր պետք է կատարել թե՛ ԵՄ ներդրումային և թե՛ ԵՄ կորպորատիվ իրավունքներում: Բացի այդ, պետք է հաշվի առնել, որ ներդրումային գործունեության ոլորտում իրավանորմների ներդաշնակեցումն իրականացվել է մասամբ և մնացել են ներդրումային հարաբերություններ, որոնք շարունակում են կարգավորվել ԵՄ անդամ պետությունների ազգային օրենսդրությամբ:

Ելնելով վերոնշյալ հանգամանքներից՝ առաջարկվում է Եվրոպական ներդրումային իրավունքում ներդաշնակեցման գործընթացները տարածել նաև այն հարաբերությունների վրա, որոնք շարունակվում են կարգավորվել ԵՄ անդամ պետությունների ազգային օրենսդրությամբ: Բացի այդ, առաջարկվում է ներդրումային ոլորտների կանոնակարգման ընթացքում հաշվի առնել նաև օտարերկրյա ներդրողների կորպորատիվ իրավունքներն ու շահերը, ինչը թույլ կտա ապահովել ներդրումների ներգրավվածության մակարդակը Եվրամիությունում և ապահովել օտարերկրյա ներդրողների իրավունքների արդյունավետ պաշտպանությունը:

## ԳՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

1. **Е.Г. Ефимова**, Экономика для юристов, “Флинта”, М, 2009, с. 493-494.
2. **С.Ю. Кашкин**, Право Европейского Союза, “Юристь”, М, 2003, с. 108.
3. <http://europa.eu/scadplus/leg/fr/lvb/124210.htm>, February 27, 2009.
4. [www.europa.eu](http://www.europa.eu), March 1, 2009.
5. <http://euractiv.com/en/financial-services/eu-presses-state-funds-good-conduct-code/article-170602>, March 10, 2009.
6. **D. D. Bradlow, A. Escher**, Legal Aspect of Foreign Direct Investment, “Kluwer Law International”, The Hague-London-Boston, 1999.
7. [www.eib.org](http://www.eib.org), March 3, 2009.

**ARPINE MELIKBEKYAN**

*Post-graduate Student of  
Public Administration Academy  
of the Republic of Armenia*

## **THE HARMONIZATION AND APPROXIMATION PROCESS OF THE INVESTMENT LAW IN THE EUROPEAN UNION**

The article discusses some problems of the EU Investment Law approximation and harmonization process for strengthening of the system of EU foreign investor rights protection.

First of all, it makes some critical remarks concerning the absence of the notion of EU unified and codified Investment Law.

Secondly, the article analyses the changes made in this field during last twenty years, in particular, adoption of EU legal instruments on Investment Law and the creation of institutions, like as European Investment Bank and European Investment Fund, which play important role in development of the field and support the small and medium-sized enterprises (SMEs).

Thirdly, the article analyses the important influence of the EU directive 2004/39/CE on Instruments of Financial Market adopted in 21<sup>st</sup> April, 2009 on EU Investment Law harmonization. It refers also to the Code of conduct and discusses some issues concerning the political and legal approaches for the adoption of the Code.

Finally, this article emphasis the importance of the protection of foreign investor rights in the European Union by harmonization and approximation not only the EU Investment Law, but also by unification and parallel analyze of the EU foreign investor corporate and investment rights.

The article attracts the attention on some essential problems of EU Investment Law and makes some useful purposes for the development of EU foreign investor rights protection system.

**ՀՈՎԱԵՓ ՀՈՎԱԵՓՅԱՆ**

*ՀՀ պետական կառավարման  
ակադեմիայի ասպիրանտ*

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ  
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ` ԸՍՏ ԼԻՍԱԲՈՆԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ**

Օրենսդրական գործընթացը եվրոպական Միությունում մեկ անգամ չէ, որ քննադատվել է՝ տարբեր մասնագետների կողմից մի շարք ընթացակարգերի առկայության, բարդության և անարդյունավետության պատճառաբանումներով [1, c. 102]: Լիսաբոնի համաձայնագրի մշակման ժամանակ գլխավոր խնդիրներից մեկն էլ օրենսդրական գործընթացի պարզեցումն էր:

Լիսաբոնի համաձայնագիրը նախատեսում է երկու խումբ ընթացակարգ՝ սովորական և հատուկ: Նույն մոտեցումը սահմանված էր նաև Միության սահմանադրության նախագծում [2, c. 53-54]:

Սովորական օրենսդրական ընթացակարգը նկարագրված է համաձայնագրի 239-րդ հոդվածում: Այն նախատեսվում է որպես ԵՄ հիմնական օրենսդրական ընթացակարգը և ենթակա է կիրառման դեպքերի մեծամասնությունում, իսկ մյուս ընթացակարգն ավելի շատ բացառություն է ընդհանուր կանոնից: Ըստ էության, բացի անվանումից, համատեղ որոշումների ընդունման ընթացակարգում որևէ էական փոփոխություններ չեն կատարվել:

Վերջին տարիներին համատեղ որոշումների ընդունման ընթացակարգն ամենատարածված և կարևորագույն օրենսդրականն էր Միությունում, որը կիրառվում էր գրեթե բոլոր հարցերով: Այս ընթացակարգը համեմատաբար նոր է և ամենաբարդը:

Համատեղ որոշումների ընդունման ընթացակարգում հաղթահարվել են որոշումների ընդունման մյուս ընթացակարգերին բնորոշ մի շարք հիմնական խնդիրներ [3, p. 168]:

Համատեղ որոշումների ընդունման ընթացակարգն առաջին անգամ նախատեսվեց 1992թ. Մասստրիխտի պայմանագրով [4] և տարածվում էր ընդամենը մի քանի ոլորտների վրա: Հետագայում այն հստակեցվեց, և նրա կիրառությունն ընդլայնվեց, ինչպես Ամստերդամի, այնպես էլ՝ Նիսի պայմանագրերով:

Լիսաբոնի պայմանագիրն էլ ավելի է ընդլայնում սույն ընթացակարգի կիրառությունը: Այն, կարելի է ասել, դառնում է ընդհանուր կանոն, իսկ մյուս ընթացակարգերը, որոնք միավորվում են հատուկ օրենսդրական ընթացակարգ անվանման տակ, ավելի շատ բացառություն են ընդհանուր կանոնից:



Համատեղ որոշումների ընդունման ընթացակարգն օրենսդրական գործընթացում էապես բարձրացրեց Միության ներկայացուցչական մարմնի՝ Եվրոպայի Խորհրդարանի դերը: Եվրախորհրդարանն առաջին անգամ հնարավորություն ստացավ Խորհրդի հետ հավասար հիմունքներով մասնակցել ԵՄ օրենսդրական ակտերի ընդունման գործընթացին՝ հանդիսանալով համաօրենսդիր: Մինչ այդ Եվրախորհրդարանն օրենսդրական գործընթացին մասնակցում էր միայն խորհրդատվական ծայնի իրավունքով, ինչը չէր համապատասխանում այս ինստիտուտի նշանակությանը:

Այս ընթացակարգի շրջանակներում Եվրախորհրդարանն օրենսդրական գործընթացին ակտիվորեն մասնակցում է հենց սկզբից, իսկ վերջնական փուլում կարող է նաև վճռորոշ դեր խաղալ [5, c. 56]: Որևէ մեկը չի կարող հարկադրել Եվրախորհրդարանին ընդունել ակտն առանց իր կողմից ընդունելի ուղղումների [6, p. 51]:

Կարելի է նշել, որ համատեղ որոշումների ընդունման ընթացակարգը Միությունում նպաստեց ժողովրդավարական մոտեցումների աճին:

Համատեղ որոշումների ընդունման ընթացակարգը փոխզիջման արդյունք է, որը մի կողմից կոչված է ժողովրդականացնել ԵՄ օրենսդրական գործընթացը Եվրախորհրդարանի դերի ուժեղացման միջոցով, մյուս կողմից էլ պահպանել Խորհրդի՝ որպես ԵՄ ավանդական օրենսդրի դերը: Թերևս սա է հանգեցրել այս ընթացակարգի այդչափ խճճվածությանը [7, c. 374]: Այս կապակցությամբ մեկ անգամ չէ, որ քննարկվել է սույն ընթացակարգը՝ ինչպես կարելի է միաժամանակ և՛ պարզեցնել, և՛ արագացնել:

Այս ընթացակարգն անցել է 3 ընթերցում: Ընդ որում, օրենսդրական գործընթացը կարող է ավարտվել փուլերից յուրաքանչյուրում: Այսինքն՝ պարտադիր չէ, որ ընթացակարգը պարտադիր կերպով անցնի բոլոր 3 ընթերցումները<sup>1</sup>:

Հանձնաժողովը<sup>2</sup>, մշակելով որոշման նախագիծը, այն միաժամանակ ուղարկում է և՛ Խորհրդին, և՛ Եվրոպական Խորհրդարանին:

Եվրախորհրդարանը, դիտարկելով նախագիծը, ընդունում է իր եզրակացությունը, որն ուղարկում է Խորհրդին: Մինչ Խորհրդարանի կողմից որոշում կայացնելը, որոշման նախագիծը դիտարկվում է համապատասխան խորհրդարանական հանձնաժողովներում, որոնք կարող են ներկայացնել իրենց դիտողություններն ու առաջարկություն-

<sup>1</sup> Վիճակագրական տվյալները փաստում են, որ դեպքերի մոտ 25%-ում նորմատիվ ակտերն ընդունվում են առաջին ընթերցմամբ: Առավել հաճախ՝ դեպքերի 50%-ից ավելիի պարագայում, ակտերն ընդունվում են երկրորդ ընթերցման արդյունքում: Իսկ մնացած 25%-ի դեպքում էլ գործը հասնում է համաձայնեցման հանձնաժողովի:

<sup>2</sup> Հանձնաժողովին պատկանում է օրենսդրական նախաձեռնության գրեթե բացառիկ իրավունքը: Մյուս ինստիտուտներին և մարմիններին օրենսդրական նախաձեռնության իրավունք տրամադրվում է միայն առանձին դեպքերում:

ները: Խորհրդարանը կարող է հավանություն տալ որոշման նախագծին: Այս դեպքում Խորհրդի կողմից նախագծի հաստատման դեպքում որոշումը համարվում է ընդունված:

Եվրախորհրդարանը կարող է նաև համապատասխան ուղղումներ առաջարկել որոշման նախագծում կամ այլ ձևով արտահայտել իր անհամաձայնությունն օրինագծին: Խորհուրդը կարող է ձայների որակյալ մեծամասնությամբ հավանություն տալ Խորհրդարանի առաջարկած ուղղումներին: Այս դեպքում օրենսդրական ակտը կհամարվի ընդունված:

Խորհուրդը Խորհրդարանի առաջարկած ուղղումների հետ համաձայն չլինելու և ակտը չհաստատելու դեպքում արտահայտում է իր դիրքորոշումը, որն ուղարկվում է Եվրախորհրդարանի քննարկմանը՝ միաժամանակ նշելով դրա պատճառների մասին: Միևնույն ժամանակ հանձնաժողովը Եվրախորհրդարանին տեղյակ է պահում առաջարկված ուղղումների վերաբերյալ իր դիրքորոշման մասին, ինչը կարևոր նշանակություն ունի:

Այս բոլոր գործողությունները կազմում են առաջին ընթերցումը (Լիսաբոնի համաձայնագրի հոդված 239, կետ 3-6):

Երկրորդ ընթերցման ժամանակ Եվրախորհրդարանը քննարկում է Խորհրդի ընդունած դիրքորոշումը (Լիսաբոնի համաձայնագրի հոդված 239, կետ 7-9):

Խորհրդարանը կարող է հավանություն տալ դիրքորոշմանը կամ որոշում չկայացնել վերջինիս կապակցությամբ: Այս դեպքում որոշումը համարվում է ընդունված Խորհրդի կողմից ձևակերպված դիրքորոշման տեքստի շրջանակներում: Որպես կանոն, այս փուլում Խորհրդարանը Խորհրդի դիրքորոշմանը հավանություն է տալիս ոչ վիճահարույց և շտապ դեպքերում:

Խորհրդարանը կարող է նաև մերժել Խորհրդի ընդունած դիրքորոշումը: Այս դեպքում որոշման նախագիծը մերժվում է, և օրենսդրական գործընթացն այսքանով ավարտվում է:

Վերջապես Խորհրդարանը կարող է նաև ուղղումներ առաջարկել: Այդ ուղղումներն ուղարկվում են ինչպես Խորհրդին, այնպես էլ Հանձնաժողովին, որոնք պարտավոր են ներկայացնել իրենց եզրակացությունը դրանց կապակցությամբ:

Եթե Խորհրդարանի ուղղումները ստանալուց հետո՝ 3 ամսվա ընթացքում, Խորհուրդը ձայների որակյալ մեծամասնությամբ ընդունում է դրանք, որոշումը համարվում է ընդունված Եվրախորհրդարանի առաջարկած տեքստով: Եթե Խորհրդարանի առաջարկած առանձին ուղղումների կապակցությամբ Հանձնաժողովն ունի բացասական դիրքորոշում, ապա Խորհուրդը որոշումը պետք է կայացնի միաձայն:

Եթե Խորհրդարանի ուղղումները մերժվում են Խորհրդի կողմից կամ ընդունվում են մասամբ, Խորհրդի նախագահը և Եվրախորհրդարանի նախագահը պետք է համատեղ ջանքեր գործադրեն համաձայնեցված որոշման կայացման համար: Այդ նպատակով ստեղծվում է

համաձայնեցման հանձնաժողով, որը կոչված է հարթելու 2 օրենսդիրների միջև առկա տարաձայնությունները: Համաձայնեցման հանձնաժողովի խնդիրն է որոշման նախագծի այնպիսի տեքստի մշակումը, որը կբավարարի 2 կողմերի շահերն էլ:

Այս հանձնաժողովի կազմավորման կարգը մանրամասն կարգավորվում է միջինստիտուցիոնալ համաձայնագրերով, որոնք կնքվում են Խորհրդի, Եվրախորհրդարանի և Հանձնաժողովի միջև, ինչպես նաև Խորհրդարանի ներքին կանոնակարգով: Հանձնաժողովը կազմված է Խորհրդի անդամներից կամ նրանց ներկայացուցիչներից և վերջիններիս հավասար թվով Եվրախորհրդարանի պատգամավորներից<sup>1</sup>:

Համաձայնեցման հանձնաժողովի նիստերին մասնակցում են նաև Եվրահանձնաժողովի ներկայացուցիչները: Եվրոպական Հանձնաժողովը կոմիտեի աշխատանքներին մասնակցում է հատուկ կարգավիճակով, որի նպատակն է քննարկվող հարցի վերաբերյալ ներկայացնել այնպիսի օրենսդրական առաջարկություններ, որոնք կնպաստեն և կաջակցեն քննարկվող խնդրի վերաբերյալ ընդհանուր համաձայնության ձեռքբերմանը: Փաստորեն, գործընթացի այս փուլում Եվրահանձնաժողովը հիմնականում իրականացնում է հաշտեցման գործառույթ և օժանդակում է ԵՄ օրենսդրական գործընթացի որքան հնարավոր է արդյունավետ իրականացմանը:

Համաձայնեցման հանձնաժողովը պետք է ձևավորվի որոշման կայացումից հետո՝ 6 շաբաթվա ընթացքում և դրանից հետո 6 շաբաթվա ընթացքում պարտավոր է քննարկել ընդհանուր տեքստի հաստատման վերաբերյալ հարցը: Առանձին դեպքերում այդ ժամկետը կարող է երկարացվել ևս 2 շաբաթով:

Եթե ընդհանուր տեքստը հաջողվում է մշակել, այն ենթակա է հաստատման և՛ Խորհրդի, և՛ Եվրոպական Խորհրդարանի ներկայացուցիչների կողմից առանձին-առանձին: Ընդ որում, այս փուլում կարող են նաև նոր նյութեր ներկայացվել: Համաձայնեցման հանձնաժողովում Եվրախորհրդարանի ներկայացուցիչներն որոշումը կայացնում են ձայների պարզ, իսկ Խորհրդի անդամները՝ որակյալ մեծամասնությամբ:

Նման հանձնաժողովների ստեղծում նախատեսված է երկպալատ Խորհրդարան ունեցող մի շարք պետություններում՝ օրինակ՝ ՌԴ-ում, Ֆրանսիայում և այլուր [8, c. 338]:

Երրորդ ընթերցման ժամանակ և՛ Խորհրդարանում, և՛ Խորհրդում քննարկվում է համաձայնեցման հանձնաժողովի կողմից հավանության արժանացած ընդհանուր նախագիծը (Լիսաբոնի համաձայնագրի հոդված 239, կետ 13): Ընդ որում, այս փուլում համաձայնեցված

<sup>1</sup> Համաձայնեցման հանձնաժողովում Խորհուրդը դեպքերի մեծամասնությունում ներկայացնում են Coreper-ի ներկայացուցիչները: Ինչ վերաբերում է Եվրախորհրդարանին, ապա նրա 3 փոխնախագահներ հանդիսանում են համաձայնեցման հանձնաժողովի մշտական անդամներ: Եվրախորհրդարանի մնացած ներկայացուցիչները նշանակվում են քաղաքական խմբավորումների կողմից:

տեքստը պետք է կան ընդունվի, կան էլ մերժվի, որևէ ուղղումներ առաջարկվել չեն կարող:

Եթե սահմանված ժամկետում համաձայնեցման հանձնաժողովում չի հաջողվում մշակել ընդհանուր նախագիծ կամ մշակվածը մերժվում է երկու օրենսդիրներից որևէ մեկի կողմից, օրինագիծը համարվում է մերժված: Պրակտիկայում համաձայնեցման հանձնաժողովի մշակած տեքստի հաստատումն առավել հաճախ դժվարություններ է հարուցում Եվրոպական Խորհրդարանում: Եվրախորհրդարանի մեծաթիվ պատգամավորների միայն փոքրիկ մասն է մասնակցում համաձայնեցման հանձնաժողովի աշխատանքներին, իսկ դա երաշխիք չէ, որ Խորհրդարանն ամբողջ կազմով հավանություն կտա որոշման համաձայնեցված տեքստին:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ չպետք է Խորհրդին և Եվրախորհրդարանին դիտել որպես մրցակիցների: Նրանք կոչված են համագործակցելու և հաճախ ստիպված են գնալ փոխզիջումների՝ հասկանալով, որ առանց մյուս ինստիտուտի համաձայնության օրենսդրական ակտն ընդունվել չի կարող: Չէ՞ որ առավել նպատակահարմար է համատեղ ջանքերով ընդունելի լուծում գտնել, քան առաջ տանելով սեփական կարծիքը, մտնել փակուղի:

Սկզբնական շրջանում Խորհուրդը դժվարությամբ էր համակերպվում Միության միակ օրենսդրի դերի կորստի հետ: Սակայն Եվրախորհրդարանի համառ գործունեությունը ստիպեց Խորհրդին համակերպվել Խորհրդարանի՝ համաօրենսդիր լինելու փաստի հետ և համագործակցության եզրեր փնտրել:

Պրակտիկայում որոշումները հիմնականում ընդունվում են բավական հեշտությամբ՝ ինստիտուտների միջև բավականին լավ հարաբերությունների շնորհիվ [9, p. 62]:

Հաճախ մինչև համաձայնեցման հանձնաժողով հրավիրելն անց են կացվում ոչ պաշտոնական եռակողմ հանդիպումներ՝ Խորհրդի, Եվրախորհրդարանի և Հանձնաժողովի ներկայացուցիչների մասնակցությամբ: Այդ հանդիպումների նպատակն առկա տարածայնությունները հարթելը և համաձայնության եզրեր գտնելն է: Հաճախ խնդիրների լուծումը գտնվում է հենց այս հանդիպումների ժամանակ:

Վերջին տարիներին նման հանդիպումները բավականին տարածված են: Դրանք հնարավորություն են տալիս համաձայնության գալ այնպիսի ակտերի շուրջ, որոնք հրատապ են՝ չանցնելով բարդ ընթացակարգի բոլոր փուլերը: Նման ոչ պաշտոնական հանդիպումների հիմնական թերությունն այն է, որ դրանք անց են կացվում փակ դռների հետևում և հանրության համար մատչելի չեն [10, p. 36-37]:

Միջինստիտուցիոնալ համագործակցությունը բավականին լայն տարածում է ինչպես օրենսդրական ակտերի նախագծման ժամանակ, այնպես էլ՝ օրենսդրական գործընթացում: Ինստիտուտների միջև տարաբնույթ հարցերի կապակցությամբ կնքվել են միջինստիտուցիոնալ համագործակցության վերաբերյալ մի շարք համաձայնագրեր:

Ընթացակարգի բոլոր փուլերի համար, բացառությամբ համաձայնեցման հանձնաժողովի հրավիրմանը և գործունեությանը, սահմանված է եռամսյա ժամկետ: Այդ ժամկետն առավելագույնը կարող է երկարացվել ևս մեկ ամսով:

Եթե օրենսդրական ակտն ընդունվում է, այն ստորագրվում է և՛ Խորհրդի, և՛ Եվրախորհրդարանի նախագահների կողմից, և ենթակա է հրապարակման Միության պաշտոնական տեղեկագրում:

Ինչպես տեսանք, այս ընթացակարգի պարագայում և՛ Խորհուրդը, և՛ Եվրոպական Խորհրդարանը ունեն բացարձակ վետոյի իրավունք: Օրենսդրական ակտը չի կարող ընդունվել, եթե այն հավանության չի արժանացել այս երկու ինստիտուտներից թեկուզ և մեկի կողմից:

Ընդ որում, առանձնակի կարևորվում է Եվրախորհրդարանի բացարձակ վետոյի իրավունքը, ինչը սույն ընթացակարգի գլխավոր առանձնահատկությունն է: Պետք է նշել, որ պրակտիկայում Եվրախորհրդարանը հազվադեպ է օգտվում իր վետոյի իրավունքից: Սակայն կարևորը ոչ թե այդ վետոյի հաճախակի կիրառումն է, այլ Խորհրդարանի ձեռքբերում նման իրավագործության առկայությունը, ինչը հաշվի առնելով, Խորհուրդը հաճախ փոխզիջումների է գնում:

Սույն ընթացակարգի շրջանակներում Խորհրդարանի և Խորհրդի հարաբերությունները հիշեցնում են երկպալատ Խորհրդարաններում պալատների փոխհարաբերությունները, որտեղ Եվրախորհրդարանը կատարում է Խորհրդարանի ստորին, իսկ Խորհուրդը՝ վերին պալատի դերը:

Համատեղ որոշումների ընդունման ընթացակարգն իր գոյության տարիների ընթացքում ապացուցել է իր արդյունավետությունը: Այս մոտեցումը կիսում են մի շարք մասնագետներ [11, p. 15]: Սա հասկանալով՝ հիմնադիր պայմանագրեր մշակողներն աստիճանաբար ընդլայնեցին նրա կիրառությունը, իսկ Լիսաբոնի համաձայնագիրն էլ այն վերանվանեց սովորական օրենսդրական ընթացակարգի, որը ենթակա է կիրառման գրեթե բոլոր կարևոր հարցերով: Արդեն իսկ սույն ընթացակարգի անվանումն էլ վկայում է ԵՄ կյանքում վերջինիս կարևոր դերի մասին:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Зеленов Р.Ю.**, Законодательные процедуры Европейского Союза. Эволюция полномочий Европейского Парламента./ Государство и право. 2005, N 1, с. 97-103.
2. **Кашкин С.Ю.**, Конституция Европейского Союза: Договор, устанавливающий Конституцию для Европы (с комментарием). – М.: ИНФРА-М, 2005.- 622с.
3. **Philip Raworth**, Introduction to the legal system of the European Union. Oceania publications, INC. New york, 2001, p. 239.
4. **Ralph H. Folsom, Ralph B. Lake, Ved P. Nanda**, European Union law after Maastricht. A practical guide for lawyers outside the Common Market. Kluwer Law International, 1994, p. 745.
5. **Мухаева, Нелли Рашидовна**, Право Европейского Союза.- М.; ЮНИТИ-ДАНА, 2006.- 159 с.
6. **Trevor C. Hartley**, European Union law in a global context. Text, cases and materials. Cambridge University Press, 2004, p. 434:
7. **Кашкин С.Ю.**, Право Европейского Союза.- М.: Юристъ, 2004.- 925 с.
8. **Чиркин В.Е.**, Сравнительное конституционное право: Уч. Пособие.- М.: Междунар. Отношения, 2002.- 448с.
9. **Nicholas Moussis**, Access to European Union, 16<sup>th</sup> edition. European Study Service. 2007. P. 561.
10. **Steven P. McGiggen**, The European Union. A critical Guide. New edition. Pluto Press, London. 2005, p. 222.
11. **Walter van Gerven**, The European Union. A polity of states and peoples. Hurt Publishing. Oxford and Portland, Oregon. 2005, p. 397.
12. Լիսաբոնի համաձայնագիր: ԵՂ պայմանագրում և ԵՄ պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

**HOVSEP HOVSEPYAN**

*Post-graduate Student of the  
Public Administration Academy  
of the Republic of Armenia*

**THE MAIN LEGISLATIVE PROCEDURE OF THE EU  
ACCORDING TO THE TREATY OF LISBON**

The legislative process in the EU was very complicated and for many years in Europe were trying to simplify the legislative procedures and to make them more effective. The co-decision procedure during the years proved that it is the most effective legislative procedure, which gives the European Parliament an opportunity to participate in the legislative process with the same rights as the Council. This is very important because the European Parliament represents the people of the EU. Understanding this the Treaty of Lisbon renamed it to ordinary legislative procedure and made it the main decision making procedure in the EU which must apply in the most important areas.

**ՀՈՒՆԱՆ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ**

*ՀՀ վճռաբեկ դատարանի  
նախագահի խորհրդակցան,  
ՀՀ ՊԿ ակադեմիայի ասպիրանտ*

**ՕՐԵՆՔՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ԴԱՏԱՐԱՆԸ ՈՐՊԵՍ ԱՐԴԱՐ  
ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՏԱՐԻ**

ՀՀ Սահմանադրությունն անձի արդար դատաքննության իրավունքը սահմանելիս, որպես օրգանական երաշխիք, չի նշել օրենքով ստեղծված դատարանը: Մինչդեռ այս երաշխիքն ամրագրված է 1966թ. Մարդու քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածում և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում: Ավելին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայում «օրենքով ստեղծված դատարանի» երաշխիքը խորը, ծավալուն և ակտիվ մեկնաբանման է ենթարկվել՝ առանձին մեկնաբանվել են այս երաշխիքի տարրերը՝ «դատարան (որը պետք է ստեղծվի օրենքով)» և «օրենք (որով ստեղծվում է դատարանը)» տերմինները, ինչպես նաև տրվել է «օրենքով ստեղծված դատարանի» ընդհանրական մեկնաբանություն:

Նշվածը թելադրում է որոշակի եզրահանգումներ.

Առաջին՝ ՀՀ-ում գործող իրավունքը ճանաչում է «օրենքով ստեղծված դատարանի» երաշխիքը, քանի որ այն ամրագրված է 1966թ. Դաշնագրով և Եվրոպական կոնվենցիայով, որոնք ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով ՀՀ իրավունքի բաղկացուցիչ տարրն են:

Երկրորդ՝ «օրենքով ստեղծված դատարանի» մեկնաբանմամբ ձևավորված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան ևս ՀՀ իրավունքի բաղկացուցիչ տարրն է, քանի որ ՀՀ դատական օրենսգրքի 14-րդ հոդվածով՝ այդ դատարանի դատական ակտերի հիմնավորումները պարտադիր են ՀՀ դատարանների համար:

Երրորդ՝ անհրաժեշտ է ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրել, այնուհանդերձ, քննարկվող երաշխիքը: Դա ոչ միայն հռչակագրային նշանակություն կունենա, այլև ՀՀ Սահմանադրական դատարանին հնարավորություն կտա այդ երաշխիքի մեկնաբանմամբ իրականացնելու ակտիվ իրավաբանություն:

Անցնելով «օրենքով ստեղծված դատարան» երաշխիքի եվրոպական չափանիշների ներկայացմանը՝ մենք նախ կանդրադառնանք «դատարան» և «օրենք» տերմիններին:



Կոնվենցիայի 6-րդ հոդվածի անգլերեն և ֆրանսերեն տեքստերում օգտագործված է «tribunal» տերմինը, որը հայերենում բառացի համարժեք չունի: Հայերեն պաշտոնական տեքստում օգտագործվող «դատարան» բառն ավելի նեղ նշանակություն ունի և առաջին հայացքից միայն վերաբերում է պետական ապարատի մաս կազմող դատական մարմիններին: Մինչդեռ եվրոպական կոնվենցիայի երկու աուտենտիկ տեքստերի տերմինաբանությունն ավելի ճկուն է:

«Դատարան» եզրույթի ստրասբուրգյան մեկնաբանման կապակցությամբ կարևոր է նկատի ունենալ նաև այն, որ եվրոպական կոնվենցիան միայն 6-րդ հոդվածում չէ, որ պարունակվում է վեճ լուծող մարմին նշանակող տերմին: Այսպես, Կոնվենցիայի 5-րդ հոդվածում օգտագործվում է «դատարան» (նեղ առումով) և «պաշտոնատար անձ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն» տերմինները, 10-րդ հոդվածում՝ «արդարադատություն» բառը և այլն: Այնուամենայնիվ, թե՛ տեսական աղբյուրներում և թե՛ Ստրասբուրգի դատարանի պրակտիկայում հիմնավորվում է այն թեզը, որ նշված բոլոր եզրույթների միջև պետք է առկա լինի և առկա է հստակ փոխկապակցվածություն: Դրանք ըստ էության վերաբերում են միևնույն օրգանական միավորին, որը կարող է տարբեր անվանումներ ունենալ: Այս դիրքորոշումը հայտնում է, օրինակ, Մ.Կուլիջերը [1, p. 173]: Դե Վիլդեի գործով վճռի 78-րդ կետում այն ստացել է նաև նախադեպային-իրավական արտացոլում [2]:

Արդար դատաքննության իրավունքի քննարկվող օրգանական տարրի ընկալման մեթոդական հիմքը, այսպիսով, արդարադատության մարմնի իրական-բովանդակային և ոչ թե ձևական-հռչակագրային բնույթի կարևորումն է: Այս առումով, եվրոպական դատարանը ինքնավար իմաստ է դնում «դատարան» տերմինի ներքո՝ բազմաթիվ նախադեպային աղբյուրներում մասնավորեցնելով այդ ինստիտուտի հատկանիշները:

Գործին ըստ էության լուծում տալու իրավասություն ունեցող մարմնի առաջին հատկանիշն *անկախությունն* է գործադիրից ու գործի կողմերից. այս մոտեցումը, որ հռչակվել է *Նեումեյստերի* գործում [3], ցույց է տալիս արդար դատաքննության իրավունքի օրգանական տարրերի սերտ փոխապայմանավորվածությունը:

«*Դատական վարույթի երաշխիքների*» առկայությունը «դատարան» ինքնավար հասկացության հաջորդ հատկանիշն է, որն արտացոլվել է վերը նշված Դե Վիլդեի գործով վճռի նույն 78-րդ կետում: Սեփական դիրքորոշման հետևողականությունն ապահովելու նպատակով «դատարանի» այս հատկանիշի ձևակերպումը Ստրասբուրգի դատարանի հետագա պրակտիկայում փոփոխվեց, որպեսզի հնարավոր լինի խուսափել նույնաբանությունից ու թուլացնել ավանդական դատարանից արդար դատաքննության իրավունքի իմաստային կապակցումը: Այսպես, Ռինգեիսենի գործում այս հատկանիշը ձևակերպված է որպես *վարութային երաշխիք* [4]:

Նույն Ռինգեիսենի գործում առաջին անգամ արտացոլվեց քննարկվող օրգանական տարրի մյուս հատկանիշը՝ *լիազորությունների ժամկետը* [4]:

Թեև Եվրոպական դատարանը «դատարան» տերմինը ինքնավար մեկնաբանման է ենթարկում, ինչը նշանակում է, որ ներպետական իրավունքում տվյալ մարմնի «դատարան» հանդիսանալն առաջնային նշանակություն չունի, այնուհանդերձ Բելիլոսի գործում ընդգծվում է, որ ներպետական իրավունքում տվյալ մարմնին տրված բնութագրումը ևս կարևոր է և պետք է հաշվի առնվի [5]:

Արդեն Բելիլոսի գործով վճռում՝ 1988թ., Եվրոպական դատարանն ընդհանուր առմամբ ամբողջացրել էր «դատարանին»՝ որպես օրգանական միավորի ներկայացվող պահանջները: Դրանք մասնավորապես հանգում են հետևյալներին. որոշում կայացնելու հնարավորություն, հարցերի լուծում՝ իր իրավասության շրջանակներում, գործառնում միայն սահմանված ընթացակարգերի հիման վրա, անկախություն, անկողմնակալություն, անդամների պաշտոնավարման ժամկետ, վարութային երաշխիքների առկայություն [5]:

«Դատարանի» նշված չափանիշներն արդար դատաքննության իրավունքի երաշխավորվածության լույսի ներքո դիտարկելով՝ կարող ենք եզրահանգել.

առաջին՝ եթե ՀՀ-ում դատական համակարգի մաս հանդիսացող որևէ դատարան որոշակի գործ քննելիս օժտված չլինի որոշակի հատկանիշներով, ապա այն չի համարվի «դատարան»՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով: Արդյունքում՝ կարծանագրվի անձի արդար դատաքննության իրավունքի խախտում,

երկրորդ՝ եթե որևէ մարմին օժտված լինի նշված հատկանիշներով՝ չհանդիսանալով դատական համակարգի մաս, ապա դա չի խաթարի արդար դատաքննության իրավունքի երաշխավորվածությունը: Օրինակ՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցեր քննելիս ՀՀ արդարադատության խորհուրդը կարելի է դիտել որպես «օրենքով ստեղծված դատարան»: ՀՀ օրենսդիրը ստեղծել է բավարար իրավական հիմք, որպեսզի այդ մարմնի համար ապահովվեն դատարանին բնորոշ երաշխիքներ:

Այսպես, ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի համաձայն՝ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս Արդարադատության խորհուրդը գործում է որպես դատարան: Որպես դատարան գործելիս Արդարադատության խորհրդում գործերի քննության կարգի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարական օրենսգրքի նորմերն այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են Արդարադատության խորհրդում գործի քննության նկատմամբ և չեն հակասում սույն օրենսգրքի նորմերին: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առկայության ապացուցման պարտականությունը կրում է վարույթը հարուցած անձը, իսկ

Արդարադատության խորհրդի նիստում դատավորի կողմից կատարված կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են դատավորի օգտին: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործն Արդարադատության խորհուրդը քննում է ողջամիտ ժամկետում:

Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի զարգացման աճի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Դատարանը շարունակ կատարելագործում է «դատարանին» ներկայացվող պահանջները: Մասնավորապես, որոշում կայացնելու հնարավորության չափանիշի ընկալումը 1994թ. կայացված Վան դեր Յուրկի գործով վճռում խորացվել է, և ձևակերպվել է դրա դրսևորման հետևյալ ձևը. ոչ դատական մարմինները չպետք է հնարավորություն ունենան փոփոխելու *դատարանի* (տրիբունալի) որոշումը<sup>1</sup>:

*Դատարանին* Եվրոպական նախադեպային պրակտիկայով ներկայացվող պահանջները ՀՀ օրենսդրության հետ համադրելով՝ կարող ենք արձանագրել, որ թե՛ ՀՀ Սահմանադրությունը, թե՛ ՀՀ դատական օրենսգիրքը և թե՛ ճյուղային դատավարական օրենսգրքերն այս հարցում լիովին համապատասխանում են Եվրոպական չափանիշներին:

Հետաքրքրական է արբիտրաժային մարմիններն արդար դատաքննության իրավունքի տեսանկյունից պատշաճ դատարան ճանաչելու վերաբերյալ Ստրասբուրգի դատարանի դիրքորոշումը: Լիթվոնի գործով վճռում Դատարանը շարադրում է արբիտրաժային տրիբունալին ներկայացվող առանձնահատուկ պահանջ: Այսպես, բացի «համապատասխան երաշխիքներից»<sup>1</sup>, արբիտրաժային մարմին ներկայացվում է նաև *վերանայման հնարավորություն նախատեսելու* պահանջ [7]: Կուիջերը գտնում է, որ Եվրոպական դատարանն իր այս մտեցումը հստակ չի ձևակերպել. մասնավորապես Ստրասբուրգի դատարանի այս դիրքորոշումից չպետք է հետևություն արվի այն մասին, որ այստեղ խոսքը դասական իմաստով վերանայման մասին է: Ըստ Կուիջերի՝ չի կարելի Լիթվոնի նախադեպը մեկնաբանել այնպես, որ արբիտրաժային վարույթի կողմերին պարտադիր պետք է հնարավորություն տրվի, օրինակ՝ վիճարկելու արբիտրաժի սահմանած գույքային հատուցման չափը: Վերանայման պահանջը պետք է վերաբերի առավելապես ընթացակարգային հարցերին [1, p. 181]:

Եվրոպական չափանիշներին ՀՀ արբիտրաժային օրենսդրության համապատասխանության հարցը պարզելու նպատակով անհրաժեշտ է վերլուծության ենթարկել «Առևտրային արբիտրաժի մասին» 2006թ. ՀՀ օրենքը: Այսպես, համաձայն նշված օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի՝

<sup>1</sup> Կուիջերը կարծիք է հայտնում, որ այստեղ խոսքը վերաբերում է նախապես որոշված դատավարական կարգին, որը ներառում է նաև արդար դատաքննության իրավունքի օրգանական տարրերը՝ մասնավորապես, անկախությունը և անաչառությունը [1, p.181]:

«Արբիտրաժային տրիբունալի վճիռը կարող է չեղյալ ճանաչվել (Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության) դատարանի կողմից միայն այն դեպքում, եթե՝

1) դիմում ներկայացնող կողմն ապացույցներ ներկայացնի այն մասին, որ՝

ա) ... արբիտրաժային համաձայնության կողմերից մեկը, իր հանդեպ կիրառելի իրավունքի համաձայն, եղել է անգործունակ, կամ արբիտրաժային համաձայնությունը կողմերի ընտրած իրավունքի կամ այդպիսին ընտրած չլինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, անվավեր է, կամ

բ) տվյալ կողմը պատշաճ ձևով տեղեկացված չի եղել արբիտրի նշանակման կամ արբիտրաժի մասին կամ այլ պատճառներով զրկված է եղել իր գործը ներկայացնելու հնարավորությունից, կամ

գ) վճիռ է կայացվել այնպիսի վեճի կապակցությամբ, որը նախատեսված չէր արբիտրաժային համաձայնությամբ կամ չի համապատասխանում նրա պայմաններին կամ որոշում է այնպիսի հարցեր, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից, պայմանով սակայն, որ եթե արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված մասով կայացված որոշումները կարող են առանձնացվել այն որոշումներից, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից, ապա կարող է չեղյալ ճանաչվել արբիտրաժային տրիբունալի վճիռի միայն այն մասը, որը ներառում է արբիտրաժային համաձայնությամբ չնախատեսված հարցեր, կամ

դ) արբիտրաժային տրիբունալի կազմը կամ ընթացակարգը չի համապատասխանել կողմերի արբիտրաժային համաձայնությանը, եթե այդ համաձայնությունը չի հակասում սույն օրենքի պարտադիր դրույթներին, կամ նման համաձայնության բացակայության դեպքում չի համապատասխանել սույն օրենքին ...»:

Կարծում ենք՝ նշված իրավադրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ Լիթգոուի չափանիշները՝ ողջամիտ մեկնաբանմամբ, ՀՀ օրենսդրության մեջ պահպանված են:

Անդրադառնալով «օրենքով ստեղծված դատարան» օրգանական տարրի «օրենք» բաղադրիչին՝ պետք է նկատի ունենալ, որ Ստրասբուրգի դատարանը հստակ փոխկապակցվածություն է տեսնում Կոնվենցիայի տարբեր հոդվածներում, օրինակ՝ 10-րդ, 11-րդ, 6-րդ հոդվածներում կիրառված «օրենք» հասկացությունների միջև: Այլ կերպ՝ «օրենքին» ներկայացվող պահանջները միասնական են: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի կապակցությամբ այս թեզն արտահայտված է Գինիկանվայի գործով Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի որոշման մեջ, որտեղ Հանձնաժողովը դիրքորոշում է հայտնում, որ «օրենքով ստեղծված դատարան» դրույթի մեջ «օրենքի» արտահայտության մեկնաբանման համար անհրաժեշտ է ելնել Սանդի Թայմսի գործով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համատեքստում «օրենք» բառի նախադեպային մեկնաբանությունից [8]:

Այն դիրքորոշումը, որ Կոնվենցիայի տարբեր հոդվածներում օգտագործված «օրենք» բառը պետք է միասնական մեկնաբանման ենթարկվի, արտահայտվել է նաև տեսական գրականության մեջ [1, p.181], [9, p.311]:

Ինչ վերաբերում է Սանդի Թայնսի գործում վեր հանված «օրենք» հասկացության չափանիշներին, ապա դրանք երկուսն են. որոշակիությունը և մատչելիությունը:

ՀՀ օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ դատական համակարգի կառուցվածքը, դատարանների իրավասությունը, դատավարական ընթացակարգերը կանոնակարգող օրենսդրական աղբյուրները, որպես կանոն, որոշակի են և մատչելի:

Անդրադառնալով «օրենքով ստեղծված դատարանի» ընդհանրական մեկնաբանմանը, նախ, անհրաժեշտ է բացահայտել այս ձևակերպման առաջացման պատմությունը: Երբ քննարկվում էր Մարդու քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի համապատասխան ձևակերպումը, Չիլիի ու Լիբանանի ներկայացուցիչներն առաջարկում էին ամրագրել այս դրույթի հետևյալ ձևակերպումը. «օրենքով նախապես ստեղծված դատարան» (չեղատառը հեղինակինն է): Սակայն Ֆիլիպինների ներկայացուցիչն արդարացիորեն առարկել է՝ մատնանշելով, որ նման ձևակերպումը կարող է խոչընդոտել դատական համակարգը վերափոխելու՝ պետության մտադրությունը: Այս նկատառումով էլ նշված առաջարկը չի ընդունվել [1, p. 191-192]:

Վերոգրյալը նկատի ունենալով՝ կարելի է փաստել, որ տվյալ գործի դատական քննության ընթացքում պետության դատական համակարգի վերակազմակերպման պարագայում գործի քննությունը շարունակելն ինքնին չի հակասում «օրենքով ստեղծված դատարան» օրգանական տարրի միջազգային չափանիշներին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քննարկվող օրգանական տարրն ընդհանրական մեկնաբանելիս ՄԻԵԴ-ը առանձնացնում է երկու չափանիշ. դատական կազմը և դատարանի իրավասությունը:

**Դատական կազմին** են, մասնավորապես, վերաբերում Լավենտսի և Պոսոխովի գործերը, որոնցում դատարանն արդար դատաքննության իրավունքի ոտնահարում է արձանագրել այն պարագայում, երբ տվյալ գործը քննող դատական կազմի մեջ մտնող որոշ դատավորներ (իսկ Պոսոխովի դեպքում՝ ատենակալներ) պատշաճ դատավորներ չեն եղել [10], [11]:

Դատարանի կազմի վերաբերյալ խնդիրներ կարող էր առաջացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 3-րդ մասը (գործողության մեջ է եղել 2008թ. հունվարի 1-ից մինչև 2009թ. մարտի 1-ը): Համաձայն այդ դրույթի՝ «Քրեական դատարանում գործերը քննվում են միանձնյա: Կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով, քննվում են այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնց

համար Քրեական օրենսգրքով նախատեսված է առավելագույն պատիժ՝ ցմահ ազատազրկման ձևով»։ Հարց է ծագում՝ դատարանի կոլեգիալ կազմը վերաբերում է այն դեպքերին, երբ անձին մեղսագրվող հանցագործության համար *սահմանված* է ցմահ ազատազրկում, թե *կարող է նշանակվել* այդ պատժատեսակը։ Օրինակ՝ անձը մեղադրվում է մինչև 18 տարին լրանալը ենթադրաբար կատարված ծանրացուցիչ հանգամանքներով սպանության համար։ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածի սանկցիայում այդ արարքի համար նաև նախատեսված է ցմահ ազատազրկումը։ Մինչդեռ մինչև 18 տարին լրանալը կատարված հանցանքի համար անձի նկատմամբ ցմահ ազատազրկում կիրառվել չի կարող։

Անհրաժեշտ է նշել, որ այս հարցում մեր դատական պրակտիկան ճիշտ է կողմնորոշվել, և կիրառել է անձի համար ավելի շահեկան մեկնաբանություն՝ նման դեպքերում ամբաստանյալին տրամադրել է կոլեգիալության երաշխիքը։ Այս պարագայում, կարծում ենք, «օրենքով ստեղծված դատարանի» տվյալ չափանիշը չի խախտվել, քանի որ ոչ որոշակի օրենքի պայմաններում ընտրվել է դատական կազմի առավել երաշխիքային տարբերակը։

Ինչ վերաբերում է դատարանի իրավասությանը, ապա այս հարցում Եվրոպական դատարանը լայն մոտեցում է դրսևորել՝ այս հասկացության տակ հասկանալով թե՛ գործը վարույթ ընդունելու և թե՛ գործին որոշակի լուծում տալու դատարանի իրավագործությունը [12, էջ 3-17]։

«Օրենքով ստեղծված դատարան» տարրի ընդհանրական ընկալման առումով ևս մեր օրենսդրությունը չի հակասում Եվրոպական չափանիշներին. դատական կազմին վերաբերող դատավարական իրավանորմերը, ինչպես նաև դատարանների լիազորությունները շարադրված են բավականաչափ պարզ ու հստակ։

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Kuijer, Martin*, The Blindfold of Lady Justice: Judicial Independence and impartiality in light of the requirements of Article 6 ECHR, Leiden, 2004.
2. Case of DE WILDE, OOMS AND VERSYP ("VAGRANCY") v. BELGIUM, 18/06/1971, Appl. no. 2832/66 etc., A12.
3. Case of NEUMEISTER v. AUSTRIA, 27/06/1968, Appl. no. 1936/63, §24.
4. Case of RINGEISEN v. AUSTRIA (MERITS), 16/07/1971, Appl. no. 2614/65, §95.
5. Case of BELILOS v. SWITZERLAND, 29/04/1988, Appl. no. 10328/83, §65.
6. Case of VAN DE HURK v. THE NETHERLANDS, 19/04/1994, Appl. no. 16034/90, §45.
7. Case of LITHGOW AND OTHERS v. THE UNITED KINGDOM, 08/07/1986, Appl. no. 9006/80 etc., §201.
8. Case of GINIKANWA v. the UNITED KINGDOM [dec.], 09/03/1988, Appl. no. 12502/86, The law, §1.
9. Janis, Mark W. et al, European Human Rights Law: Text and Materials [Third Edition], Oxford, 2008.
10. Case of POSOKHOV v. RUSSIA, 04/03/2003, Appl. no. 63486/00.
11. AFFAIRE LAVENTS c. LETTONIE, 22/11/2002, RequUte no. 58442/00.
12. **Գ. Ղազինյան, Ռ. Մելիքյան**, Օրենքով ստեղծված անկախ և անկողմնակալ դատարան. Ստրասբուրգի դատարանի նախադեպային պրակտիկան և Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը, Պետություն և իրավունք, Երևան, 2008, N1-2:

**HUNAN TER-VARDANYAN**

*Adviser of the chairman of the  
Cassation court of the RA,  
Post-graduate Student of the Public  
Administration Academy of the RA*

**THE COURT ESTABLISHED BY LAW AS AN ORGANIC  
PART OF THE RIGHT OF FAIR TRIAL**

The article deals with one of the cornerstones of the Right to Fair Trial, namely the rule of law based courts. The article scrutinizes the notions of “law” and “courts”, discusses the concept of the “court” as enshrined by the Armenian legal system and as understood for the purposes of the Article 6 of the European Convention on Human Rights, presents the general concept of “Rule of Law Court” and puts a special emphasis on separate elements of the notion in question.

The author argues that Armenian legal system fully corresponds to presented element of the right to fair trial.

In this connection, the author makes special reference to the arbitral tribunals of the Republic of Armenia and stresses out that those tribunals are in compliance with the European Convention of Human Rights and the judgments of the European Court of Human Rights.



## ՀԱՅԿ ՍԻՄՈՆՅԱՆ

*ՀՀ կառավարության աշխատակազմի  
քաղաքացիների ընդունելության և  
դիմումների քննարկման վարչության  
առաջատար մասնագետ,  
ՀՀ ՊԿ ակադեմիայի ասպիրանտ*

### ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Իրավաբանական գրականության մեջ «լիազորություն» տերմինն օգտագործվում է որևէ մարմնի, պաշտոնատար անձի իրավունքների և պարտականությունների բնութագրման համար. այն հավասարապես ներառում է և՛ իրավունքները, և՛ պարտականությունները [1], [2]: Իրավունքը հաճախ ընկալվում է իբրև հայեցողության ազատություն՝ դրա կիրառման հարցում: Սակայն լիազորություններով օժտված կառույցները միաժամանակ ունեն դրանց իրականացման պարտականություններ: Այսպիսով՝ հանրային ոլորտը ենթադրում է իրավունքների և պարտականությունների միասնություն՝ «իրավապարտականության» բանաձևի տեսքով, որը հնարավոր չէ իրագործել այլ կերպ, քան հանրային շահերից ելնելով: Միաժամանակ, պետք է ընդունել լիազորության՝ որպես միայն իրավունք (օրինակ՝ «կարող է» ձևակերպման պարագայում) կամ որպես միայն պարտականություն հանդես գալու հնարավորությունը [3]:

Իրավաբանական բառարանում տրված բնորոշման համաձայն լիազորություններ ասելով՝ հասկանում ենք պետական, տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ), պաշտոնատար անձանց, հասարակական հարաբերությունների այլ մասնակիցների՝ նորմատիվ իրավական ակտերով սահմանված իրավունքներն ու պարտականությունները [4]: Մեկ այլ բնորոշմամբ՝ լիազորություն ասելով՝ հասկացվում են պետական, ՏԻՄ-երին, պաշտոնատար անձանց սահմանադրությամբ, օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով վերապահված իրավունքներն ու ազատությունները՝ հանրային իշխանության գործառույթների իրականացման նպատակով [5]:

Ներկայացված բնորոշումները տեղափոխելով պետական կառավարման ոլորտ և հստակեցնելով տարածքային կառավարման մարմինների առնչությամբ՝ վերոգրյալի ամփոփման արդյունքում հանգում ենք այն եզրակացությանը, որ տարածքային կառավարման մարմինների լիազորություններ ասելով՝ պետք է հասկանալ մարզպետին ՀՀ օրենսդրությամբ վերապահված իրավունքներն ու պարտականությունները, որոնք ուղղված են մարզի տարածքում հանրապետական գոր-

ծաղիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգմանը, ինչպես նաև կառավարության տարածքային քաղաքականության իրականացմանը, ինչը մարզպետն ապահովում է մարզպետարանի աշխատակազմի և մարզային ենթակայության կազմակերպությունների միջոցով: Փաստորեն, տարածքային կառավարման մարմինների լիազորություններն իրավանորմերով ամրագրված տարածքային կառավարման մարմինների իրավունքներն ու պարտականություններն են, որոնք անհրաժեշտ են մարզի տարածքում տարածքային կառավարման խնդիրներն ու գործառույթներն իրականացնելու համար: Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է վեր հանել տարածքային կառավարման մարմինների լիազորությունների հետևյալ առանձնահատկությունները.

1. տարածքային կառավարման մարմինների լիազորություններն իրենցից ներկայացնում են օրենսդրորեն ամրագրված իրավունքների և պարտականությունների ամբողջություն,

2. տարածքային կառավարման մարմինների լիազորություններն իրենց ամրագրումն են ստանում համապատասխան նորմատիվ իրավական ակտերում: Այս առումով մարզպետի լիազորությունների ցանկը բավականին ճկուն է: Ի տարբերություն պետական կառավարման այլ մարմինների (օրինակ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն և այլն), մարզպետի լիազորությունների հիմնական ցանկը սահմանված է ՀՀ Նախագահի «ՀՀ մարզերում պետական կառավարման մասին» 06.05.1997թ. ՆՀ-728-Ն հրամանագրով, չնայած որ նշված հրամանագիրը միակ նորմատիվ իրավական ակտը չէ, որով սահմանված են տարածքային կառավարման մարմինների լիազորությունները: Այսպես, ՀՀ Նախագահի բազմաթիվ ակտերում երբեմն նախատեսվում են անմիջական հանձնարարականներ տարածքային կառավարման մարմիններին (օրինակ՝ ՀՀ Նախագահի ՆԿ-128-Ն կարգադրությունը «ՀՀ Նախագահի 2008թ. հունվարի 10-ից փետրվարի 17-ը ՀՀ մարզերում և համայնքներում նախընտրական հանդիպումների ընթացքում արծարծված խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների մասին»՝ ընդունված 30.07.2008), կամ՝ այս կամ այն օրենքը նույնպես կարող է առնչվել տարածքային կառավարման մարմինների գործունեությանը՝ նախատեսելով դրա իրականացման ապահովմանն ուղղված լիազորությունների որոշակի ցանկ (օրինակ՝ ՀՀ ընտրական օրենսգիրքը, ՀՀ հողային օրենսգիրքը, «Քաղաքաշինության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքները և բազմաթիվ այլ օրենքներ), ինչպես նաև կառավարության որոշումները նույնպես հաճախ նախատեսում են մարզպետի այս կամ այն լիազորություն (օրինակ՝ ՀՀ կառավարության «ՀՀ մարզերում մշակույթի զարգացման ծրագիրը հաստատելու մասին» 2007 թվականի ապրիլի 5-ի N 589-Ն որոշումը),

3. տարածքային կառավարման մարմինների լիազորությունները վերապահված են բացառապես տարածքային կառավարման մարմիններից, որպիսիք հանդիսանում են մարզպետները,

4. տարածքային կառավարման մարմինների լիազորություններն իրականացվում են մարզի տարածքում, այսինքն՝ մարզպետի գործունեությունը կրում է տարածքային բնույթ,

5. տարածքային կառավարման մարմինների լիազորություններն իրականացվում են կամ վարչակառավարչական բնույթի իշխանական գործողությունների կատարման, կամ նորմատիվ ակտի ընդունման միջոցով: Վերը հիշատակված՝ ՀՀ Նախագահի հրամանագրի 1.6. կետի համաձայն մարզպետն իր իրավասության սահմաններում՝ ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, ընդունում է որոշումներ, արձակում կարգադրություններ,

6. տարածքային կառավարման մարմինների լիազորություններն իրենց բնույթով տարբերվում են պետական կառավարման այլ մարմինների լիազորություններից, հաշվի առնելով, որ մարզպետն օժտված է ոչ միայն կոնկրետ գործողություններ կատարելու կամ իր իրավասության շրջանակներում ակտեր ընդունելու իրավունքով և հնարավորությամբ, այլ մեծամասամբ նաև պետական կառավարման և ՏԻՄ-երի գործունեության համակարգման իրավասությամբ:

Հայտնի է, որ տարածքային կառավարման մարմինների լիազորությունների հիմնական ցանկը սահմանված է ՀՀ Նախագահի «ՀՀ մարզերում պետական կառավարման մասին» 06.05.1997թ. ՆՀ-728-Ն հրամանագրով: Հրամանագրի դրույթների ուսումնասիրությունը վկայում է, որ մարզպետի լիազորությունները կարելի է դասակարգել մի քանի չափանիշներով:

Նախ, ըստ բնույթի մարզպետի լիազորությունները կարելի է բաժանել գործառնական, կազմակերպչական և վերահսկողական լիազորությունների:

Կարելի է առաջարկել մեկ այլ դասակարգում՝ ըստ իրացման կառուցակարգերի: Նշված չափանիշով մարզպետի լիազորությունները կարելի է բաժանել հետևյալների.

1. լիազորություններ, որոնք մարզպետն իրականացնում է ինքնուրույն կամ մարզպետարանի աջակցությամբ (օրինակ՝ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ապահովում է ՀՀ օրենքների, ՀՀ Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության և վարչապետի որոշումների, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը),

2. լիազորություններ, որոնք մարզպետն իրականացնում է հանրապետական գործադիր մարմինների տարածքային կառույցների աշխատանքների համակարգման միջոցով (օրինակ՝ ՀՀ վարչապետի կողմից սահմանված կարգով մարզի հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից տեղեկատվություն ստանալը),

3. լիազորություններ, որոնք մարզպետն իրականացնում է իշխանության (պետական կամ ՏԻՄ-երի հետ համատեղ (օրինակ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով վերահսկում է պետության կողմից համայնքին պատվիրակված լիազորությունների կատարման ընթացքը և պարտադիր լիազորությունների կատարումը):

Մարզպետի լիազորությունները կարելի է դասակարգել նաև ըստ ոլորտների: Հարկ է նշել, որ գրեթե չկա ոլորտ, որին չառնչվեն մարզպետի լիազորությունները: Այս առումով դրանք բազմազան և բազմաբնույթ են: Այսպես, մարզպետն իր լիազորություններն իրականացնում է ֆինանսների, քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ տնտեսության, տրանսպորտի և ճանապարհաշինության, գյուղատնտեսության և հողօգտագործման, կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության, մշակույթի և սպորտի, ինչպես նաև կապի, էներգետիկայի, հարկային, արտակարգ իրավիճակների ու քաղաքացիական պաշտպանության և բազմաթիվ այլ ոլորտներում: Կարելի է ներկայացնել մարզպետի լիազորությունների բազմաթիվ այլ դասակարգումներ [6]: Անհրաժեշտ է նշել, որ վերը բերված դասակարգումները, ինչպես ցանկացած դասակարգում, պայմանական են:

Տարածքային կառավարման կարգավորմանը նվիրված օրենսդրությամբ թելադրված է, ըստ էության, ևս մեկ դասակարգում, որի համար որպես չափանիշ կիրառելի են գործառույթները: Այսպես, ՀՀ Նախագահի «ՀՀ մարզերում պետական կառավարման մասին» հրամանագրի 1.2. կետի համաձայն՝ «պետական կառավարումը մարզում ապահովվում է մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականության իրականացման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգման միջոցով» [7]: Այսպիսով, օրենսդրությունը, ելնելով տարածքային կառավարման գործառույթներից, մարզպետի լիազորությունները բաժանում է երկու խմբի.

- լիազորություններ, որոնք ուղղված են մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականության իրականացմանը,
- լիազորություններ, որոնք ուղղված են հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգմանը:

Մեր կարծիքով, մարզպետի լիազորությունների ընդհանուր ցանկից անհրաժեշտ է առանձնացնել ևս մեկ խումբ, ինչի վերաբերյալ օրենսդրությամբ որևէ վերապահում կատարված չէ: Խոսքը տարածքային կառավարման մարմինների գործունեության ապահովմանն ուղղված (պայմանականորեն անվանենք) մարզպետի՝ կազմակերպչական բնույթի լիազորություններն են: Առանձին դիտարկենք մարզպետի լիազորությունների մատնանշված երեք խումբը՝ իրենց դասակարգումներով:

**I. Կազմակերպչական բնույթի լիազորություններ, որոնք միտված են մարզի տարածքում պետական կառավարման ապահովմանը:**

Այս առումով մարզպետը՝

ա) օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ապահովում է ՀՀ օրենքների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության և վարչապետի որոշումների, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը.

բ) խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել կառավարության նիստերին.

գ) սահմանված կարգով ՀՀ տարածքային կառավարման նախարարի միջոցով կառավարության և վարչապետի քննարկմանն է ներկայացնում վերջիններիս իրավասությանը վերապահված հարցերը.

դ) սահմանված կարգով մասնակցում է կառավարության տարածքային քաղաքականության մշակման աշխատանքներին.

ե) ամենամյա հաշվետվություններ է ներկայացնում կառավարություն՝ իր գործունեության և մարզի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի մասին, ընթացիկ հաշվետվություններ է ներկայացնում վարչապետին.

զ) ընդհանրացնում է օրենսդրության կիրառման պրակտիկան, օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում կառավարություն.

է) իր իրավասության սահմաններում միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների իրավունքները և ազատություններն ապահովելու համար.

ը) օրենսդրությամբ սահմանված կարգով վերացնում կամ կասեցնում է մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարների՝ օրենսդրությանը հակասող իրավական ակտերը.

թ) օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում միջոցներ է ձեռնարկում մարզի տարածքում պետական սեփականության պահպանության և արդյունավետ օգտագործման ուղղությամբ.

ժ) մարզպետարանի աշխատակազմում պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում քաղաքացիական ծառայության բարձրագույն և գլխավոր պաշտոնների 1-ին ենթախմբի պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին.

ի) շնորհում է քաղաքացիական ծառայության 1-ին, 2-րդ և 3-րդ դասի խորհրդականի դասային աստիճաններ:

**II. Լիազորություններ, որոնք միտված են մարզի տարածքում հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգմանը:** Մարզերում պետական կառավարումն իրականացվում է պետական և համայնքային շահերի ներդաշնակման, ինչպես նաև մարզպետների և հանրապետական գործադիր մարմինների ու վերջիններիս տարածքային ծառայությունների

համագործակցությամբ և գործողությունների փոխհամաձայնեցմամբ: ՀՀ Նախագահի «ՀՀ մարզերում պետական կառավարման մասին» հրամանագրի համաձայն մարզպետը, օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության սահմաններում, մարզի տարածքում համակարգում է հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը՝ ա) ներքին գործերի և ազգային անվտանգության, բ) պաշտպանության, գ) կապի, դ) էներգետիկայի, ե) հարկային, զ) արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության և այլ ոլորտներում:

Այս խմբին կարելի է դասել նաև մարզպետի հետևյալ լիազորությունները՝

ա) կազմակերպում է հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզպետարանի աշխատակազմի ու ՏԻՄ-երի համատեղ և համաձայնեցված գործունեությունը.

բ) մարզի՝ հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից ՀՀ վարչապետի կողմից սահմանված կարգով ստանում է տեղեկատվություն.

գ) համագործակցում է հանրապետական գործադիր մարմինների հետ և դրանց քննարկմանն է ներկայացնում վերջիններիս իրավասությանը վերաբերող՝ մարզին առնչվող հարցերը.

դ) պարտադիր քննության է առնում հանրապետական գործադիր մարմինների կողմից մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների և դրանց ղեկավարների աշխատանքի վերաբերյալ առաջարկությունները և սահմանված ժամկետում այդ մարմիններին տեղեկացնում ձեռնարկված միջոցառումների մասին.

**III. Լիազորություններ, որոնք միտված են մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականության իրականացմանը:**

Այս լիազորությունների շրջանակներում մարզպետը հանդես է գալիս որպես ակտիվ գործող, և ոչ թե միայն համակարգող կամ վերահսկող սուբյեկտ: ՀՀ Նախագահի «ՀՀ մարզերում պետական կառավարման մասին» հրամանագրի համաձայն՝ մարզպետը, օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության սահմաններում, մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականությունն իրականացնում է հետևյալ բնագավառներում. ֆինանսներ, քաղաքաշինություն, բնակարանային և կոմունալ տնտեսություն, տրանսպորտ և ճանապարհաշինություն, գյուղատնտեսություն և հողօգտագործում, կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն, մշակույթ և սպորտ, բնության և շրջակա միջավայրի պահպանություն, առևտուր, հանրային սնունդ և սպասարկում:

Հայաստանի Հանրապետությունում տեղերում հանրային իշխանության իրականացման ուսումնասիրությունները վկայում են, որ տարածքային կառավարման և ՏԻՄ-երի լիազորությունների իրականացման ոլորտները մեծապես համընկնում են: Հանրային իշխանության համակարգում լիազորությունների սահմանազատումը պետության

զարգացման կառավարման համակարգի ձևավորմանն ուղղված աշխատանքների մի մասն է կազմում: Այն հնարավորություն է տալիս ապահովելու հանրային կառավարման համակարգի առջև դրված խնդիրների լուծման առումով ներդրվող ջանքերի առավել արդյունավետ տնօրինումը: Ընդ որում, լիազորությունների զուտ սահմանազատումն ինքնին չի կարող ապահովել կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումը: Անհրաժեշտ է ձևավորել պետական և ՏԻՄ-երի միջև փոխգործակցության հատուկ համակարգ: Ինչպես ցույց է տալիս արտասահմանյան երկրների փորձը՝ դա թույլ է տալիս մասնակիորեն լուծել ֆինանսական խնդիրները, քանի որ մունիցիպալ մարմիններն ապահովում են ֆինանսական պաշարների օգտագործման մեծ արդյունավետություն՝ առավել ամբողջական և հստակ որոշելով տեղական պահանջմունքները և ավելի արագ արձագանքելով դրանց: Տեղական ինքնակառավարման մարմիններն օժտված են մեծ ճկունությամբ, պակաս չափով կապված կոշտ կանոնների հետ և հատկապես հակված են նորությունների [8]:

Հայտնի է նաև, որ ՏԻՄ-երի լիազորություններն իրենցից ներկայացնում են տեղական նշանակության հարցերի լուծմանն ուղղված իրավունքների և պարտականությունների համակցություն: Կիրառելով, սակայն, «տեղական» կամ «համայնքային նշանակության հարցեր» եզրույթը՝ ՀՀ օրենսդրությունը չի առաջարկում որևէ սահմանում: Այսպիսով, ի՞նչ ենք հասկանում «տեղական նշանակության հարցեր» ասելով: Հարցի պատասխանի կարևորությունը մեծանում է՝ հաշվի առնելով նաև այն սահմանումը, որը տրված է տեղական ինքնակառավարմանը ՀՀ Սահմանադրությամբ, ըստ որի «Տեղական ինքնակառավարումը համայնքի իրավունքն ու կարողությունն է՝ սեփական պատասխանատվությամբ բնակիչների բարօրության նպատակով Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան լուծելու տեղական նշանակության հարցերը» (104-րդ հոդվածի 2-րդ մաս): Համայնքային նշանակության հարցերի սպառիչ ցանկ օրենսդրությամբ նախատեսված չէ, ինչը թույլ չի տալիս հստակ սահմանազատել համայնքային և պետական նշանակության հարցերը: Ընդ որում, քննարկվող հարցի լուծումը տրված չէ նաև տեսաբանների կողմից, թե որտեղով է անցնում պետական և համայնքային նշանակության հարցերի տարբերական սահմանը և որն է նշված սահմանազատման չափանիշը: Որոշ տեսաբաններ գտնում են, որ տեղական ինքնակառավարումն ունի իր ուրույն, պետականներից տարբերվող խնդիրներն ու շահերը: Տեսաբանների այլ խումբ էլ գտնում է, որ տեղական ինքնակառավարումը լուծում է պետական հարցերը տեղերում, և որ համայնքային նշանակության հարցերը պետական հարցերի մաս են կազմում, միայն թե օրենսդրությամբ դրանց լուծումը վերապահված է ՏԻՄ-երին: Իրականում խիստ բարդ է սահմանազատել պետական և համայնքային նշանակության հարցերը, քանի որ ցանկացած հարց՝ դրա նկատմամբ պետության կողմից ընդգծված ուշադրության դեպքում, կամ էլ մարդկա-

յին կյանքի այս կամ այն բնագավառի արդիականացման պարագայում համայնքային նշանակության հարցից կարող է վերածվել պետական նշանակության խնդրի, և՛ ընդհակառակն: Այսպիսով, պետական և տեղական նշանակության հարցերի սահմանազատման համընդհանուր չափանիշ առաջարկել հնարավոր չէ: Ըստ էության, տեղական նշանակության հարցերը պետական հարցերի մի մասն են կազմում: Կան հարցեր, որոնց լուծումը ՏԻՄ-երին վերապահելը դժվար է պատկերացնել, օրինակ՝ ազգային անվտանգության: Այլ պարագայում հարցի լուծումը տեղական ինքնակառավարման, տարածքային կառավարման մարմինների կամ պետական կառավարման հանրապետական մարմինների տարածքային ծառայություններին վերապահելը կախված է նրանից, թե որ հարցն է տվյալ պահին առաջնային ու կառավարման որ մակարդակն առավել արդյունավետ կկազմակերպի հստակ հարցի լուծումը: Այս առումով կարևորվում է պատվիրակված լիազորությունների ինստիտուտը [9], որի կիրառմանը մարզպետի մասնակցությունն արտահայտվում է վերահսկողական լիազորությունների իրականացման ձևով:

Ասվածն ավելի հստակ պատկերացնելու համար դիտարկենք տեղական իշխանության իրականացումը *քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ տնտեսության բնագավառներում*: Նշված ոլորտում մարզպետը՝

ա) սահմանված կարգով կազմակերպում է մարզի բնակավայրերի գլխավոր հատակագծերի կազմումը և դրանք ներկայացնում կառավարության հաստատմանը.

բ) սահմանված կարգով առաջարկություններ է ներկայացնում կառավարություն մարզի համայնքների վարչական սահմանների փոփոխման վերաբերյալ.

գ) եզրակացություն է տալիս հանրապետական տարածքային զարգացման ու տարաբնակեցման նախագծերի և ուրվագծերի վերաբերյալ.

դ) իր իրավասության սահմաններում կազմակերպում է բնակարանային և այլ շինարարություն, իրականացնում է կապիտալ շինարարության և հիմնանորոգման պատվիրատուի գործառույթներ, քաղաքաշինական գործունեության հսկողություն, միջոցներ է ձեռնարկում ապօրինի շինարարության կանխման, կասեցման և վերացման ուղղությամբ.

ե) համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում, իր իրավասության շրջանակում, սահմանված կարգով համակարգում է կառուցապատումը.

զ) կազմակերպում և վերահսկում է մարզային ենթակայության ջրմուղ-կոյուղու, ջրերի մաքրման և այլ կոմունալ կազմակերպությունների աշխատանքը.

է) կազմակերպում է աղբի ու թափոնների վերամշակումը:



Ինչպես տեսնում ենք, քաղաքաշինության բնագավառում մարգպետն օժտված է ընդարձակ լիազորություններով և միաժամանակ մասնակցում է նաև մարզի տարածքում ընդգրկված համայնքներում համայնքի ղեկավարի կողմից կատարվող՝ իր իրավասության համանման լիազորությունների կատարմանը: Այս ոլորտում տարածքային կառավարման և ՏԻՄ-երի միջև լիազորությունները կարելի է բաժանել երկու խմբի. կամ նույն լիազորությունը համայնքի ղեկավարն իրականացնում է համայնքի տարածքում, իսկ մարգպետը՝ համայնքներից դուրս գտնվող տարածքների շրջանակներում, կամ էլ նույն լիազորությունները ՏԻՄ-երն ու մարգպետն իրականացնում են համատեղ: Այսպես, եթե համենատեքստ «Քաղաքաշինության մասին» 05.05.1998թ. ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» 07.05.2002թ. ՀՀ օրենքով, «ՀՀ մարզերում պետական կառավարման մասին» 06.05.1997թ. ՀՀ Նախագահի հրամանագրով ամրագրված մարգպետի և համայնքի ղեկավարի՝ վերը նշված առաջին խմբին դասվող լիազորությունները, ապա պետք է արձանագրենք, որ.

ա) պետական քաղաքաշինական կադաստրի վարումը և քաղաքաշինական գործունեության մոնիտորինգը կատարում են համայնքում՝ համայնքի ղեկավարը, համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում և ողջ մարզի համար՝ մարգպետը («Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մաս, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ),

բ) շինարարության թույլտվությունը համայնքներում տալիս է համայնքի ղեկավարը, համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում՝ մարգպետը՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով («Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մաս, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ).

գ) քանդման թույլտվությունը համայնքներում տալիս է համայնքի ղեկավարը, համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում՝ մարգպետը՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով («Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մաս).

դ) ավարտված շինարարության շահագործման ընդունումը փաստագրում է համայնքի ղեկավարը, համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում՝ մարգպետը՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով («Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մաս, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ).

ե) ճարտարապետահատակագծային առաջադրանքը համայնքում տալիս է համայնքի ղեկավարը, համայնքի սահմաններից դուրս գտնվող տարածքներում՝ մարգպետը՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով («Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 16-րդ կետ) և այլն:

Ինչ վերաբերում է մարզպետի և համայնքի ղեկավարի՝ վերը նշված երկրորդ խմբին դասվող լիազորություններին, ապա պետք է առանձնացնենք հետևյալները.

ա) համայնքի ղեկավարը կառավարության սահմանած կարգով կազմում է քաղաքային և գյուղական համայնքների գլխավոր հատակագծերը, իսկ մարզպետը սահմանված կարգով կազմակերպում է մարզի բնակավայրերի գլխավոր հատակագծերի կազմումը և դրանք ներկայացնում կառավարության հաստատմանը («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ, ՀՀ Նախագահի «ՀՀ մարզերում պետական կառավարման մասին» հրամանագրի 1.13. կետի «ա» ենթակետ).

բ) համայնքի ղեկավարը կազմակերպում է աղբահանությունը, իսկ մարզպետը կազմակերպում է աղբի ու թափոնների վերամշակումը («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետ, ՀՀ Նախագահի «ՀՀ մարզերում պետական կառավարման մասին» հրամանագրի 1.13. կետի «է» ենթակետ) և այլն:

Վերոգրյալի վերլուծությունից հանգում ենք, որ քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ տնտեսության ոլորտում մարզպետին վերապահված են հիմնականում վերահսկողական և կազմակերպչական բնույթի լիազորություններ, իսկ գործառական լիազորությունները՝ այնքանով, որքանով դրանք իրականացվում են համայնքների սահմաններում չընդգրկված տարածքներում, այն էլ՝ այնքան ժամանակ, քանի դեռ պետական սեփականություն հանդիսացող հողերը չեն փոխանցվել համայնքներին:

Մարզպետի լիազորությունների բազմակողմանի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դրանք բազմաբնույթ և բազմաբովանդակ են: Ի տարբերություն պետական կառավարման այլ մարմինների՝ մարզպետը՝ օժտված լինելով վերը թվարկված լիազորություններով, *իրականացնում է միաժամանակ և՛ ծյուղային, և՛ գործառական կառավարում*: Իսկ տեղական ինքնակառավարումն օժտված է մեծ ճկունությամբ և առավելապես հակված է նորույթների:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, կարելի է եզրակացնել, որ գործնական նշանակություն ունի այն, որ իշխանության տարբեր մակարդակների միջև լիազորությունների և տնօրինման ոլորտների բաշխումը պետք է կատարվի՝ ելնելով նրանից, թե իշխանության որ մակարդակն առավել արդյունավետ կարող է այն կազմակերպել: Ընդ որում, հատկապես տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների միջև լիազորությունների բաշխումը պետք է լինի հնարավորինս ճկուն և տարբերակված՝ ելնելով մարզի և մարզում ընդգրկված համայնքների առանձնահատկություններից:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Кутафин О.Е., Шеремет К.Ф.**, Компетенция местных советов, М., 1986, с. 35.
2. **Авакьян С.А.**, Правовое регулирование деятельности местных Советов, М., 1980, с. 22.
3. **Тихомиров Ю.А.**, Теория компетенции.- М., 2004, ст 53-66.
4. Конституционное право. Энциклопедический словарь. Отв. ред. **С.А. Авакьян**. М., Издат. Группа НОРМА-ИНФРА·М, 2000, с. 429.
5. **Арутюнян Г.Г., Баглай М.В.**, Конституционное право: Энциклопедический словарь. – М.: Норма, 2006, с. 336.
6. **Չիրությունյան Ա.Շ.**, «ՀՀ մունիցիպալ իրավունք: Դասագիրք բուհերի ուսանողների համար».- Երևան, Պետ. ծառ. իրատ., 2004, էջ 32-83:
7. «ՀՀ մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի 06.05.1997թ. ՆՅ-728 հրամանագիր:
8. **Ասատրյան Ա.Ա.**, Տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում: ԺԲ.00.02 մասնագիտությամբ իրավ. գիտ. թեկնածուի ... ատենախոսություն: Երևան, 2007, էջ 154:
9. **Чебоксаров П.А.**, Конституционно-правовой статус органов местного самоуправления. // Дисс. ...канд. юрид. наук: 12.00.02. СПб., 2001, с. 132-134.

**HAYK SIMONYAN**

*Graduate student of the Public  
administration academy of the RA,  
Leading Specialist to the Department  
for Reception of Citizens and  
Discussion of Petitions of the Staff  
of Government the of RA*

### **THE COMPETENCE OF TERRITORIAL GOVERNING BODIES OF RA**

The research paper is an attempt to give the general characterization of the competence of territorial governing bodies, to study their characteristic features, to analyze their categories and the system of their implementation. Based on the study of the RA legislation the regional governor's competence is classified to the following criteria: functional, organizational and supervisory.

When we make a comparative study of the competence of the territorial governing and self-governing bodies apparent in different spheres, it becomes possible to deduce that the distribution of the competence and the fields of management away different categories of authorities is greatly dependent upon the fact that which category of authorities can organize it in the most efficient way taking into consideration the characteristic features of the region as well as those of the communities included in the same region.

ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

*ՀՀ ՊԿ ակադեմիայի քաղաքական կառավարման  
և քաղաքական վերլուծության ամբիոնի վարիչ,  
քաղաքական գիտությունների դոկտոր*

ՄԱՄԻԿՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

*«Քաղաքացիական մասնակցության զարգացման  
կենտրոն» ՀԿ նախագահ, քաղաքագետ*

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Հանրային քաղաքականության վերլուծությունը, որպես բազմա-  
չափ գործընթաց, ենթադրում է մակրո-միկրո-մեզա մակարդակներում  
հանրային հիմնախնդիրների բացահայտում և կանխատեսում: Քաղա-  
քական գիտության շրջանակներում այս գործընթացը դիտարկվում է  
«կայունություն» և «անկայունություն» հասկացությունների հենքի  
վրա, որոնք միանշանակ չեն մեկնաբանվում:

Քաղաքական կայունությունը ենթադրում է քաղաքական համա-  
կարգի ինքնաստեղծման, ինքնապահպանման, ինքնափրկման, ինք-  
նադրսևորման և ընդհանրապես «ինքնա» նախաձեռնությամբ ժախճվող  
գործողությունների ամբողջականություն, որոնք նպաստավոր պայ-  
մաններ են ստեղծում համակարգի համար հավասարազոր արձագան-  
քելով ներքին և արտաքին ազդեցություններին՝ բնականոն արդիակա-  
նանալ և զարգացնել համագործակցության մշակույթը: «Կայունու-  
թյան» հասկացության նման դիտարկման շրջանակներում ուշադրու-  
թյան է արժանի անգլիացի քաղաքագետներ Կ.Դաուզինը և Ռ.Քիմբերը  
կայուն են համարում միայն այն քաղաքական համակարգերը, որոնք  
ընդունակ են բացառել բռնությունը: Համաձայն այս մոտեցման՝ կայու-  
նությունը չի կարող լինել տարբեր աստիճաններով, այն կա՛մ կա, կա՛մ  
չկա [1, c.149]: Համաձայնվելով նրանց հետ նշենք, որ քաղաքական  
կայունությունը քաղաքական համակարգի ներքին և արտաքին միջա-  
վայրերի արդյունավետ փոխներգործության արդյունք է, որը թույլ է  
տալիս նրան արդիականացնել իր կառուցվածքը ու վերահսկել տեղի  
ունեցող փոփոխությունների գործընթացները: Այս պարագայում քա-  
ղաքական կայունությունը «քաղաքական սուբյեկտների միջև եղած  
հարաբերությունների արդյունք է, որին հատուկ է որոշակի ամբողջու-  
թյուն և ընդունակություն՝ իրականացնել իրենց գործառույթները»  
[2, c. 281]: Այսպիսով, քաղաքական կայունությունը պայմանավորված

է քաղաքական համակարգի ինստիտուտների միջև առկա ներքին զարգացման արժեքային բազմաչափության տրամաբանությամբ, և արտաքին միջավայրի հետ հարաբերություններով:

Ելակետ ընդունելով Ս. Լիփսեթի (1922-2005) այն մոտեցումը, համաձայն որի, քաղաքական կայունությունը իշխանության լեգիտիմությամբ և գործունեության արդյունավետությամբ պայմանավորված երևույթ է Դ. Յավորսկին առանձնացնում է *«միմիմալ»* և *«ժողովրդավարական»* կայունություն հասկացությունները: Եթե առաջինը ենթադրում է պետության տարածքում քաղաքացիական պատերազմի կամ ռազմական բախման այլ ձևերի բացակայություն, ապա երկրորդը հասարակության փոփոխվող տրամադրություններին և պահանջմունքներին ժողովրդավարական ինստիտուտների արագորեն արձագանքելու հնարավորություններն ու հմտություններն են: Փաստորեն հանրային քաղաքականության վերլուծության գործընթացում քաղաքական կայունությունը *ինստիտուցիոնալացնելով գերիշխանությունը*, իր մեջ ներառում է քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջոցով քաղաքացիների մասնակցությունը պետական կառավարմանը՝ հանուն ժողովրդավարության որակի ապահովման [3, c.330-332]:

Մեկ այլ մոտեցման համաձայն՝ կայունությունը դա որոշակի ժամանակահատվածում կառավարության գործունեության ընդունակությունն է արդյունավետ ադապտացվել փոփոխվող իրականությանը: Վերջինս, ըստ գերմանացի քաղաքագետ Ե. Զիմենմանի, պայմանավորված է ինչպես քաղաքական կառավարման վարչական արդյունավետությամբ, այնպես էլ կառավարող էլիտայի իրականացրած իշխանության մշակույթով և իրենց ընդդիմադիրներ համարողներ միջև գոյություն ունեցող ուժերի հարաբերակցությունից [4, c.3-4]:

Հանրային քաղաքականության վերլուծության գործընթացում կայունությունը հնարավորություն է ընձեռում զուգահեռներ անցկացնել քաղաքական և պետական կառավարման միջև, որոնք անվտանգության ապահովման նկատառումներով ներկայացնում են նրա «կոորդինացնող» և «ինքնակորդինացնող» ներուժը: Ս.Հանթինգթոնը քաղաքական կայունություն աստիճանը կապում է քաղաքական ինստիտուցիոնալացման մակարդակի հետ, համոզմունք հայտնելով, որ ինչքան բարձր է այն այնքան քաղաքական համակարգը կայուն իրականացնում է իր հետևյալ գործառույթները՝ *քաղաքական սոցիալականացում, ինքնապահպանում, արձագանքում, համագործակցություն, բաշխում, կարգավորում, ինովացիա* [5, c.96]:

Այս գործառույթների իրականացումը /կամ չիրականացումը/ կայունություն կամ անկայունություն է ծնում, քանի որ պետության կողմից իրականացվող կենտրոնացված ֆինանսավորումը՝ հատկապես կրթության, կառավարման, զինված ուժերի ոլորտներում պահանջում է *«Հանրային շահը համընդհանուրի բարիքն է»* Ժ.ժ.Ռուսոյի (1712-1778) սկզբունքի արդյունավետ կիրառում:

Ընդհանրացնելով վերոնշյալը՝ կարող ենք եզրակացնել, որ «կայունությունը», որպես հասկացություն, բնութագրում է միայն այն գործընթացները, որոնց հատուկ են պատճառահետևանքային օրինաչափություններ ունեցող փոփոխություններ՝ ինչպես գծային, այնպես էլ ցանցային և կետային հատկություններով: Փաստորեն, կայունությունը համակարգի էական հատկությունների երկարատև պահպանում կամ նրա վրա զգալի բացասական ներգործություն չունենալու հետևանքով, կամ երկար ժամանակաընթացքում նման ներգործությունների նկատմամբ համակարգի ինստիտուցիոնալացման ապահովումն է [6, էջ185]: Երբ քաղաքական համակարգը իր գործունեության ընթացքում ձգտում է այլ համակարգերի հետ մեխանիկական նույնականացման, ապա դուրս գալով իր սեփական ինստիտուցիոնալացված սահմաններից, հակասության մեջ է մտնում սեփական բնույթի հետ՝ դառնալով անկայուն, սպառնալիք է ստեղծում հանրային քաղաքականության համալիր վերլուծության համար: Քաղաքական համակարգի կայունության (անկայունության) մակարդակի գնահատականները կախված են ինչպես համապատասխան տեղեկատվության առկայությունից, այնպես էլ քաղաքական վերլուծություն կատարող փորձագետների աշխարհայացքից և քաղաքական դիրքորոշումից: Այդ իսկ պատճառով հատուկ կարևորություն են ստանում կայունության ցուցանիշների մշակման և հետազոտման առանձնահատուկ ընթացակարգերը, որոնք էլ ենթադրում են քաղաքական կայունության ուսումնասիրման առնվազն երեք բնագավառ՝

1. **համակարգային**, որն իր մեջ ընդգրկում է հասարակության քաղաքական կյանքում տեղի ունցող օրինաչափությունների և առանձնահատկությունների զարգացումների միտումները՝ ներառելով անցյալ-ներկա-ապագա եռաչափության մեջ հասարակության արդիականացման ինչպես պատմական հիշողությունը, այնպես էլ ապագայի նկատմամբ ունեցած տեսլականը,
2. **իմացաբանական (կոզմիսոլ)**, որը հիմնվում է գործող քաղաքական դերակատարների կողմից քաղաքական կառավարման տարբեր մակարդակներում տեղ գտած կամ սպասվող զարգացումների, իրադարձությունների և գործընթացների վերաբերյալ ամբողջական տեղեկատվական-հաղորդակցական գործընթացների իմացության վրա,
3. **գործառութայինը** ելնում է քաղաքական գործընթացի սուբյեկտների ծրագրերից՝ հաշվառելով քաղաքական գործունեության հնարավոր և իրական արդյունքները, ինչպես կայունության և անկայունության հաստատման, այնպես էլ ազգային անվտանգության ապահովման համար:

Քաղաքական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է իշխանության իրականացման մշակույթի առանձնահատկություններով: Յուրաքանչյուր քաղաքական գործունեություն ենթադրում է **և՛ ազդեցություն, և՛ մասնակցություն**, որն էլ հենց համախմբելով

տարբեր սոցիալական խմբերի շահերը՝ քաղաքական կայունությունը հանրային քաղաքականության վերլուծության ռացիոնալ հիմքեր է ապահովում: Այս նկատառումներով էլ Ն. Մաքիավելին (1469-1527) զուգահեռներ է անցկացրել կայունության և անվտանգության միջև՝ նրանց ապահովման համար մեծ դեր հատկացնելով տիրակալին. «...Հասարակության մեջ անկարգության վերացման համար, որը պետության անվտանգության կարևոր նախապայմանն է, անհրաժեշտ է, որ մարդիկ ոչ միայն վախենան կառավարչից, վերջինս չպետք է հրապուրվի իր պատժի հնարավորությունից և մտածի հպատակների բարեկեցության մասին» [7, c.96]: Հանդիսանալով հանրային քաղաքականության համալիր վերլուծության հենք՝ քաղաքական կայունությունը բխում է ժողովրդից և իրագործվում է մեծամասնության կամքին համապատասխան, այսինքն՝ պետական իշխանություն ունեցողն ուղղակի կամ անուղղակի պատասխանատու է ժողովրդի առջև:

Հատուկ անդրադառնալով Ն. Մաքիավելու այս մոտեցմանը՝ ժողովրդավարական համախմբման գործընթացների ուսումնասիրմամբ զբաղվող քաղաքագետներ Ս. Հանթինգթոնը, Ռ. Դալը, Ա. Պշտրոսկին և այլք լեգիտիմության մակարդակը կապում են հասարակության կողմից տվյալ քաղաքական համակարգի աջակցության հետ, քանի որ ինչքան բարձր է հասարակության աջակցությունը քաղաքական «խաղի կանոններին», այնքան բարձր է քաղաքական կայունությունը:

Աջակցությունը լինում է **«իրավիճակային»** և **«դիֆուզային»**<sup>1</sup>: Եթե **իրավիճակային աջակցությունը** պայմանավորվում է հասարակության զնահատմամբ՝ պետական կառավարման մարմինների ընդունած որոշումների, պետական քաղաքական կուրսի, հրապարակային հայտարարությունների, որոշակի քաղաքական գործունեության, քաղաքական առաջնորդների անձնական որակների նկատմամբ, ապա **դիֆուզայինի** պարագայում կարևոր նշանակություն ունի վստահությունը: Վերջինիս բացակայությունը սպառնալքիներ ստեղծելով ազգային անվտանգության ապահովման համար, ծնում է տարաբնույթ չափորոշիչներով պայմանավորված անկայունություն, որը միաժամանակ նաև փոփոխությունները կառավարելու քաղաքական համակարգի անընդունակության կամ ավելի ճիշտ չհարմարվողականության արդյունք է: Անկայունության որպես նոր համակարգաստեղծ երևույթի մասին դեռ իր ժամանակին անդրադարձել է Ա. դը Թոքվիլը (1805-1859), որն ուսումնասիրելով ֆրանսիական Մեծ հեղափոխությունը (1789), նշում է քաղաքական անկայունություն ծնող երկու էական պատճառ՝ **առաջին**՝ երկու առաջատար դասակարգերի՝ ազնվականների ու բուրժուանների միջև ուժերի հարաբերակցության հեղափոխական փոփոխությունների արդյունքում բյուրոկրատիան վերահսկողություն սահմանեց հա-

<sup>1</sup> **Դիֆուզիա** - (գեր. Diffusion լատ., diffusion - «տարբերություն») - միջավայրում նյութի ինքնակամ կենտրոնացում՝ պայմանավորված միջավայրի մասնիկների շարժունակությամբ



սարակության նկատմամբ, **Երկրորդ**՝ հին քաղաքական ինստիտուտների անկումը, այնուհանդերձ, պահպանեց նախկին սոցիալական ուժերի հավասարակշռությունը [8, c.149]: Փաստորեն, ինստիտուցիոնալ կառուցվածքների գլխապետույտ փոփոխություններն ուժեղացնում են քաղաքական անկայունությունը, իսկ նրա կանխման նկատառումներով ծավալված բարեփոխումները հանգեցնում են հեղափոխության: Այս իմաստով անկայունության դասական օրինակ կարող են հանդիսանալ նաև Ժողովրդավարացման «Երրորդ ալիքի» շրջանակներում տեղի ունեցող այն արմատական փոփոխությունները, որոնք ուղեկցվեցին ոչ միայն Պորտուգալիայի, Իսպանիայի, Հունաստանի, Թուրքիայի ավտորիտար վարչակարգերի տապալմամբ, այլև ԽՍՀՄ-ի փլուզմամբ, Սոմալիի պետականության անկմամբ, ցեղասպանության հանգեցրած Ռուանդայի միջէթնիկական բախումներով, տարաբնույթ «գունավոր հեղափոխություններով» և այլն:

Անկայունությունը սերտորեն կապված է **«ագրեսիվ քաղաքական մասնակցություն»** հասկացության հետ, որը Ս. Հանթինգթոնի կարծիքով դրսևորում է այն դեպքում, երբ սպասումների ու պահանջումների աճն ուղեկցվում է նրանց հնարավորությունների իրացման անկման հետ: Արդյունքում, բնակչության սպասումների բարձր մակարդակը և նրանց իրականացման անհնարիությունն ստեղծում է զանգվածային հիասթափություն, անվստահություն քաղաքական լիդերի նկատմամբ, ամբողջական օտարում քաղաքականությունից և այլ հոգեբանական նախադրյալներ անկայունության համար: Նշված երևույթների հաղթահարման նկատառումներով Ս. Հանթինգթոնը մշակել է հետևյալ չափորոշիչները.

- սոցիալական մոբիլիզացիայի ժամանակ սոցիալական երկխոսության գերակշռություն,
- տնտեսական զարգացման բարձր մակարդակ,
- եկամուտների հավասարաչափ բաշխումն ու հարկեր հավաքելու իշխանության հնարավորություններ,
- քաղաքական այլընտրանքների (ինչպես նաև ընդդիմադիր) գոյություն,
- քաղաքացիների ներգրավածություն քաղաքական կյանքին՝ ինստիտուցիոնալացված քաղաքական կուսակցությունների լայն անդամությամբ:

Իսկ անկայունությունը բնութագրվում է հետևյալ չափորոշիչներով.

- սոցիալական մոբիլիզացիայի գերակշռություն սոցիալական օգնության նկատմամբ,
- տնտեսական զարգացման ցածր մակարդակ,
- նյութական բարիքների անհավասարաչափ բաշխում,
- քաղաքական ընտրանու փակ հավաքագրում,
- նեղ և անձնավորված կուսակցությունների գերակշռություն,

- անհանդուրժողականությունն այլախոհների և փոքրամասնությունների նկատմամբ [5, c.90-96]:

Ժողովրդավարացման «երրորդ ալիքի» շրջանակներում քննարկելով քաղաքական կայունության և անկայունության փոխհարաբերությունները, Ս. Հանթինգթոնը եկել է այն եզրակացության, որ ընդհանուր անկայունությունն ուղիղ համեմատական է ազգային անվտանգությանը չնպաստող այնպիսի գործոնների հետ, ինչպիսիք են՝ ուրբանիզացման գերաճը, գերբնակեցումը, սոցիալական վերահսկողության կառուցակարգերի թուլացումը, առևտրական և տնտեսական կախվածության աստիճանն արտաքին աղբյուրներից: Իսկ մյուս կողմից, անկայունությունը հակադարձ համեմատական է վարչակարգի լեգիտիմության մակարդակին, քաղաքական ինստիտուտների զարգացվածությանը, սոցիալ-տնտեսական, քաղաքական հաղորդակցման ցանցերի կատարելագործմանը, ընտրանու համախմբմանը: Անկայունությունը կարող է դրսևորվել երկակի՝ կամ կառավարական ճգնաժամի կամ էլ խառնակախմբերի ակտիվության տեսքով, որոնք, օգտվելով սոցիալական կյանքի տարերայնությունից ու քառսային վիճակից, սերտաճվում են հանցածին ահաբեկչական խմբերի հետ՝ ստեղծելով հակահամակարգային իրավիճակ [9, c.19-20]:

Քաղաքական կայունության և անկայունության համակարգաստեղծ քննարկվող չափորոշիչներից Ա. Պշևորսկին առանձնակի մշանակություն է տալիս հասարակության տնտեսական զարգացման մակարդակին: Խնդիրն այն է, որ ազատականացումը խախտում է մարդկանց բնական սոցիալական կապերը և դրա հետ մեկտեղ թուլանում է նրանց խմբային համերաշխությունը: Այդ պատճառով, քաղաքական արդիականացումը կարող է ստեղծել մարզինալ տնտեսական հարաբերություններ «նոր աղքատների» և «նոր հարուստների» միջև [9, c.21]: Ելակետային այս մոտեցմամբ էլ հնչել և հնչում է այն հարցադրումը, թե արդյո՞ք հնարավոր է արևմտյան ժողովրդական արժեքների կերպափոխումը հայ հասարակությունում և ինչ հեռանկարներ ունի այն Հայաստանում: Նշենք, որ ժողովրդավարական արժեքներն արդեն ապացուցել են տարբեր ազգային և մշակութային պայմաններին հարմարվելու իրենց կենսունակությունը: Մեր կարծիքով, ՀՀ-ում հանրային քաղաքականության վերլուծության գործընթացում անհրաժեշտ է կարևորել *կայունության և ժողովրդավարության միջև եղած կապը*՝ որպես համապարփակ աշխարհում ժողովրդավարական արժեքների հաստատման ռազմավարական հիմնախնդիր:

Այս առումով ներկայացնում ենք քաղաքական կայունության համար անհրաժեշտ հետևյալ չափորոշիչները.

*առաջին՝* կայունությունը հասարակությունում ոչ լեգիտիմ բռնության իրական վտանգի բացակայությունն է կամ էլ պետության հնարավորությունը՝ թույլ տալ հասարակական-քաղաքական կազմակերպություններին մասնակցել կառավարման ճգնաժամային իրավիճակներին: Ըստ անգլիացի քաղաքագետ Դ. Գուպտայի՝ կայունությունը

հանգեցնում է սպասումների ռացիոնալացման և ադապտացման, և որպես այդպիսին այն կարող է «հաստատուն (ստատիկ)» և «հարաճուն (դինամիկ)» բնույթ ունենալ: Եթե առաջինն ենթադրում է ընդդիմության այնպիսի գործողություններ, որոնք բացառում են քաղաքացիական պատերազմը ու ռազմական բախումները, ապա երկրորդը հենվում է հասարակության փոփոխվող պահանջներին արագորեն արձագանքելու ֆորմալ և ոչ ֆորմալ ժողովրդավարական ինստիտուտների հմտությունների վրա [11, p.301,339],

**Երկրորդ`** կայունությունը հարահոս փոփոխվող իրականությանը հարմարվելու կառավարության գործառույթ է` որոշակի քաղաքական ժամանակի մեջ,

**Երրորդ`** կայունությունն իշխանության լեգիտիմության արդյունք է, իսկ իշխանության լեգիտիմության ելույթն է մեջ որոշիչը գերիշխանության արժեքաշահային համակարգի քաղաքական բովանդակությունն է, որը պետական իշխանության իրականացման մակարդակով արտացոլում է տարբեր տիպերի ընտրանիների վերաբերմունքը` ինչպես մեկը մյուսի, այնպես էլ ընտրազանգվածի նկատմամբ,

**չորրորդ`** կայունությունը, որպես քաղաքական համակարգի կառուցվածքային փոփոխությունների բացակայության արդյունք, ունի սանկցիավորված հարկադրանքի իրավունք: Վերլուծելով ժողովրդավարացման «երրորդ ալիքի» շրջանակներում իրականացվող սոցիալական փոփոխությունները՝ Ս. Հանթինգթոնը իրատես ռազմավարական ինստիտուցիոնալ փոփոխությունների առումով կարևորում էր հետևյալ չափորոշիչները.

- ենթահամակարգերի գործառույթային փոփոխությունների համար անհրաժեշտ է բարեփոխել նաև կառավարման շրջակա միջավայրը, միանգամից մի քանի ուղղություններով (սոցիալական, կառավարչական, տնտեսական և այլն),
- կազմակերպության կամ համակարգի որևէ օղակի գործողության փոփոխությունը պահանջում է համապատասխան փոփոխություններ նաև ստորին և վերին մակարդակներում,
- փոփոխությունները պետք է կատարվել համակարգի այն մասում, որը կրում է հասարակության ամենաշատ չբավարարված պահանջումների ծանրաբեռնվածությունը,
- արդյունավետ փոփոխություններ կատարելու համար պետք է օգտագործվեն ինչպես ֆորմալ, այնպես էլ ոչ ֆորմալ շահերի համաձայնեցման կառուցակարգերը [5, c.165-166],

**հինգերորդ`** կայունությունը քաղաքական ուժերի այնպիսի հավասարակշռություն է, որին բնորոշ է հանրային քաղաքականության ոլորտների ընթացակարգային և գործառույթային համալիր փոփոխություններ, որոնց կրողները և` քաղաքացիներն են, և` ընտրանին, և` լիդերները,

**վեցերորդ**՝ կայունությունը, որպես ազգային անվտանգության գրավական, հանրային քաղաքականության ժողովրդավարացման արդյունք է, որն արտահայտում է հետևյալ բնութագրիչները. **քաղաքական-մշակութային** (հավատ և վստահություն ժողովրդավարական վարքագծի կանոնների նկատմամբ ու վարչակարգի արդյունավետություն), **քաղաքական-ինստիտուցիոնալ** (ընտրական համակարգ, քաղաքական ընտրանու բնականոն հերթափոխության կառուցակարգերի առկայություն), **քաղաքական – մասնակցային** (բնակչության մասնակցությունն ընտրություններին): Այդ հմաստով, ժողովրդավարական կայունությունը դիտարկվում է որպես **համակարգաստեղծ և համակարգապահական երևույթ**, եթե կառավարողները ճանաչում են ընդդիմության գոյության իրավունքը, իսկ ընդդիմությունը՝ հրաժարվելով հեղափոխականացվածությունից, ենթարկվում է կառավարողների որոշումներին, միաժամանակ քաղաքացիները հնարավորություն ունեն ազդելու քաղաքականության վրա՝ մասնակցելով որոշումների ձևավորման, ընդունման և իրականացման գործընթացներին: Ակնհայտ է որ, ժողովրդավարությունը կայունության երաշխիք է, քանի որ ինստիտուցիոնալ կառուցվածքները կանխում են կամայական բռնությունները և հաղթահարում քաղաքական զարգացման ճգնաժամերը՝ նույնիսկ ժողովրդավարության համար անբարենպաստ պայմաններում (բնապահպանական աղետներ, կոռուպցիա, թրաֆիքինգ և այլն): Միաժամանակ, քաղաքական կայունության համար անհրաժեշտ է մշակել ինստիտուցիոնալ համակարգի բազմակարծության (պլյուրալիստական) զարգացման ուղիներ՝ շարունակական բարեփոխումների ակնկալիքով: Վերոբերյալն էլ նկատի ունենալով՝ փաստենք, որ ՀՀ-ում հանրային քաղաքականության վերլուծության գործընթացում քաղաքական կայունության ապահովումն ենթադրում է այնպիսի երաշխիքներ, ինչպիսիք են՝ պետական կառավարման համակարգի արդյունավետությունը, իրավունքի գերակայությունը, ժողովրդավարական արժեքների արմատավորումը, դատական իշխանության անաչառությունը ու անկախությունը, զինված ուժերի մարտունակությունը, անվտանգության և իրավապահ մարմինների արդյունավետ գործունեությունը, միջազգային ներգրավվածությունն ապահովող արտաքին քաղաքականությունը, ինչպես նաև սոցիալական արդարության ապահովումը: Միայն այս սկզբունքների իրագործմամբ է հնարավոր իրականացնել հանրային քաղաքականության վերլուծության գործընթացը Հայաստանի Հանրապետությունում՝ ապահովելով ժողովրդավարական քաղաքական կայունություն:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Макарычев А. С.**, Стабильность и нестабильность при демократии: методологические подходы и оценки, Полис, 1998, N1, с 149.
2. Политология: энциклопедический словарь. М., 1993. с. 281.
3. **Турунок С. Г.**, Политический анализ: Курс лекций: Учеб. пособие.-М.: Дело, 2005, с. 330-332.
4. **Zimmerman E.**, Government Stability and Instability. McNair Paperb 42, INNS, August, 1995, p.3-4.
5. **Хантингтон С.**, Политический порядок в меняющихся обществах.-М., Прогресс-Традиция, 2004.
6. **Քրիշթյան Հ.**, Հայաստանի ազգային անվտանգության ռազմա-վարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում. - Եր.: 2008, էջ 185:
7. **Макиавелли Н.**, Государь. - С-П , “Азбука - классика”, 2004, с. 96.
8. **Токвиль А.**, Старый порядок и революция. М.: Дело, 1997, с. 149.
9. **Хантингтон С.**, Третья волна. Демократизация в конце XX века / Пер. с англ.-М., РОССПЭН, 2003, с. 19-20.
10. **Пшеворский А.**, Демократия и рынок. Политическое и экономические реформы в Восточной Европе и Латинской Америке. Пер. с англ./Под ред. Бажанова В. А. – М., РОССПЭН, 2000, с. 21.
11. **Gupta D. K.**, The Economics of Political Violence. The Effect pf Political Instability on Economic Growth. N.Y., 1990; Gupta D. K., Singh H and Sague T. Government Coercion of Dissidents Differnece or Provocation? // Journal of conflict resolution. 1993. V.37 (2), p. 301-339.

**MARIAM MARGARYAN**

*Head of the Chair of Political Administration  
and Political Analysis of Public  
Administration Academy of the RA,  
Doctor of Sciences (Political Sciences)*

**MAMIKON MARGARYAN**

*The President of NGO “The Center of  
Developing Civil Participation” Politician*

**MEASURES OF POLITICAL STABILITY IN  
THE PROCESS OF PUBLIC POLICY ANALYSIS**

In order to respond the challenges of the 21-st century the efficiency of analyzing the process of public policy is studied in the context of political stability. Political stability is observed as a multiform phenomenon, that makes possible to discover the interrelations between linear, netting and dotted management. Attaching importance to systemic, cognitive and functional levels of political stability, parallels are drawn between stability and national security.

Stability is observed as a pledge of national security and a result of democratization of public policy. It has the following definers:

1. Political - cultural ( belief and confidence towards the rules of democratic behavior, and productivity of the regime)
2. Political - institutional ( voting system, the presence of natural relay system of the ruling class)
3. Political - participating ( population’s participation in the elections)

In that meaning democratic stability is observed as a system creating and system preserving phenomenon.

Խմբագիր՝ **ԼԱՎՐԵՆՏԻ ՄԻՐՁՈՅԱՆ**  
Համակարգչային շարվածքը  
և ձևավորումը՝ **ԱՆՆԱ ՂՈՒՇՉՅԱՆԻ**

Չափսը՝ 70x100<sup>1/16</sup>, թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ,  
ծավալը՝ 8.9 մամուլ, տպաքանակը՝ 300:

Տպագրվել է «Տիգրան Մեծ» տպագրատանը  
(հասցեն՝ Երևան, Արշակունյաց 2)